



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

94 14822

Издательство Академии Наук СССР

906

891.99

6-17

1903

2003

891.55

Ե-17

Ար.

Հրատարակութիւն Ս. և Ս.-ի

Հ 9067

Յ Զ Զ Ա  
 Յ Յ Յ Յ  
 Ե Ւ Յ Հ

# ՓԵՐԻԽԱՆՈՒՄ

1001  
4327



(Հ Ե Ք Ի Ա. Թ)

ԳՐԵԿ Ա. Փ.



Թ Ի Փ Լ Ի Ս

Հրազդանի Ա. Ֆութաթելաձեհ. Նհկ. 21

1903

# ՊԱՌՄԱԿԱԳՐԸ

Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Августа, 1903 г.



Հայոց Խառնի կառավարութեան կող շքմիլ զթ բայալ զպ  
պղուած ժմարտէծ պղուած քթ համագուշ շար մաք  
ստիւալ և ջեն առցու զթ զթ նախակ այլ առէ  
առ զպ զպաց բայ դպուարի սէց իւսու

**Լ**ինում է չի լինում հին ժամանակներում  
մի բարի, աստուածասէր ու բարեպաշտ թագաւոր՝  
Զէն անունով։ Այս թագաւորն իւր առատ նուիրա-  
տութիւններով և ողորմածութեամբ հռչակուած  
էր իւր ամբողջ թագաւորութեան մէջ։ Օր չէր լի-  
նի, որ հարիւրաւոր աղքատներ և որբեր չգտնին  
և չկերակրուէին նրա պալատի մէջ։ բայց բարե-  
գար Զէն թագաւորը միայն գրանով չէր բաւակա-  
նանում, այլ մինչև անգամ իւր գանձարանից գրա-  
մական պարգևներ էր ուղարկում այն մարմնով  
տկար անձանց, որոնք իրենց բնակարաններից չէին  
կարսղանում դուրս գալ։ Ալգքան առատ ողորմու-  
թիւնների փոխարէն, Աստուած պարգևատրել էր  
Զէն թագաւորին մեծ հարստութիւն, այնպէս որ  
նա, որքան շատ նուէրներ էր բաժանում աղքատ-  
ներին ու չքաւորներին, այնքան աւելի ու աւելի  
լընդարձակում էր նրա թագաւորութեան սահման-  
ները։

Զէն թագաւորն ունէր տասներկու արու զա-  
ռակ, որոնցից ամենափոքրը՝ թէ իւր հանճարով, թէ  
քնաւորութեամբ, թէ համեստութեամբ և թէ իւր  
խորիմաստ հեռատեսութեամբ բոլորովին զանազան-  
ում էր իւր մեծ եղբարներից, որը մեծ լոյս էր  
ներշնչում իւր ծերունի հօրը, որովհետեւ նա դրա-  
մէջ միայն նկատում էր տապագայ թագաւորի ոգի,

որը կարող կը լինէր իւր մահից յետոյ թագաւորաւ կան գահ բարձրանալ: Այդ բոլորը՝ ծերունի հայրը շատ լաւ նկատում էր իւր որդու մէջ և ուրախանում էր: Զէն թագաւորի այդ կրտսեր որդու անունն էր Նահզադէ: Նահզադէի միւս եղբալները շատ կարճ ժամանակ հետեւցին իրենց հօր օրինակին, ապա բոլորովին փոխուելով, սկսեցին պալատից աքսորել այն աղքատներին և որբերին, որոնք պալատի մէջ կերակրում էին Զէն թագաւորի հրամանով: Դրանց խեղճ հարը՝ թէև շարունակ խրատում և արգելում էր իւր որդոց այդ տեսակ վատ վարմունքը, բայց նոքա բոլորովին չէին գաղարում իրենց գործած չարութիւններից: Նահզադէն էլ էր արգելում դրանց և պախարակում նրանց վատութիւնները, բայց նոքա բոլորովին չէին ուղղում լսել ոչ ծնողների և ոչ Նահզադէի խրատները և ինքնակամ տնում էին այն բոլորն, ինչ որ հակառակ էր դոցա: Բացի այն, որ նոքա աղքատներին ու որբերին պալատից աքսորում էին, խոշոր տուգանքներ էլ էին նշանակում այն խեղճ, չունեոր մարդկանց վրայ. այդ խաղաղ ժողովուրդն, որ մինչև Զէն թագաւորի որդոց մեծանալը, գոհունակ սրտով օրհնում էր Զէնի թագաւորութիւնը, ալժմ անէծքների ու հայհոլանքների կոյտեր էր թափում Զէնի որդոց վրայ և միշտ առջաչում էր Աստուծուն, որ նա պատժէր այդ անխիղէ թագաժառանքներին և լաւիտեան կործանէր նոցա: Աստուած լսեց ժողովրդի աղաշանքները և պատժեց նրանց իրենց վատութիւնների համար հետեւալ հրաշքով:

Անցաւ մի քանի տարի: Յաճը ըստ Մէկ օր ձալն ընկաւ ժողովրդի մէջ թէ՝ թագուհին մի հրէշ աղջիկ է ծնել, որը ոչ թէ նմանութիւն չունէր հողեղէն մահկանացուի, ալլ մի ալնպիսի արարած էր, սրին ոչ ինքը թագաւորը, ոչ թագուհին և ոչ ամբողջ պալատականները՝ իրենց երկար տարիների ընթացքում երբէք չէին տեսել: Այդ նորածին հրէշը՝ ունէր երկու ոտք և երեք ձեռք: Նա անասունի նմանութիւն ունէր տւելի, քան մարդու, իսկ գլուխը նման էր համակ առած պատաւ կնօջ զիին: Այս հրէշի ծնութիլ՝ մեծ տանջանք պատճառեց հաստկաւոր 40—50-ամեալ թագուհուն՝ ծննդաբերութեան ժամանակ: Զէն թագաւորը հասկացաւ՝ որ այդ հրէշը ծնուել է իրեն որպէս պատիժ՝ իւր վատ ու անարդ որդոց պատճառաւ: Հրէշի ծնուելուն պէս, ծերունի Զէն թագաւորը նախ ցանկացաւ իսկոյն նրան սպանել, բայց յետոյ մտազրասթիւնը փոխեց, համարելով այդ Աստուծու տնօրէնութեան հակառակ: Նա տսաց բոլոր ներկայ եղողներին հետեւալը:

— Թո՞ղ ապրի այս հրէշ աղջիկս, որպէս պատիժ իմ անգութ ու անխիղճ տասնեւմէկ օրդոց՝ իրենց վատութիւնների և անգթութիւնների համար: Միթէ Աստուածանից այս պատիժը պէտք է ստանալի, այն էլ ալսպիսի խորին ծերութեանս օրերում. միթէ Աստուած այս վարձատրութիւնը տուեց ինձ, իմ բարերարութեանս փոխարէն. այս, այս հրէշը երբէք չէր տրուի ինձ Աստուածանից, եթէ

իմ որդոցս գործած անգթութիւնները չլինէ ինչ  
թող, ուրեմն կենդանի մնայ այս հրէշ աղջիկը,  
թող մեծանայ և կատարուի երկնքի տնօրէնու-  
թիւնը:

Խեղճ թագաւոր. ինչ կարող էր երեակալելք  
որ Աստուծուց տուած ալդ խեղճ աղջիկը՝ պէտք  
է լինէր իւր որդոց և ամբողջ թագաւորութեան վերջ  
դնողը: Երբ Զէն թագաւորի տասնեմէկ որդիքն ի-  
մացան, որ իրենց հրէշ քոյլ է ծնուել, շատ վրբ-  
գովսւեցին և մտադրուեցին իսկոյն սպանել տալ-  
քայց հայրը թոյլ չտուեց սրանց ալդ ոճիքն ա-  
նելու և յանձնեց մի կարգ մարդկանց լուրջ հըս-  
կողութեան, որ առանձին սենեակում պահեն և  
մեծացնեն մարդկանց տեսսւթիւնից հեռու: Թա-  
գաւորի պատուէրը՝ հրամայուածի պէս կատարուեց-  
չըշը մեծանում էր, հետզհետէ աւելի ու աւելի  
ահուելի էր դառնում տեսնողի համար և մեծ սար-  
սափի էր բերում նայողին:

Անցնում է դարձեալ մի քանի տարի:

Մէկ օր Զէն թագաւորի մօտ գալիս են պա-  
լատի տիսուապետներից մի քանիսը և յատնում են  
թագաւորին մի չարագուշակ լուր, թէ նազիր ու  
վէզիրի ձիաների ոտքերը և պոչերը՝ իրենցից ըո-  
լորովին անլայտ պատճառաւ՝ կերպած են և ձիա-  
ները անշունչ կերպով ընկած են ախոռներում:  
Թագաւորը չէր հաւատում այս բանին, բայց ծե-  
րունին ինքը անձամբ ստուգեց և շատ զարմացաւ:  
Նա ընկաւ մտածութեան մէջ թէ՝ «արդեօք այս  
ինչից կարող էր պատահել, ինչ մտասկալ թշ-

է արել, որ ոչ ոք չէ նկատել ծառալողներից»: Այս  
եղելութիւնից մի քանի օր անց, դարձեալ գալիս  
են պալատ ախոռապետներն և այս անգամ աւելի  
ծանր լուր են հաղորդում, թէ՝ դարձեալ անյատ  
պատճառաւ, բոլոր պալատականների ձիաները սատ-  
կել են: Ոյս լուրը կայծակի արագութեամբ տա-  
րածուեցաւ ամբողջ տէրութեան մէջ: Զէն թագա-  
ւորի ժողովրդից շատերն, որոնք մեծ լարկերից  
և տուգանքներից նեղուած էին, շարունակ փառք  
էին տալիս Աստուծուն, որ այդպիսի մեծ վնաս-  
ներ է կրում Զէնի թագաւորութիւնը և ջերմե-  
ռանդ սրտով աւելի ու աւելի աղաջում էին Աս-  
տուծուն, որ դարձեալ ուրիշ վտանգներ տալ ամ-  
բողջ պալատականներին էլ՝ իրենց ժողովրդեան  
այդքան չարչարելու համար: Այս եկող պատուհա-  
սը, պալատականներից թէև շատերը մատնանիշ  
էին անում հրէշ աղջկալ վրայ, բայց կտրական  
չէին կարողանում յայտնել թագաւորին, որովհե-  
տեւ ստուգ գիտէին որ նախ հրէշին առանձին սե-  
նեակումն էին պահում մի կարգ մարդկանց լուրջ  
հսկողութեան տակ և բացի սրանից բէշի սենեակի  
գուռը որբէք չէին բաց անում և ուրեմն էլ ինչ  
պէս կարող էին ալդ բանի մէջ մեղադրել Զէն  
թագաւորի հրէշ աղջկան: Բայց թագաւորի փոք-  
րիկ որդի Շահզադէն ալզպէս չէր մտածում: Աս-  
տուծած նրան երագի մէջ տեսիլքի նմանողութեամբ  
յայտնուելով՝ ասել էր — «Շահզադէ, վերկաց և հեռա-  
ցիր քո հայրական երկրից և քեզ հետ գաղթեցըու  
այն մարդկանց, որոնք հալածաւած են եղալիքնե-

բիցդ։ Այս տեսիլքից լետու, նա բացարձակապէս յայտնեց բոլորին, թէ ալդ գժբաղզութիւնների պատճառն իւր հրէշ բոլընէ և ինքը պէտք է ան- պատճառ հեռանար։ Բայց ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց Շահզադէի խօսքերին, ասելավ որ այդ բուրը միայն զրպարանութիւն է և ուրիշ ոչինչ։ Զէն թագաւորի որդիկերանցից ամեն մէկը՝ իւր համար ուներ լաւ և ընտիր ձի, որոնք միասին համարեա քառորդ թագաւորութեան արժէքի էին համնում։ Զէն թագաւորի որդիքը խիստ շատ էին սիրում իրենց ձիաներին և այդ սէրն էր պատճառըն, որ չբաւականալով ախոռապետների սպասա- ւորելուն և վերահսկողութեան, դարձեալ ունէին առանձին մարդիկ ևս վարձած, որոնք միմիայն և մի ձիաներին սպասաւորելու համար էին վար- ձուած և հերթով՝ ամեն գիշեր գնում էին ախո- ռըն ու մինչև կէս գիշերը պահազան հրեշտակնե- րի նման հսկում էին ձիաներին, որպէս զի միորեէ գժբաղզութիւն չը պատահի։ Երբ Զէն թագաւորի որդիքն իմացան ախոռապետների պատճաճները՝ այսինքն նազիր-վեզիրի ու պալատականների ձիա- ների հետ պատահած գժբաղզութիւնը, շատ տըլի- րեցին։ Հաւաքուեցան միասին պալատի մէջ՝ ծե- րունի հօր ներկայութեամբ և կալացըն այս տե- սակ մէկ վճիռ։

Զէն թագաւորի որդիկերանցից ամենամեծն առաց։

Եղբայրներ, որովհետեւ մեզ լայտնի եղաւ թէ ինչ տեսակ սարսափելի գժբաղզութիւն պա-

տահեց մեր նազիր-վեզիրի ու պալատականների ձիաներին, ուստի մեր ձիաները թշնամուց պահ- պանելու համար, պարտաւորութենք ամբողջ գիշեր- ներն՝ անքուն, նետ ու տղեղը ձեռներիս, հսկել և սպասաւորել, մինչև որ չար և գարշանամօթ թշնամուն բռնենք ու իւր այսքան գործած չա- րութիւնների համար պատժենք։

Մեծ եղբօր կայացրած վճիռը, միւս եղբայր- ները հաւանեցին և սկսեցին հերթով սպասաւո- րել։ Առաջին գիշերը՝ մեծ եղբայրը ձեռքն առաւ նետ ու աղեղն ու գնաց ախոռը։ Մինչև կէս գիշեր սպասեց, տեսաւ որ ոչ ոք չերևաց, գիշերուալ կի- սին խոր քունը մտաւ, Լուսաբացին զարթեց և ինչ տեսաւ, իւր ձիռ ականջները կերուած, իսկ ձին կիսակենդան ընկած գետնի վրայ, շատ չարացաւ ինքն իրեն, բայց էլ ինչ կարող էր անել, գնաց պալատն և եղելութիւնը մանրամասնօրէն պատժեց եղբայրներին։

Միւս գիշերը նրանից փոքր եղբայրն առաւ նետ ու աղեղն ու գնաց ախոռը թշնամուն բռնե- լու ու սպասնելու, բայց, կէս գիշերին, մեծ եղբօր նման, սրա քունն էլ տարաւ և ոչինչ չկարողա- ցաւ անել։ Առաւօտեան զարթներուն պէտ տեսաւ որ իւր ձիռ ականջներն էլ կերուած է. սա էլ գնաց պալատն և բոլորը պատժեց և ընթերցնեց, ինչ գլուխդ ցաւացնեմ, այսպէս, կարգով սկսեցին բոլոր եղ- բայրները հերթով գիշերել և ոչ մէկը սրանցից չկարողացաւ չար թշնամուն բռնել։

Վերջն ամենափոքր եղբայր Շահզադէն՝ առաւ

ձեռքը նետ ու աղեղն ու գնաց ախոռը, թագնուեցիւր ձիու քամակի մօտ եղած փալտածածկ փոքրիկ սենեակի մէջ և այնտեղից սկսեց սրտատրով, ուշի ուշով նայել իւր ձիուն. ախոռի մէջ վառւում էր փոքրիկ զամպարն և ահա դրա աղօտ լուսով՝ հազիւհազի կարսղանում էր տեսնել իւր սիրելի ձիուն և անհամբերութեամբ սպասում էր թշնամուն. Շահզադէի աշքերը շատ այս ու այն կողմը նայելուց յօգնել էր և կէս գիշերին քիչ էր մնում քունը տանէր, բայց իրեն մի կերպ կարսղացաւ պահել և չքնեց; Կէս գիշերից բաւականին անց, Շահզադէն դանպարի աղօտ լոյսի միջով՝ տեսաւ էնչ, մէկ փոքրիկ զանգուած սողալով մօտեցաւ իւր ձիուն, յանկարծ մեծ արագութեամբ մագլցելով՝ ցատկեց ձիու մէջքն ու սկսեց կըծոտել ձիու ականջները; Նո հօշուեց ամբողջ մարմինն և Շահզադէի ամենասիրելի և ամենապատուական ձիուն գետին տապալեց, իսկ ինքը, հէնց էն էր՝ ուզում էր յետ փախչել, որ ահա, այդ նոյն իսկ ըստէին, զարան մտած Շահզադէն, որ բարկութիւնից քիչ էր մնում յանկալծակի լարձակուէր ու ջախջախէր ալդ լակիշ կենդանակեր հրէշին, իսկոյն ձեռքն առաւ նետ ու աղեղն ու ուղիղ լսրելով նրան՝ յանկալծ արձակեց; Շահզադէն ուրախ-ուրախ առաջ վաղեց, կարծելով որ թշնամուն սպանել է ու կարող է ցոյց տալ բոլորին, բայց իզդուր աշխատանք. ձիշտ է. նետն իւր սրտի ուզածին սկէս՝ գիպցը էր թշնամուն, բայց չէր կարողացել սպանել; Թէ և մեծ ուժգնութեամբ նետը խփել էր թշնամուն,

բայց թշնամին՝ թնդանօթից արձակուած ձալնի նմանողութեամբ մի կանացի վայնասուն ճիչ արձակելով՝ իսկոյն անլալտացել էր մժութեան մէջ; Շահզադէն շատ լաց եղաւ իւր ձիու կորստեան համար, բայց էլ ի՞նչ կարող էր օգնել; Վերկացաւ տիսուր-տրաում ու լուսաբացին քայլերն ուղղեց գէպի պալատ, երբ նես մտաւ արքունիք, սկսեց իւր եղբայրնելին ու հօրը պատմել, ասելով. — Սիրելի հայր և զուք եղբայրներ, ես, որքան աշխատեցի աղօտ լոյսի միջով տեսնել մեր ձիաների սոսկ թշնամուն, նմանեցրի աւելի մեր քոյլ հրէշին, քան թէ մի ուրիշ արարածի; Ես այնքան ոչ մի բանի վրայ նմանութիւն չարի, որքան գլխսի վրայ. իսկ և իսկ մեր քրոջ գլխի նման էր՝ պառաւի կերպարանքով. իսկ ստքնըն ու ձեռքելն անասունի նմանողութեամբ, ինչպէս և մեր փոքրիկ քոյլն ունի. ձալնն էլ կանացի ձալնի նման էր և ես, հաւատացած եմ, որ ալդքան չաշութիւնների պատճառն իսկ և իսկ նա է եղել. Հիմայ, ես իմ կողմից խնդրում եմ, որ եթէ այդ հրէշ քրոջս կը սպանէք, ես կը մնամ այստեղ ձեզ մօտ, իսկ եթէ չէ, ես վաղուանից կհեռանամ ձեզանից և կերթամ հեռու աշխարհ օտարութեան մէջ; Ես երազումս վատ տեսիլք եմ տեսել մեր թագաւորութեան կործանման վերաբերմամբ և վախութեմ որ իմ ներկայութեամբ, մի գուցէ այդ տեսիլքս մեր հրէշ քրոջ շնորհիւ իրականանալ, աւելի լաւէ, ես կհեռանամ և ապագայ գալիք դժբաղգուր թիւնը աշքովս չեմ տեսնի:

Նահզագեի ալս տեսակ խօսքերը շատ ուղար-  
մացը բոլորին, նամանաւանդ ծերունի Զէն թա-  
գաւորին, որը դիմելով բոլորին առաջ.

—Այն բոլորն՝ ինչ որ իմ փոքրիկ որդի Նահ-  
զագեն պատմեց մեզ, իմ կարծիքով՝ անհաւատայի  
է, որովհետեւ Հրէշ աղջիկս դեռ փոքր է և օրո-  
քոցումն է պառկած և բացի դրանից ամբողջ օրերը  
սենեակի գաներն էլ փակած է. բայց եթէ իսկ և  
իսկ նա էլ լինի ալս չարիքների պատճառն, ես  
նրան երբէք չեմ սպանել տալ, այլ երբ կմեծանայ,  
շղթալիտապ տնել կտամ և բանտը կը նստացնեմ,  
որպէս զի մեզ ոչ մի չարիք չըերի: Զեմ հասկա-  
նում ինչ անեմ. սպանեմ—ոնց սպանեմ. չէ որ  
Աստուծոյ տուածը դա է. սկսեմ Աստուծոյ դէմ  
մեղանչե՞լ. մարդասպանութիւն անեմ. չէ, չէ, չեմ  
սպանել տալ, եթէ իւր սովորական մարդկալին մա-  
հվը կմահանալ, լաւ, իսկ եթէ չէ, ես նորից կը կ-  
նում եմ, չեմ կարող սպանել տալ:

Զէն թագաւորի Հրէշ աղջկայ անասնակերու-  
թեան մասին սպալտականներից այնքան ոչ ոք  
չինչ չէր կասկածում Հրէշի վերաբերմամբ, որքան  
Նահզագեն և մի լարմար առիթի էր սպասում, որ  
մի կերպ լացողեցնի քրոջը տեսնել, բայց չէր լա-  
ջողւում: Մէկ օր մի կերպ գողանում է այն բա-  
նալին, որով բանում էին Հրէշ քրոջ սենեակի գուռն  
և կէս գիշերին՝ երբ բոլորեքեանք խոր քուն էին  
մտած, կամաց բանում է նրա սենեակի գուռն ու  
մտնելով մէջը, վառում է այնտեղ գտնուող դամպարն  
ու սկսում է մեծ հետաքրութեամբ նալել քրոջ

վրայ: Հրէշն օրօրոցումն էր պառկած և քնած էր.  
վրան շատ նայելուց իւտոյ, լանկարծ տեսաւ՝ որ  
Հրէշի ձեռքերից մէկի վրայ չորացած արեան նշան-  
ներ են երեսում և ձեռքն էլ ծակուած է մէջ տե-  
ղից. իսկոյն մտքի լնկաւ, որ այդ բանն իւր նետից  
է պատահել և ուրեմն բոլոր ձիաների կորստեան  
պատճառն այդ անամօթ արարածն է եղել: Սլո-  
պէին նա ուզեց իւր հետ վերցրած գաշունը խրել  
իւր հրէշ քրոջ սիրալ, բայց ծերունի հօրը՝ վե-  
րաւորանք չպատճառելու համար, թողեց տեղն ու  
տեղը հանգիստ և առանց մի որևէ վնաս տալու  
գուրս եկաւ սենեակից և նորից ամուր փակելով  
Հրէշի սենեակի գաները, տարաւ բանտին իւր տեղը  
դրեց, իսկ ինքն էլ շտապով գնաց իւր ննջարանը: Միւս  
առաւօտ՝ ծէգ բացուելուն պէս, Նահզագեն գուրս  
եկաւ պալատից ու սկսեց շրջել ամբողջ իրենց մայ-  
րաքաղաքը. մտաւ մի քանի այն որբերի ու աղ-  
քատների տները, որոնք որ շարունակաբար չար-  
չարանքներն ու հալածանքներ էին կրում իւր եղ-  
բայրներից ու յայտնեց նրանց, որ շուտով հեռա-  
նան այդտեղից օտար երկիր, որովհետեւ Աստուծած  
այդպէս է հրամաւել. իսկ եթէ չեն հեռանայ և  
Աստուծոյ կամքը չեն կատարի ու հակառակ Աս-  
տուծոյ կարգադրութեան՝ կմնան Զէնի թագաւո-  
րութեան մէջ, այն ժամանակ՝ կերակուր կը դառնան-  
Զէնի Հրէշ աղջկան: Բացի սրանից, Նահզագեն յայտ-  
նեց և իւր հեռանալու մասին և կրկին շուտով վեբա-  
գարձաւ պալատը, սկսեց ճանապարհի պատճառտու-  
թիւններ տեսնել: իրեն հասանելիք ունեցած շու-

Նեցածը գարսոտեց պարկերի մէջ, իրենց հովիւ-  
ներից հովուական մաղախն ուզեց, լցըեց ուտելե-  
ղէններով, շալակեց ուսի վրայ, և ահա այսպէս  
պատրաստի գնաց պալատ՝ ծնողներին վերջին հրա-  
ժեշտ տալու. Երբ ծերունի Զէն թագաւորը տե-  
սաւ իւր դեռահաս պատանի որդի Շահզադէին՝ ճա-  
նապարհի պարագաներով, սկսեց լոլ և դառնա-  
լով որդուն արտասուախառն աչքերով ասաց.

— Սիրելի որդի, ինչու ես օտար երկիր գնում,  
ինչն է քեզ ստիպում այդ քալին անել. քո եղբար-  
ներիդ մէջ՝ միայն դու էիր իմ ապագայ գովելի  
թագաժառանգն և դու էլ մտադրուել ես օտար  
երկիրը գնալ. արի, լսիր ինձ, ծերունուս, քո խըդ-  
ճալի հօրդ, մի անիր այդ տեսակ գործ. մահս մօտ  
է, գուցէ շուտով գերեզման մտնեմ, իսկ գահը թա-  
փուր կմնալ. քեզ եմ ուզում տալ իմ միահեծան թա-  
գալորութիւնս, իմ սիրելի Շահզադէ. եկ, լսիր,  
մի գնալ օտարութիւն. խնդրում եմ, աղաջում եմ.  
խնդրի ինձ սիրելի զաւակս. առանց քեզ կորած  
ենք բոլորս. առանց քեզ թշնամին կը հալածէ մեզ.  
ուրեմն լսիր, զաւտկս, մի գնար Եթէ քո կաս-  
կածդ քո հրէշ քոլրն է, մի վախենար նրանից. ես  
նրան շղթալակապ անել կը տամ և բանտը կնըս-  
տացնեմ, որպէս զի քեզ ոչ մի վտանգ չսպառնալ:

Իզնւը էր Զէն թագաւորը լացով ու արտա-  
սուքով աղաջում իւր սիրելի որդի Շահզադէին. նա  
վերջնականապէս վճռել էր օտարութիւն գնալ և  
դրա պատճառը միմիալնեթ իւր հրէշ քոլրն էր  
և ուրիշ ոչ ոք. ծերունի Զէն թագաւորից յետով,

մալր—թագուհին ու պալատականները խնդրեցին  
ամշլով.

— Լսիր, որդի, մի գնար օտարութիւն. յսիր  
քո ծերունի հօր աղերսանքներն ու մեր բոլորիս  
աղաջանքներն ու ետ կանգնիր օտարութիւն ճա-  
նապարհ ընկնելու մտադրութիւնից:

Բայց այս տեսակ խօսքերով՝ չկարողացան հա-  
մոզել Շահզադէին ու յետ կանգնեցնել մտադրու-  
թիւնից. Նա թէւ մի կողմից ուզում էր չգնալ և  
ուզում էր իւր սիրելիների խնդրիքը կատարած լի-  
նէր, բայց միւս կողմից միտն էր գալիս երազի մէջ  
տեսած տեսիլքն և Աստուծոյ այն խօսքերը, թէ—  
«Պէտք է անպատճառ հեռանաս, ով դու Շահզա-  
դէ և քեզ հետ՝ անպալման պէտք է գաղթեցնես  
քո եղբայրներից հալածեալ ժողովրդեան»: — Շահ-  
զադէն լուռ ու քարացած կանգնած էր տեղն ու  
տեղն և չէր իմանում, ինչ անէր. ընկաւ խոր մտած-  
մունքի մէջ: Նա վախում էր ապագայի սպանու-  
թիւններից, որը պէտք է իւր աչքովը տեսնէր և ի-  
րեն էլ վտանգ պէտք է սպանար. ուստի կրկին  
վճռեց անպատճառ հեռանալ, իրեն համարելով  
երջանիկ օտարութեան մէջ մեռնել, քան ապա-  
գայի չարիքները տեսնել. իսկ երբ լիշեց երազի մէջ  
յայտնած իւրեանց թարգաւորութեան սոսկալի վախ-  
ճանը հրէշի ձեռքովն, ամբողջ մարմնով սարսա-  
փեց և բոլորի առաջ՝ այնպէս դողաց, որպէս աշ-  
նանալին ծառից թափուող տերեւ: Երկար մտածե-  
լուց յետով, Շահզադէն ասաց բոլորին.

— Սիրելի իմ ծերունի հալր և դու մալր ու

բոլոր պալատականներ, ևս չեմ կարող այստեղ  
մնալ, վճռել եմ անպատճառ գնալ. մի լաց լինեք,  
իգուը է ձեր լացն ու կոծը, ինձ չեք կարող իմ  
մտադրութիւնից յետ դարձնել, վճռել եմ գնալ և  
անպայման գնալ:

Այս խօսքերից յետով՝ Շահզադէն վերջնական  
հրաժեշտ տուեց գրկախառնուելով՝ թէ ծերունի  
հօր, թէ մայր թագուհու և թէ եղբայրների հետ,  
ու հեռացաւ իրենց շքեղ թագաւորական պալա-  
տից: Նա դուրս եկաւ իրենց թագաւորութեան սահ-  
մանից և դիմեց օտար երկիր:

Զէն թագաւորն իւր տասնեմէկ որդկերանցով  
և իւր հրէշ աղջկանով թողնենք այստեղ և գանք  
Շահզադէի ճանապարհորդութեան:



\* \* \* Հ. Խ. Հ. ՀԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
\* \* \* Ա. Տ. Հ. Պ Պ Ո Բ Լ Ա Վ Ա Ր Ա Ն  
7/31. 1922

Շահզադէն ճանապարհ ընկալ:

Նատ գնաց թէ քիչ գնաց Աստուած գիտէ, վեր-  
ջապէս հասաւ մի մարգագետնի, որտեղ արածում էին  
տասնեակ հազարաւոր ոչխարներ՝ առանց հովիւների  
և պահապան շների: Բոլոր ոչխարներն և մինչև ան-  
գամմօտակայ սարերն ու մարգագետնը կարմրագոյն  
փայլ ունեին: Ահա այս երեսով շատ զարմացրեց  
Շահզադէին և մտածում էր ինքն իրեն. — Ամի, Աս-  
տուած իմ, այս բնչ հրաշք է. ինչու են աչքիս  
տեսածներն այսպէս կարմիր և կամ այս ոչխար-  
ներն ումն են, որ առանց հովիւների և պահ-  
ապան շների են արածում այս մարգագետնում:

Այս բանի վրայ շատ երկար մտածեց և նստելով  
ոչխարների մօտ, սկսեց այս ու այն կողմը նալել՝  
թէ մի գուցէ մարդկիկ երես ան մի որեւէ տեղ և  
նրանցից կարողանալ հարցնել իրեն շատ հետաքրք-  
րեցնող հարցի մասին, բայց ոչ ոք չերեաց: Շահ-  
զադէն մօտեցաւ ոչխարներից մէկին, բոնեց, մոր-  
թեց, կաշին քերթեց, միսը մի կերպ խորովեց փայ-  
տեալ տաշէղների վրայ, հանեց հովուական մազա-  
խից ճանապարհի ուտելեղէնները ու սկսեց ճաշել:  
Յետով ոչխարի մորթին մաքրելով, փաթաթեց գըլ-  
խին և երեկոյեան հովասուն եղանակին՝ հենց որ  
ուզում էր հեռանալ ու շարունակել ճանապարհը,  
մէկ էլ ինչ տեսաւ. ոչխարների սուրուն բառա-  
չելով սկսեց վազել և դիմել դէպի մարգագետնի  
դիմաց գտնուող սարի գագաթը: Այս բանը շատ

զարմացրեց Շահզադէին և մտածում էր, թէ ի՞նչիցն է այս, որ առանց որևէ մէկի հրամանի՝ սուսու ու փուս սկսեցին գըոհ տալով գնալ դէպ սարի գագաթը: «Զինի՞ թէ այս բոլորը կախարդութիւնն է: Մի գուցէ Աստուած՝ իմ ծնողներիս հնազանդ չըլինելուս պատճառաւ, այս կախարդական միջոցը լարուցեց ինձ համար, որ այլ ևս չշարունակեմ ճանապարհս և լետ դառնում դարձեալ ծնողներիս մօտ: Բայց տեսէլքս. չէ որ երազիս մէջ ասացին՝ անպատճառ հեռանալ և ես էլ հեռացայ: Զէ, մի վախենար, ով թուլասիրտ անփորձ երիտասարդ Շահզադէ, գնա առաջ անվախ, ինչպէս Աստուած հրամակել է»:—Շահզադէն սկըում վախկոտ երեխալի նման երկմտութեան և տատանման մէջ էր և չէր իմանում՝ ճանապարհը շարունակէր թէ լետ դառնար, բայց յանկարծ սիրտ առաւ և առիւծի նման ինքն իրեն մունչալով ասաց:—«Ո՛չ ո՛չ, երբէք նման վախենում ոչնչից, վճռել եմ և պէտք է վերջ չեմ վախենում ոչնչից, վճռել եմ և պէտք է վերջ նականապէս գնամ ուր որ լինի. եթէ մահով էլ սպառնան, դարձեալ չեմ վախենալ, որովհետեւ Աստուած օգնական է ինձ: Նա, որ հրամալեց ինձ հեռանալ շքեղ տալուստից և մտնել օտարութեան մէջ, նա ևս կլինի ինձ օգնական և պահապան ամեն նեղութիւնների մէջ և կազատէ ահապան ամեն նեղութիւնների մէջ: Մինչ մեր Շահզադէն մտքի մեն չարիքներից»:— Մինչ մեր Շահզադէն մտքի ալիքների մէջ խորասուզուած ու ինքն իրեն հետ ալիքների մէջ խորասուզուած ու ինքն իրեն հետիսակցելով համրաքայլ առաջ էր գնում ոչխարների կետեից, արդէն գիշերուալ մութը պատեց: Ուշը ետեից, արդէն գիշերուալ մութը պատեց: Ուշը ետեից, արդէն գիշերուալ մութը պատեց:

լիջան սարի միւս կողմն եղած տափարակ դաշտն և երկար վազգելուց յետոյ, մօտեցան մի բարձրաշտարակի երկաթաձև դրանը: Շահզադէն նոյնպէս մօտեցաւ դրանը: Մի փոքր սպասելուց յետոյ, աշտարակի դուռը բացուեց և ահա յալտնուեց դրան շէմքի մէջ՝ մի մէջ միագլխանի վիթխարի կարմրագոյն դե, բայց, երկու աչքով կոյր: Ոչխարները սկսեցին ներս խուժել դէպի բակն, իսկ դեռ ձեւքերով համարում էր աշտարակի մէջ մտնող ոչխարները: Սկզբում Շահզադէն մի փոքր վախեցաւ, բայց իսկոյն Աստուծոյ անունը լիշելով՝ սիրտ առաւ և ասաց ինքն-իրեն:— «Որի, ես էլ ներս գնամ ոչխարների հետ միասին, ինչ վնաս. չէ որ դեռ կոյր է և ինձ երբէք չէ կարող տեսնել: Ես ներս մտնելով՝ կը թագնուեմ մի առանձին մութ տեղում մինչև լուսանալը, իսկ վաղը լուսաթացին՝ Աստուած ողորմած է, դարձեալ ոչխարների գուրս գալուն պէս՝ հետները կը գուրս գամ և կերթամ ուրիշ տեղ, իսկ գուրսը մնալով՝ այս անապատի մէջ, մի գուցէ գիշատիչ կենդանիների կերակուր գառնամ, աւելի լաւ է, գնամ ներսը ոչխարների հետ միասին»:— Ոյս խօսքերը վերջացնելով, իսկոյն ոչխարի մորթին՝ որը գլխին ուներ փաթաթած, մի կերպ յարմարեցնելով՝ մարմինը ծածկեց և փորսող տալով ներս մտաւ աշտարակն ոչխարների հետ ու թագնուեց մի հեռու, գեին անմերձենալի մթութեան մէջ: Դւն ոչինչ չկարողացաւ իմանալ Շահզադէի այս գաղտնագողի ներս մտնելու վրայ, որովհետեւ դեի հաշուի հա-

մեմատ ճիշտ էր ոչխարների թիւը, համարելով  
Շահզագէին էլ ոչխարների թւում:  
Դւեր փակեց դուռը և մտաւ իւր սենեակները:  
Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ՝ դեւ դուրս  
եկաւ փոքրիկ ճրագ ձեռին և մօտեցաւ ոչխարնե-  
րին իւր առաջուայ սովորութեան համեմատ, ճրա-  
գը մի տեղ դրեց, բռնեց չորս հատ ոչխար, մոր-  
թեց, կաշին քերթեց, ամեն մէկ ոչխար չորս հա-  
ւասար բաժին արեց, դուրս բերեց սենեակից մէ  
մեծ կաթսայ, խարոյի վառեց, դրեց կաթսան խա-  
րոյի վրայ և կտրատած ոչխարի մեծ.մեծ կտոր  
մսերը՝ ածեց կաթսալի մէջ, իսկ ինքն էլ կանգնեց  
եռուն կաթսալի մօտ՝ մինչև մսերի եփուիլը. ե-  
փուելուց յետոյ՝ հանեց կաթսալի միջից եփած  
մսերն ու կտրգով շարեց գետնի վրայ ու ինքն էլ  
տեղնուտեղը ծալտպատիկ նստեց ընթրիք անելու:  
Շահզագէն այս բոլորը տեսաւ աղօտ լուսի միջով  
իւր թագստեան տեղից և իսկոյն ախորժակի թե-  
լերը բացուեցաւ. երկար ճանապարհորդութիւննից  
յօդնած ու քաղծած և եփած կերակուրի համը  
չտեսած, Շահզագէին այդ մսերը շատ գրգրեցին  
և ուզեց մի կերպ գողանալ մսի մի կտորն և դե-  
ից թագուն ուտել, բայց սիրտ չարաւ. քիչ սպա-  
սելուց յետոյ, համբերութիւնը հատաւ և ասաց  
ինքն-իրեն. «Ինչիցն եմ վախենում, չէ որ դեն  
երկու աչքով կոյր է և գողութիւնս չի նկատի.  
իսկ ես էլ շատ սրտով ուզում եմ մի կտոր միս ու-  
տել, արի կը գողանամ, ինչ կինի, թող լինի. Սո-  
տուած օգնական է. ոչինչ չի լինի. բացի այն որ

դեւ կոյր է, հոտառութիւնն էլ չունի և ինչպէս  
կարող է մտածել թէ ես այսաեղ եմ ու ես եմ գո-  
ղացել միսը», — ասաց ու թագստեան տեղից կամաց-  
կամաց գուրս գալով մօտեցաւ եփած մսերին, վերց-  
րեց մէկ չաղ կտոր ու գարձեալ կամացուկ գնաց  
իւր տեղն ու մեծ ախորժակով սկսեց սւտել: Ա-  
նիծեալ դեւ, գու մի ասի ընթերցող, եփած մսերն  
ուտելիս՝ համարելիս է եղել երբ հերթը վերջին  
16-րդ կտորին հասաւ, կտեց պտրտել իւր չորս  
կողմէ, բայց ոչինչ միարողացաւ գտնել: Նատ պտըր-  
տելուց յետոյ, գեւ սկսեց մեծ մտատանջութեան  
մէջ ընկնել ու ինքն-իրեն խօսել. «Զլինի թէ  
մորդ է մտել ապարանքս և ով պէտք է լինի ստ, որ  
բաւական չէ, այսպէս անվախ և յամարձակ ներս է  
մտել, համարձակուում է նոյն իսկ ծածուկ գողա-  
նալ իմ ուտելու եփած միսը: Ո՞վ կարող է լինել.  
երեսի դա հասարակ մանկանացու չէ, այլ Երկնա-  
լին մի Հրեղէն Ողի, եթէ ոչ իմ ահից նա երբէք  
սիրտ չէր անիւ ապարանքս մտնել. Հիմայ ես  
դրան կաղաչեմ, որ իրեն բոլորովին չեմ վնասի,  
եթէ իրեն ովլ լինելը և ինչու համար ներս գալը  
կը լաւանի ինձ. բացի սրանից շատ հետաքրքրում  
է ինձ թէ նա ինչպէս կամ ինչ միջոցներով կա-  
րողացաւ այդպէս գողունի ներս մտնելը տպա-  
րանքիս մէջ. անպատճառ պէտք է աղաչել. սը-  
րանց իմանալուց յետոյ՝ եթէ հասակով մեծ է լի-  
նելու ինձանից, հայր եմ կոչելու նրան, իսկ եթէ  
տարիքով ինձանից փոքր է լինելու, որդու տեղ  
կընդունեմ»: — Մի քիչ համբերելուց յետոյ, գեւ  
չոքեց ծնկների վրայ և ասաց բարձր ձայնով.

— Ո՞վ անմահ Երկնալին Ոգի, դուքս եկ, մի՞  
վախենար, արի ինձ մօտ, ես քեզ չեմ վնասիլ.  
դու ինձանից աւելի ուժեղ ես եղել, որովհետև իմ  
ահից գետնի վրայ կենդանի արարած և վերև օդի  
մէջ թռչուն՝ երբեք սիրտ չեն արել և իմ ապարան-  
քի մօտով անցել, իսկ դու անվախ ներս ես եկել ինձ.  
բոլորովին անլալտ կերպով և բացի սրանից գողացել  
ես ինձանից և իմ ուտելու մէկ կտոր միսը. փառք ու  
պատիւ քո բաջութեանդ, որ բնութիւնն և Երկ-  
նալին էակները վարձատրել են քեզ: Երդւում եմ  
անմահ Աստուծոյ անունով, որ քեզ ես վնաս չեմ  
տալ. դուքս եկ և արի ինձ մօտ բոլորովին անվախ-  
եթէ հասակով ես և տարիքով ինձանից ծեր, հայր  
կանուանեմ քեզ, իսկ եթէ ինձանից փոքր, այն  
ժամանակ որդիս կը դաշճնեմ քեզ:

Եահզադէն առաջին անգամ սիրտ չարաւ թա-  
գստեան տեղից գուրս գալու և դեխն յայտնուելուր,  
բայց երբ դեխն երկրորդ և երրորդ անգամն էլ կրկ-  
նեց նոյն խօսքերը, Եահզադէն իսկոյն վագելով  
եկաւ դեխ մօտ և փաթաթ ուելով դեխ վզովը, համ-  
բուրեց ձեռքն և ասաց.

— Ես եմ հայր դե, ես, հասարակ մահկանուցուն  
և ոչ Երկնալին Ոգին, ինչպէս դու էիր ասում. խնդ-  
րեմ ներես, հայր իմ, համարձակութեանս համար,  
որ անվախ և համարձակ ներս եկայ ապարանքու և  
դեռ ալդքան բաւական չհամարելով ինձ, գողա-  
ցայ նաև եփած միսդ, բայց խնդրեմ ներես ինձ,  
հայր իմ, ալդ գողութեան համար. ես ալդ չէի  
անի, բայց քաղցը շատ էր նեղացրել ինձ, որին

յագեցնելու համար արի ալդպիսի յանդուգն քայլ:  
Նիմայ ինչ կամենաս այն արա, հայր իմ, ուզում  
ես սպանիր, ուզում ես կենդանի թող, բայց կրկին  
և կրկին խնդրում եմ, ներես ինձ:

Մինչ մեր Եահզադէն այս տեսակ աղերսալից  
խօսքերով աղաջում էր դեխն, վախենալով որ իւր  
յանդգնութեան համար մի գուցէ գեն իրեն սպա-  
նի, բայց ընդհակառակը, դեր քաղցրալիր ժպիտով  
գրկեց Եահզադէին ու ասաց.

— Սիրելի որդի, ինչու էիր վախենում ինձա-  
նից և չէիր դուրս գալիս թագստեան տեղեցգ.՝  
ես քեզ այս օրուանից որդեգրում եմ և իմ որդի  
եմ դարձնում, տալիս եմ այս ապարանքս և բոլոր  
ոչխարները քեզ ընծայ. ապրիր ինձ մօտ մինչև  
մահդ և ուրախացիր. դու, սիրելի զաւակս, չը  
կարծեսթէ քեզ խարում եմ, ոչ. երդւում եմ անմահ  
Աստուծոյ անունով, որ իմ խօսքերս միշտ են և  
ասածներս իրաւացի և ահա նշան այս իմ խօսքե-  
րիս՝ թող լինին այս իմ ծերունուս ջերմագին համ-  
բուրները:

Այս խօսքերն ասելով, դեր սկսեց մի քանի  
անգամ համբուրել Եահզադէին, լետոյ նստեցրեց  
իւր կողքին ու սկսեց միառմի հարց ու փորձ անել  
թէ ով է ինքը, ում որդին է, անունն ինչ է և  
որտեղից և ուր է գնում:

Եահզադէն դեխ բոլոր հարցերին բաւականու-  
թիւն տուեց:

Երբ կոյր դեր Եահզադէից բոլորն իմացաւ,  
մանաւանդ այն թէ նա թագաւորի որդի է և ա-

նունն էլ Շահզադէ է, շատ ուրախացաւ, նորից սկսեց մի քանի անգամ համբուրել Շահզադէի աշքերից ու յետով և կմեց իւր վերաբերմամբ պատմել ալսպէս.

— Սիրելի որդի Շահզադէ, մենք երեք եղբայր էինք, ամենափոքը ես էի. որովհետև մեր հօրից մենք ամեն բան հաւասար կերպով ստացանք, ինչպէս օրինակ՝ տան կահ. կարասիները, այս ոչխարներն՝ որոնց գու տեսնում ես և ուրիշ շատ բաներ, եղբայրներս սկսեցին ինձ վրայ նախանձուել, թէ ինչո՞ւ հայրս ինձ էլ նրանց հետ հաւասար բաժին տուեց ու սկսեցին ինձ հետ կռուի բռնուել. չնայած որ ես էլ որպէս երիտասարդ մեծ ոլժի տէր էի, բայց երկուսի դէմ ի՞նչ կարող էի անել, ի հարկէ, որ նրանք կը լաղթէին ինձ. յարձակուեցան վրաս, խլեցին ոչխարներիս մեծ մասը, տան կահ. կարասիներն և գէթ մի բոլէ չխղճահարուելով ինձ վրայ, մանտաւնդ ամենամեծ եղբայրս, աչքերս հանեց կռուի մէջ և ինձ այսպէս խղճալի գրութեան մէջ թողեց: Ահա, սիրելի որդիս, տեսնում ես եղբայրներիս երախտիքը գէպի ինձ: Ահա, ալժմ, որպէս իմ հարազատ որդուս, յանձնում եմ քեզ բոլորն՝ ոչխարներիս հետ միասին և խնդրում եմ քեզ սիրելի քաջ որդիս, որ ոչխարներին արածացներիս, աշխատես՝ որքան կարելի է՝ իմ նենդ և ապերախտ եղբայրներիս արօտատեղների կողմը ըլ քշես, եթէ ոչ, նրանք քեզ անպատճառ կը սպանեն: Ասացի, որ մենք երեք եղբայրներ էինք. ես, որ ահա աչքովդ տեսնում ես, յետոյ միջնակ եղ-

քայլս, որն երեք գլխանի է և բնակւում է մեր կարմիր սարերից եօթ սար լետոյ. ունի երկու իմ ոչխարների չափ ոչխարներ, և ինքն ու բոլոր նրան պատկանեալ տարածութիւնները, ունեցած չունեցածն և ոչխարներն ամբողջովին ուե են: Իսկ ապա մեծ եղբայրս, որը եօթ գլխանի է և զանազան տեսքի տէր, բնակւում է միջնակ եղբօրս սարերի ոահմաններից սկսած տասնուշը սարից յետոյ, ալսինքն մեզանից մօտ քսանեմէկ սարից յետոյ. ունի երեք իմ ոչխարների չափ ոչխարներ և թէ ինքը, թէ տարածութիւնները. թէ ունեցած չունեցածն և թէ ոչխարները՝ բոլորն էլ սպիտակ են: Մեծ եղբօրս ապարանքի տակ կայ նմանապէս ոսկէազբիւր կոչուած առուակ: Պէտք է այս էլ ասեմ քեզ և լաւ էլ իմացած եղիր, որ իմ աչքի գնդակները՝ որով կարողանսւմ էի լոյս աշխարհը տեսնել, մեծ եղբօրս մօտ է գանւում. փաթաթած է թաշկինակի մէջ և իւր ննջարանում գտնուող մեծ ոնդուկի մէջն ունի պահած, որի վրայ գիշերներն ինքն է քնում:

Մեր պատանի Շահզադէն դեմ բոլոր պատմածները մեծ հետաքրքրութեամբ լսեց և այնքան ոգեսորուեցաւ. ոխսկալութեան վրէժխնդրութեամբ, որ քիչ մնաց հւնց կէս գիշերին հեռանար գեից ու գնար իւր դւ հօր եղբայրների բնակարանները, նրանց բոլոր ունեցած չունեցածը խլելու և իրենց էլ տեղն ու տեղը կոտորելու, բայց աշխատեց իրեն մի կերպ հանգստացնել՝ մինչև լոյսի բացուելը: Լուսաբացին Շահզադէն, դեմ սովորութեան հա-

մեմատ՝ բոնեց մի քանի ոչխարներ, մորթոտեց,  
եփեց ու ինքն ու իւր դև հալրը կերան։ Յետոյ  
աշտարակի երկաթէ դուռը բացեց ու ոչխարներին  
դուրս քշեց դաշտը։ Կոյր դևը նորից լիշեցրեց, որ  
իրեն սեփական մարգագետնից աւել, ուրիշ տեղ  
չգնալ և ոչխարներին էլ չտանի, որպէս զի վեր-  
ջը փոշմնելի չլինի։ Շահզադէն խոստացաւ դեկն  
այնպէս անել, ինչպէս նա է ուզում ու ինքն էլ  
դուրս գնաց աշտարակից։

Շահզադէն ոչխարները քշեց աշտարակից շատ  
հեռու մարգագետին։ գնալիս ճանապարհին կրկին  
վրէժխնդրութեան բոցով բոնկուեց նրա սիրտն և  
թնդանօթից արձակած ձալնի նմանողութեամբ  
մի ուժգին և ահուելի որոտագին ձայն տարածուեց  
ամալի դաշտում.— «Ո՛վ դու, պիղծ գազան, անա-  
մօթ դև։ միթէ ամօթ չէլ քեզ համար՝ որ դու  
քո հարազատ եղբօրը կռւրացըիր և զրկեցիր լուս  
աշխարհը տեսնելուց տես, ալժմ, ի՞նչ կանեմ քեզ,  
ով դու անամօթ մարդակեր»։ — Այս խօսքերից յետոյ,  
Շահզադէն ոչխարներն ուզզակի քշեց դև հօր  
միջնակ եղբօր ապարանքի կողմլ։ Շահզադէն շատ  
հետաքրքրուած էր այն մտքով, թէ երեք գլխա-  
նի դեն ինչպիսի կերպարանքի արարած է լինելու։  
Վերջապէս անցնելով մի քանի սարեր, մօտեցաւ  
միջնակ դեկի ապարանքին, որի առաջ տարածում  
էր ընդարձակ կանաչազարդ մարգագետին։ Նրա  
վրայ արածում էին երկու անգամ աւելի ոչխարներ,  
քան թէ ինքն ունէր. իսկոյն հասկացաւ, որ իսկ  
և իսկ իւր դև հօր միջնակ եղբօր ոչխարներն են,

որովհետեւ առանց որևէ է պահապանի էին և բացի  
դրանից, ամենը՝ թէ ոչխարները, թէ մարգագետինն  
և թէ մօտակալ սարերը, բոլորն էլ ու գոյն ու-  
նէին։ Շահզադէն այս անգամ ուզեց բաւականանալ  
միայն դեկի ոչխարներով, ուստի միջնակ դեկի ոչխար-  
ները քշելով դէպի յետ, միացրեց իւր ոչխարնե-  
րին և յետ դարձաւ դէպի հօր բնակարանը, վրէժ-  
խնդրութիւնն ապագալին թողնելով։ Մի քիչ ժա-  
մանակն անցաւ թէ չէ, յանկարծ Շահզադէն լը-  
սեց մի ուժգին դեալին մոնչիւն։ Այդ ձայնը շատ  
սարսափեցրեց Շահզադէին, բայց մի կերպ իրեն  
կարողացաւ տմբապնդել ու սկսեց այս ու այն  
կողմը նայել. յետ նայեց ու տեսաւ՝ որ երեք գլու-  
խանի դեն՝ արագ-արագ քալիքրով դէպի իւր վրան  
է գալիս։ Երբ դեւը բաւականին մօտեցաւ Շահզա-  
դէին, նա գաղանային խրոխտ ձայնով գոռաց։

— Ո՛վ ես դու, ով հասարակ մահկանացու-  
որ իմ ոչխարները քշում ես. օձն իւր պորտովն և  
թոշունն իւր թեկերով չի համարձակւում ալստեղ  
մօտենալ, իսկ դու, քանի գլխանի ես, որ համար-  
ձակուեցար ալստեղ գալ. այս ըոպէին քո մարմի-  
նը կտոր կտոր կանեմ և դիշատիչ կենդանիների-  
կերակուր կը գարձնեմ։

Այս ասելով՝ երեք գլխանի դեկ, հենց էն էր,  
ուզում էր՝ որ խեղճ Շահզադէի վրայ լարձակուէր  
եւ շների ու գալիքրի փայ աներ, երբ Շահզադէն  
Աստուծոյ անունը լիշելով, դև հօր բնակարանից  
իւր հետ բերած մեծ հովուական ցուալը երեք ան-  
գամ գլխին պտտացնելով, այնպիսի ուժգնութեամբ

զարկեց դեմ երեք գլխներին, որ երեքից՝ երկուսը  
միասին ջախջախեց իրար խառնելով ուղեղն ու ոս-  
կորը. մնաց մէկը, ուզում էր, այն էլ դանակով  
կտրել, բայց յանկարծ, մի ինչ որ անդնդալին ձայն  
լսուեց. այդ ձայնին հետևեցին և Նահզադէի մօտ  
գտնուած թէ շնչառոր և թէ անշունչ առարկա-  
ները, բարձրագոչ այս խօսքերն ասելով.

— Ո՞վ հերոս, մի կտրիր երրորդ գլուխը, եթէ  
ոչ կը կենդանանայ, թո՞ղ այդպէս, ինքն-իրեն կը  
սատակի:

Նահզադէն դեմին թողեց այդ դրութեան մէջ  
և ոչխարներից հեռանոլով, շտապ-շտապ վազեց  
սարը՝ դեմ ապարանքը գնալու համար. իջաւ սա-  
րալանջն և այնուեղ տեսաւ հիանալի հոյակապ աշ-  
տարակ. մտաւ մէջը, շրջեց գեկի ամբողջ սենեակ-  
ները, հաւաքեց թանթագին ոսկեղէն և արծաթե-  
զէն անօթներն ու զարդարանքները, շալակեց  
ուսի վրայ և դուրս գալով այդտեղից, սկսեց ա-  
րագ-արագ բարձրանալ սարը և յետու կրկին ցած-  
րանալ սարալանջն ու շուտով հասաւ իւր ոչխար-  
ներին. տեսաւ որ իւր ոներիմ և իրեն գալլերին  
ու շներին կերակուր գարձնող պիղծ գեւն արդէն  
սատակել էր:

Արդէն գիշերուայ մութ խաւարը կամաց-կա-  
մաց պատում էր չորս կողմու. իսկ Նահզադէն գեռ  
եօթ սարի ետևեն էր գտնւում իւր ոչխարներով, բայց  
Նահզադէն՝ չնայած ալդքան հեռու տարածութեան  
մինչև իւր գեւ հօր բնակարանն, ուրախութիւնից  
այդ գիշերուայ մութ խաւարի մէջ՝ այնպէս շտապ

և արագ ելեէջներ և ոստիւններ տնելով անցաւ-  
սարահարթերի և սարերի վրայով, որ սովորական-  
ժամիցն էլ մի փոքր առաջ հասաւ դե հօր աշտա-  
րակին: Ոչխարների ձայնի վրայ՝ աշտարակի դուռը-  
բացուեց, իսկ կոյր գեւ դրան մէջ կանգնելով իւր-  
սովորութեան համեմատ՝ ուկսեց ոչխարները համա-  
րել. բայց որքան մեծ եղաւ դեմ զարմանքն, երբ  
համարեց ու հաշուից իմացաւ որ երկու անգամ  
աւելացել է ոչխարների թիւը. իսկոն մտքի ընկաւ,  
որ Նահզադէն գնացել է իւր միջնակ եղբօր մօտ,  
սպանել է նրան և ահա նրա ոչխարները քշել բե-  
րել է իւր ապարանքը: Ուրախութիւնից դեւ դու-  
ռը փակելուց հետոյ՝ Նահզադէի վզովը փաթա-  
թուեց և այս գովասական խօսքերն ասաց.

— Ապրես, շատ ապրես, քաջ զաւակս, պատիւ-  
ե գովասանք քո հերոսութեան, որ դու այդ պա-  
տանեկութեան համակումն ալդքան ուժեղ և զօ-  
րեղ ես եղել և քո այդ փոքրիկ մատներով կարողա-  
ցել ես ջախջախել իմ ոխերիմ թշնամի դե եղբօրս  
դլուխը:

Ծերունի կոյր գեւ Նահզադէի այսպիսի քտ-  
ջագործութեան համար շատ սիրեց նրան և չէր  
իմանում նրա ալդ քաջութեան համար՝ ինչպէս  
շնորհակալ լինի: Նա ունէր իւր մօտ գեային յա-  
տուկ կախարդական մի քանի գործիքներ, ուստի  
ցանկացաւ ալդ կախարդական գործիքները նրան-  
ընծայել որպէս նուէր և նրանց մանրամաս բա-  
ցատրութիւններն էլ յալունել, բայց չհամարձա-  
կուեց, քաշուելով՝ որ մի գուցէ Նահզադէն վիրա-

Նորսւի այդ տեսակ հասարակ նուէրներով։ Այդ գիշերն էլ դեմ սովորս թեան համեմատ, Շահզադէն մորթոտեց մի քանի ոչխարներ ու խորովելուց յետով սկսեցին ընթրիք անել։ Շահզադէն երկար ճանապարհներ, սարեր ու ձորեր մանգալուց, այնպէս յօդնել էր, որ հազիւ-հազ կարողանում էր իրեն պահպանել, շատ սրտով ուզում էր մի փոքր ննջել, բայց չէր ուզում դրանով անհնագանդ ցոյց տար իրեն դե հօր առաջ, որովհետեւ դեռ տեղնուատեղը ծալապատիկ ամուր նստած էր ու մեծ ախորժակով ուտում էր ոչխարի միսլ։ Մի փոքր ժամանակամիջոց անցնելուց յետով, վերկացաւ դեռ սեղանից, իսկ Շահզադէն վերքաղեց սեղանն ու պատրաստուեցան քնելու։ Հենց իսկ այդ րոպէին, երբ Շահզադէն իւր ջախչախուած ու թուլացած ոսկորներին ուզում էր մի փոքր հանգստութիւն տար, դեռ մօտեցաւ նրան ու տաց։

— Սիրելի որդի Շահզադէ, նորից խնդրում եմ, որ ալժմ գոնէ լսես ինձ և վաղը չգնաս իմ եօթ գլխանի ամենամեծ եղբօրս մօտ։ Ի՞նչ հարկաւոր է քեզ ալսքան ոչխարներ և ոսկի ու գանձ։ Քո կեանքը ինձ համար աւելի թանգ է, քոն թէ քո բերած գարզերն ու ոսկիները։

Շահզադէն պատասխանեց.

— Լսիր հալը, պէտք է անպատճառ գնամ։ Պու մի կարծիր թէ քո եօթ գլխանի դե եղբարդ կլաղթի ինձ, երբէք։ Այն Աստուածը՝ որն իմ ձեռքով կատարեց երեկուալ իմ յաղթութիւնը քո երեք գլխանի դե եղբօր վրայ, նորա ամենակարող

զօրութեամբ կը ջախչախեմ ու կը սատակացնեմ նաև քո եօթ գլխանի դե եղբօրդ։ յուս ունեմ կրկին Աստուծուց, որ եթէ դէպք լինի և ինձ հետ մենամարտելու դուրս գալ քառասուն գլխանի դեն էլ, լաւ գիտենաս, հալրիկ, որ նրան էլ կլաղթեմ և ջախչախելով կը սատակեցնեմ։

Դեն այլ ես ոչինչ չխօսեց։ Կէս գիշերին երկուսն էլ գիշերուալ խոր քնի մէջ ընկղմուեցան։ Միւս առաւտուը դարձեալ սովորութեան համեմատ՝ ոչխարները դուրս քշեց աշտարակից արածացնելու համար։ Շահզադէն մտքումը դըեց այդ օրնեւեթ գնալ եօթ գլխանի դեմ մօտ և տեսնել, թէ ի՞նչ տեսակ արարած է լինելու դա, որին իւր դե հալրն ալնքան գովում էր ուժի կողմից և իրեն էլ խիստ զգուշացնում։ Շահզադէն ոչխարներին քշեց շատ և շատ հեռու։ անցաւ մի քանի սարեր և սարահարթեր և մօտեցաւ միջնակ երեք գլխանի դեմ աշտարակին, այսինքն եօթ սարի սահմաններին։ Այստեղից էլ առանց հանգստանալու, դարձեալ սկսաւ շարունակել ճանապարհն և անցաւ կրկին մի քանի սար, լեռ, հովիտ ու խոր-խոր ձորեր և վերջապէս մօտեցաւ տասնեւչորրորդ սարի սահմաններին, այսինքն կարմիր կոյր դեմ լնակարանից սկսած քսանեմէկերորդ սարի սահմաններին։ Քսանեմէկերորդ սարին մօտենալուն պէս՝ ստորոտում մի փոքր հանգստացաւ ու յետոյ սկսեց բարձրանալ սարի գլուխը։ այդտեղից Շահզադէն նկատեց մի մէծ և բարձր աշտարակ։ հասկացաւ՝ որ այդ եօթ գլխանի դեմ կացարանն է ու սկսեց

սարե գլխից ցած վագել դէպի սարալանջը։ Աշտարակի առաջ տարածուած էր երկար տափարակ տարածութիւնն, որը ծածկուած էր կանաչ խոտով և որի վրայ արս ծում էին՝ իւր մօտ եղած ոչխարներից երեք անգամ աւելի ոչխարներ։ թէ աշտարակը, թէ դրա մօտ եղած տարածութիւնները, թէ այդ կանաչագարդ մարգագետինն և թէ մարգագետնում արածող ոչխարները, սպիտակ զոյն ունէին՝ որպէս ձիւն։ Շահզադէն, երբ վերջապէս մօտեցաւ կանաչագարդ մարգագետնին, այլ ևս չկամեցաւ գնալ եօթ գլխանի գևի կացարանն, որովհետև շատ յօդնել էր, այլ իւր ոչխարները միացնելով տինտեղ եղած ոչխարների հետ, դարձրեց լետ՝ դէպի տուն գնալու։ Կարճ ճանապարհ անցնելուց յետով, յանկարծ Շահզադէի ականջին հասնում է գևի ուժգին ձայնը. յետ է նայում և ինչ է տեսնում. ահագին բարձրութեան ու մեծութեան մի եօթ գլխանի գևը՝ կատաղած ու փրփրած որպէս ամեհի դժոխալին վիշապ, աշտարակից դէպի իրեն է գալիս։ Շահզադէն սկզբում սարսափահար է լինում, բայց շուտով Աստուծոյ անունը յիշելով իրեն մի կերպ ոյժ է տալիս ու կանգնում է մէկ տեղ, յուսը գնելով Աստուծոյ վրայ։ Դևը մի փոքր մօտենալով, բարձր ձայնով գոռում է.

— Ո՞վ դու մահկանացու, ինչ սրտով դու այտեղ ապարանքս եկար և իմ սեփհական ոչխարները քշում ես. այս ըստէիս, թող, դու այդ ոչխարներն իրենց տեղն անշարժ, իսկ դու էլ, եկ շուտինձ մօտ և երկրպագիր, որ քո արածներիդ հա-

մար թողութիւն անեմ և քեզ էլ ազատ թողնեմ։ Միթէ չգիտես, ով լիմար և թոյլ արարած, որ այս տեղերն ինձ է պատկանում և իմ ահիցը՝ վերև օդի մէջ թռչունն և ներքև գետնի երեսին՝ սողունը չեն համարձակուում անցնել, իսկ դու, քանի գլխանի եղար, որ համարձակուեցար այդ քալին անել և անվախ ու համարձակ իմ սեփհական հողի մէջ ոտքը կողել ու ապականել։

Շահզադէն լսելով գևի այդ տեսակ անարգ խօսքերը, կատաղել էր վրիժառութեան հոգով և կատաղած առուծի նման այն է՝ ուզում էր իւր գևի հովուական ցուպով մէկ ակնթարթում եօթ գըլխանի ամեհի գև-վիշապին ջախջախել, բայց իրեն զսպեց ու որոտալի ձայնով պատասխանեց.

— Ո՞վ դու գարջ, պիղծ և անարդ գև վիշապ, մօտեցիր ինձ և այն ժամանակ ցոյց կտամ քեզ՝ թէ ես քանի գլխանի եմ, կամ ով եմ և կամ թէ ինչ ոյժի տէր եմ։

Եօթ գլխանի գևն՝ երբ լսեց հասարակ մահկանացուից այդ տեսակ անամօթ պատասխանն, որն բոլորովին չէր սպասում, փրփրեց, կատաղեց և որպէս դժոխալին վիշապ՝ նետուեց Շահզադէի վրայ։ Շահզադէն բոլորովին չվախեցաւ դորանից, այլ նորից Աստուծոյ անունը յիշելով, ձեռն առաւ իւր կոյր գև հօր հովուական ցուպը, յարձակուեց եօթ գլխանի գևի վրայ և որքան ոյժ ուներ բազուկների մէջ, մէկ ակնթարթում այնպէս ուժգին հարուածով զարկեց գևի գլխներին որ Աստուծոյ կարող զօրութեամբ գևի վեց գլուխը, ջախջախեց

ու գլխների միսն ու ոսկորն իրար հետ հաջասա-  
րեցրեց: Մնաց մէկը, ուզեց այն էլ դանակով կտրել  
ու վերջ տալ արդ ամեհի լսկեր անամօթ դեկի  
կեանքին, բայց դարձեալ յանկածակի մի ինչ որ  
անդնդալին գղրդիւն լսեց: Այդ անդնդալին ձար-  
նին ձայնակցեցին և Շահզադէի մօտ եղած թէ  
շնչաւոր և թէ անշունչ առարկաններն, որոնք  
նոյնպէս առաջուայ նման ասացին.

— Ո՞վ հերոս, մի կտրիր եօթերորդ գլուխն,  
եթէ ոչ կկենդանանայ. թող արդպէս, ինքն իրեն  
կը սատակի:

Շահզադէն ալլ ևս դեկին ձեռք չտուեց: Իսկոյն  
հանեց իւր հովուական մաղախից մէկ փոքրիկ շեշ,  
լցրեց դեկ գլխներից հոսող արիւնով ու դրեց գըր-  
պանն ու յետոյ թողնելով ոչխարներին այնտեղ,  
ինքը դիմեց եօթ գլխանի դեկ աշտարակը: Մօտե-  
ցաւ աշտարակին, ներս մտաւ մէջը, շրջեց չորս  
բոլորքը և հաւաքեց թանկագին ոսկէ և ալճաթէ  
զարդարանքներն: Ապա բացեց այն սնդուկն, որի  
մէջ գտնւում էր թաշկինակում փաթաթած իւր  
դե հօր աչքերն և այն էլ դրեց գրպանը: Քիչ յե-  
տոյ միտն ընկաւ իւր դե հօր ասած ոսկէազբիւը  
կոչուած առուակը, գտաւ իսկոյն ներքնայարկի  
անցքը և սանդուղտներով վագելով դէպի ցած,  
ճրագի լոյտով տեսաւ առուակը: Երբ նաևց առուա-  
կին, շատ հաւանեց, իսկոյն զլուխը կոխեց մէջն  
և ամբողջովին գլուխն ոսկէզօծուեցաւ: Իւր ոսկէ  
մազերը դեկ սանդրովը գեղեցիկ թանդրեց և ոչ-  
խարի մորթին գդակի ձեւ տալով, փաթաթեց գըր-

խին: Ներքնալարկից բարձրացաւ վերև: Սկսեց նորից  
շրջել դեկ ապարանքը, դարձեալ հաւաքեց թանկա-  
գին և աչքի ընկնող իրերն ու բոլորն ամփոփելով  
իւր հովուական մաղախի մէջ, դուրս եկաւ աշտա-  
րակից ու եկաւ ոչխարների մօտ: Տեսաւ որ դեն  
արդէն սատակել էր: Շահզադէին ալժմ տխրաց-  
նում էր այն միտքը, թէ էրք պէտք է հասնի իւր  
դե հօր բնակարանը, քանի որ նախ՝ ժամանակ  
քիչ ունէր, երկրորդ՝ որ շատ և շատ ուշացել էր  
և կէս գիշեր էր դարձել արդ եօթ գլխանի դեկ  
հետ կոռու բռնուելու պատճառով, և երրորդ՝ որ  
շատ երկար տարածութիւններ ունէր անցնելու  
իւր յոգնած ու ջարդուած ոտքերով մինչև իւր  
բնակարան հասնելն և չէր իմանում ինչ անէր: Մնար այնտեղ այն ամայի դաշտում՝ վախում էր նախ՝  
գիշատիչ կենդանիներին կերակուր դառնալուց և  
երկրորդ էլ՝ չէր ուզում իւր դե հօրը զանազան  
մտածմունքների անդունդն ընկղմէր իւր վերա-  
բերմամբ: Նորից ստածեց ու վերջնականապէս վըճ-  
ռեց ճանապարհ ընկնել և զուտ ու արագ քայլե-  
րով հասնել դե հօր բնակարանին՝ նշանակած ժամա-  
նակին: Մի քիչ հանգստացաւ: Յետոյ հանեց հովուա-  
կան պարկից ուժեկեղէններ ու կերաւ և ապա բո-  
լոր ոչխարներին լետ գարձնելով, շտապ-շտապ քշեց,  
իսկ ինքն էլ սկսեց արագ քայլերով առաջ ընթա-  
նալ: Շատ չարչարանքների ու տանջանքների հան-  
գիպելուց յետոյ, վերջապէս մի կերպ անցաւ քանակ-  
մէկերրորդ սարը, և հազիւ-հազ իւր սովորական  
ժամանակից մի փոքր ուշ՝ հասաւ իւր դե հօր

աշտարակին։ Ոչխարների ձայնի վրայ՝ աշտարակի դուռը բացուեց, և դեղ դրան մէջ կանգնելով՝ սկսեց ոչխարները համարել և ինչքան զարմացաւ, երբ դեղ ոչխարների թիւը եռապատիկ համարեց։ Կոյր դեղ Շահզադէի այս տեսակ քաջագործութեան համար շատ ուրախացաւ և իսկոյն հասկացաւ, որ Շահզադէն արդէն սպանելէ և իւր ամենամեծ եօթ գլխանի դեղօրը։ Խոկոյն դուռն ամուր փակեց և ներս գնալով իւր սենեակը, կանչեց իւր մօտ Շահզադէին, նստացրեց ծնկան վրայ, համբուրեց աչքերից և ուրախ ձայնով ասաց.

— Ո՞վ դու Աստուածալին Ոզի, դու, գերբնային զօրութիւն, ոչ թէ դու մահկանացու արարածես եղել, այլ Բարձրագոյն Ոլժ, որովհետեւ ալդտեսակ գոլծը միայն կարող էր անել Բարձրեալ Աստուածն և ոչ հասարակ հողեղէն արարածը ես որ տարիքով քեզանից մեծ, աւելի մեծ որժի տէր և դեի սերունդ, չկարողացաւ եղբայրներիս վնասել և ընդհակառակը՝ նոքա ինձ յաղթեցին ու կուրացրին, բայց դու, ով հողեղէն արարած, այո՞ւ դու կարողացար կործանել նրանց և պատճառ եղարիմ՝ մութ աշխարհից լոյս աշխարհը տեսնելուն Ուրեմն, դու, իմ սիրելի և քաջ Շահզադէ, քո մէջ բնակեցրած ունիս ալդ Ոյժը, և ինչպէս երեսում է, բոլոր յաղթութիւնները գործել ես ալդ աներեսոյթ Ոյժովը, ուստի և ես երկրպագու եմ դառնում քո ալդ Ոյժին, ալսինքն քո ճշմարիտ Աստուծուն, ընդունում եմ քո սուրբ հաւատուն և այն բոլորն որոնց որ դու ստացում և երկրպագում ես։ Դւն այս խօսքերը վերջացնելուց յետոյ՝ մի

քանի անգամ Շահզադէի աչքերից համբռւրեց և խնդրեց պատմել՝ թէ ինչպէս կարողացաւ սպանել իւր ամենասմեծ եօթ գլխանի եղբօրը։ Շահզադէն շտառ ուրախացաւ, որ իւր անհաւատ դեղ հալրն Աստուածալաշտութիւնն ընդունեց և պատմեց եօթ գլխանի դեի սպանութեան մասրամասնութիւնը։ Ապա հանեց գրպանից թաշկինակում փաթթաթած իւր դեղ հօր աչքերի գնդակներն ու շիշով լի եօթ գլխանի դեի արիւնն, աչքի գնդակներն իրենց տեղերը գարսեց և նրանց վայլ եօթ գլխանի դեի արիւնից մի փոքր սրսկելով, իսկոյն կոյրի աչքերը բացուեցան։ Դւն ալժմ պարզ տեսնելով լոյս աշխարհը, պատանի գեղեցկադէմ Շահզադէին իւր սովորանգուո, մազերով, բազմաթիւ համարաւոր ոչխարներն և իւր սպարանքի մէջ գրտնուած ոսկեղէն ու արծաթեղէն զարդարանքները, գոհունակ սրտով փառք տուեց Ամենաթալիքեալին և նորից համբաւրելով Շահզադէին, ասագ։ — Սիրելի որդի, ալսուհետեւ դու, իմ հարազատ որդու պէս լինելու ինձ համար, կապրես ինձ հետ մինչեւ մահս անբաժան, որովհետեւ դու, այնպիսի լաւութիւնն արիր ինձ, որը միայն կարելի էր սպասել հարազատ որդուց և ոչ օտար և անծանօթ պատանուց։

Այդ օրից անցան տարիներ...

Մէկ օր Շահզադէն ասաց դեին.

— Հայրիկ, ճիշտ է ալսուել ապրելը լաւ է ինձ համար, բայց հարազատ ծնողներիս սէրն աւելի է շարժում իմ որդիսական սիրտն և տրամադրում է

ինձ՝ հեռանալ այստեղից այս մօտիկ օրերն և գնաը  
հալրենիքս տեսնելու և իմանալու, թէ ի՞նչ դրու-  
թեան մէջ են գտնւում իմ այսքան երկար տարի-  
ների բացակայելուց յետով՝ թէ իմ ծնողներն և թէ  
մեր ողջ թագաւորութիւնն, նամանաւանդ, աւե-  
լի հետաքրքրում եմ նրանով, թէ արդեօք, իմ  
հրէշ քոյրն ողջ է թէ մեռած:

Այս խօսքերը հաճելի չեղաւ դեին և ասաց.

— Որդի, մի գնաը, այսքան ժամանակ այստեղ  
ես եղել ինձ մօտ և մենք որպէս հալր և որդի  
միասին ենք ապրել. իսկ հիմայ, դու ուզում ես  
հեռանալ ինձանից. ի՞նչ պէտք է լինի իմ դրու-  
թիւնն արդեօք մենակ մնալով: Զէ, որդի, եկ լսիր  
ինձ և մի գնար. իսկ եթէ աղաչանքս չես լսի և  
անպատճառ կերթաս, այն ժամանակ, աւելի լաւ է  
ինձ ողջ ողջ ձեռքովդ թաղես այս ապարանքս մէջ  
ու այնպէս գնաս, որովհետև ես արդէն ծերացել  
եմ և առանց քեզ մէկ օր էլ կենդանի չեմ ապրի:  
Ծերունի միազլիսնի կարմիր դեմք շատ այս  
տեսակ խօսքեր տսեց Շահզադէին՝ որպէս զի հա-  
մոզի՝ որ իրենից չը հեռանայ, բայց իղուր: Իւն  
ոչ մի բանով չկարողացաւ յետ կանգնեցնել Շահ-  
զադէին իւր մտադրութիւնից: Վերջիվելջոյ դեր  
համոզուելով՝ որ Շահզադէի սիրտը ծնողական սի-  
րոյ գրգիրով լցուած, չի կարողանում ոչ մի հնարքով  
համոզել, փաթաթուեց երիտասարդ Շահզադէի վը-  
զովն ու մի քանի անգամ համբուրելով աչքերից  
ու գանգուռ ոսկէգոյն մազերից, ասաց.  
Սիրելի որդի, ուրեմն, երբ վերջնականապէս

վճռել ես հեռանալ ինձանից, և սրտով ուզում ես  
տեսնել հալրենիքդ ու ծնողներիդ, սորա համար  
օրհնում եմ քեզ իմ ծերունի բերանովս: Գնա, որ-  
դի, Սատուած քեզ օգնական, բայց չմոռանաս,  
որ եթէ մի որեւ դէպքի վերաբերմամբ հեռանա-  
լու լինիս ծնողներիցդ, անպատճառ ինձ մօտ գաբ:  
Ահա, այժմ քեզ կտամ երեք հատ դեալին կա-  
խարդութեամբ շինուած՝ չարիքից ազատուելու  
գործիքներ, որոնց այս րոպէիս կը բերեմ և կը  
ցոյց տամ քեզ և տմեն մէկ գործիքի ոլժն ու զօ-  
րութիւնն էլ կը պատմեմ:

Ծերունի միազլիսնի կարմիր դեմ այս խօս-  
քերն ասելով, գնաց և բերեց Շահզադէի մօտ՝ մեծ  
փաթոթի մէջ փաթաթած սանդը, փոքրիկ դանակ  
և ջրով լիք փոքրիկ շիշը: Դեւ մէկ մէկ հանեց  
փաթոթի միջից և Շահզադէին ցոյց տալով, ասաց,

— Ահա, սիրելի զաւակօ, այս սանդը այն կա-  
խարդական ոլժն ունի, որ եթէ թշնամին քեզ  
յաղթելիս լինի, իսկոյնեւթ, նախ քան թշնամուդ  
մօտենալը՝ գցիր առաջն, և իսկոյն նրա տռա-  
ջին գտնուած՝ ամբողջ հարթ տարածութիւնը կը  
դառնայ մի անմերձենալի անտառ: Եթէ նրանից  
մի կերպ թշնամիդ ազատուի և կրկին ուզենայ քեզ  
ոչնչացնել, յետոյ գցիր դանակն, և գցելուն պէս  
իսկոյն ամբողջ տարածութիւնը դանակի սուր-սուր  
երեսների կը փոխարինէ, որն և թշնամուդ կարդելէ  
ճանապարհ շարունակելը: Եթէ բան է, այդ էլ  
չը կարողացաւ քեզ օգնել թշնամուցդ ազատուելու  
համար, ապա, գցիր ջրով լիք շիշն, և իսկոյն նրա

առաջին կը տարածուի մեծ և լայնածաւալ ծով։  
Կարմիր միագլխանի դեն արև կախարդական  
գործիքները տուեց Շահզադէին և ճակատից համ-  
բուրելով, արտասուախառն աչքերով ասաց։

— Սիրեկի որդի, նորից կրկնում եմ, Աստուած  
օգնական լինի քեզ, բայց զգուշ եղիր, որ փորձանք  
եղած ժամանակը, մտահան չանես այդ գործիք-  
ների գործածութիւնն և ինչպէս էլ ապել եմ, այնպէս  
էլ կանես։ Բացի սրանցից, դարձեալ տալիս եմ քեզ,  
սիրելի զաւակս, որպէս թանկագին ընծալ, դժբաղ-  
դութիւններիդ ժամանակ քեզ օգնութիւն հասց-  
նելու համար, ահա, այս թղթէ կտազոցի մէջ դար-  
սուած իմ և իմ երկու դե եղբայներիս նժոյգնե-  
րի մազերն՝ առանձին-առանձին թղթերում փա-  
թաթած, այն նժոյգների մազերն, որոնց, հայրս  
իւր մահուան օրը բաշխեց ինձ չափից դուրս սի-  
րելու պատճառով։ Ահա, սիրելիս, եղբայրներիս  
թշնամութեան պատճառն ինձ հետ՝ աւելի սրանք  
եղան, մանաւանդ մեծ մեղքօրս, որովհետեւ գլխա-  
ւորապէս տւելի նա կուրացրեց ինձ հօրս մահից  
լետով։ Ես այն մազերը պահել էի մի այնպիսի  
տեղ, որ դժուար թէ սատանան էլ գտնէր, և  
նրանք, երբ կոռւի բռնուեցին հետս և խլեցին  
ինձանից հօրս տուած բաժնից մեծ մասը, շատ և  
շատ աշխատեցին այս մազերի կապոցն էլ գտնել՝  
որպէս զի իրենց հետը տանէին, բայց ոչ մի կերպ  
չկարողացան գտնել։ Հրեղէն նժոյգների մազերի  
կապոցը, ճիշտն ասած, ես ինքս էլ մոռացել էի և  
սրա համար էլ ոչինչ չը պատմեցի քեզ։ Հիմայ,

ասում եմ քեզ, որ եթէ որևէ փորձանքի ժամա-  
նակ մեծ կարիք ունենաս, այս կապոցի մէջ փա-  
թաթած հրեղէն նժոյգների մազերից՝ որն որ մի  
փոքը ծալրից ալրես, մնացեալը ծոցդ կամհես,  
իսկովն նոյն մազի հրեղէնը կը յայտնուի քեզ մօտ  
կւր բոլոր պատերազմական պատրաստութիւննե-  
րով, բայց բոլորովին չվախենաս նրանից։ Վերցրու  
յետու հրեղէնի վրալից զէնքերն ու զրահներն և  
զրահաւորութիր և հէնց որ բոլոր պատերազմական  
գործիքները կառնես վրադ, գուլ էլ կալակերպուես  
և կդառնաս այն գոյնի գեի կերպարանքի, ինչ  
գոյնի հրեղէն նժոյգդդ կլինի։ Նա մարդկալին ար-  
մեն լեզու իմանում է, մանաւանդ, արաբերէն շատ  
լաւ է խօսում և դու էլ նոյն ժամանակնեեթ-  
կը սկսես պատասխանել արաբերէն լեզուով։ Ինչ որ  
կը կամենաս, թէ լաւ թէ վատ, հրամայի՞ր և նա  
պատրաստ կլինի քո բոլոր հրամանքներդ կատա-  
րելու, Եթէ մինչեւ անգտամ ուղարկես կռուի մի-  
լիօնաւոր թշնամու բանակի դէմ, այնտեղ էլ կեր-  
թալ ու բոլորին վախճան տալով՝ հնազանդու-  
թեամբ ու հլու հպատակութեամբ իւր բոլոր պար-  
տականութիւնը կը վերջացի։ Քեզ ծառայեցնելուց  
յետով, երբ ալլես հարկաւոր չի լինի և կը կամե-  
նաս արձակել, նժոյգի վրա կը կին կը դարսուես  
կարգով վրադ եղած զէնքերն ու զրահները, ծոցդ  
պահած նժոյգի մազի ալրած մնացորդը կը հանես  
և կալրես ամբողջովին և նա իսկոյն մէկ ակնթար-  
թում կանյալտանալ աչքիցդ, իսկ գու էլ նորից  
ալլակերպուելով՝ քո իսկական կենպարանքն կը



**Մ**եր քաջ երիտասարդ Շահզադէն մանապարհ ընկաւ։  
Նատ գնաց թէ քիչ գնաց Աստուած գիտէ,  
վերջապէս հասաւ իւր հայրենիքի սահմաններին։  
Մօտենալուն պէս, երբ նկատեց որ իւր չորս կողմը  
մեւելութիւն է տիրում և ոչ մի արարած չէ ե-  
րեւում, սաստիկ զարմացաւ։ Նայեց այս ու այն  
կողմը՝ մարդ չտեսաւ։ յետոյ անցաւ իրենց սովո-  
րական երկար ու նեղ փողոցներն և բոլոր իրեն  
ծանօթ այդ տեղերը, դարձեալ ամայի ու գադարկ  
պատահեց իրեն։ Այս բոլորը տեսնելով Շահզադէն՝  
իւր աչքերին չէր հաւատում, կարծելով որ իւր  
աչքերը խարում են իրեն, սկսեց նորից բոլոր տե-  
ղերը շըջել և ալժմ կրկին նոյն տեսարանները պարզ  
ու ակնյալտնի տեսնելով, սկսեց մտածութեան խոր  
անդունդի մէջ ընկզմուել։ Քիչ մտածելուց յետոյ  
Շահզադէն ինքն իրեն ասաց. — «Մի գուցէ ես ու-  
րիշ թագաւորութեան մէջ եմ գնացել... բայց չէ որ  
այս շինութիւնները պարզ ապացուց են լինում որ  
մեր հայրենի հողումնեմ գտնելում, բայց այս գատար-  
կութիւնն և ամայութիւնն ինչ է նշանակում...  
բոլորովին ոչինչ չեմ հասկանում... մի գուցէ իմ հրէշ  
քոյրը մեծացել է և նա է մարդկերանց կեանքին  
վերջ դրել... ով գիտէ... կամ մի գուցէ օտար արիւն-  
ուուշ թշնամին է յարձակուել մեր թագաւորու-  
թեան վրայ և բոլորովին անխնայ սրախոխող անե-  
լով՝ կոտորել են... այս Աստուած իմ, ումնց իմա-

նամ իսկութիւնը, ճշմարտութիւնը... ով Տէր բարձ-  
րեալ Աստուած, տուր կենդանի շունչն ու հոգի իմ  
սիրեցեալներից գոնէ մէկին՝ որ նա, այս, նա պատմէր  
ինձ իրենց գառն այս վիճակին հասնելու պատճառն  
և ես էլ՝ կարողանալի քո Ամենազօր ոյժովն՝ ոչնչաց-  
նել ալսքան կոտորածներ հասցնողին։ Շահզադէին  
մենակութիւնից ճանապարհին սարսափն աւելի ու  
աւելի էր բունում և չնայած իւր սրտի քաջու-  
թեանը, սկսեց դողալ։ Նորից ընկզմուեցաւ մտա-  
ծութեան ալիքների անդունդն և կամաց համրա-  
քալ սկսեց առաջ գնալ դէպի իրենց պալատը՝ շա-  
րունակ իւր չորս կողմը նայելով, որտեղ դարձեալ  
ոչ ոքի չէր պատահում։ Մօտեցաւ վերջապէս ի-  
րենց պալատին, բայց նորից ոչ ոք չյայտնուեց ի-  
րեն գիմաւորելու։ Մտածութեան մէջ՝ իւր հրէշ  
քրոջը մտաբերելով, ասաց ինքն-իրեն — «Միթէ իմ  
հրէշ քոյրն ամբողջ թագաւորութիւնն ամայի դարձ-  
րեց և ամբողջ մարդկութիւնը կերպաւ... ուր են  
իմ ծնողները... ոչ ոք չէ երևում... անպատճառ  
բոլորն էլ հրէշին զոհ են գնացել... ափսնս ափ-  
սնս իմ թանկագին ծնողներ, որ ալժմ ձեր սիրելի  
որդին՝ հայրենիքը վերադառնալով, չը կարողացաք  
նորան կրկին տեսնել»... — Այս խօսքերն արտասա-  
նելուն պէս՝ Շահզադէն փոքր առ փոքր թուլա-  
նալով՝ ուշաթափուեց, և նամանաւանդ մենակու-  
թեան ստրափից ու ահից, յանկարծ վայր ըն-  
կաւ ու սկսեց արտասուախառն աչքերով դառն հե-  
կեկալ։ Մի փոքր ուշքի դալուց յետոյ, Շահզադէն  
մօտեցաւ մի կերպ պալատին։ ուզեց սանդուխտնե-

ըով պալատը բարձրանաւ և շլջեւ իրենց սենեակները՝ տեսնելու համար թէ մի գուցէ այն տեղերը մարդ կարողանար գտնել, բայց սիրտ չառաւ վերև գնալու, վախենալով՝ որ գուցէ իւր հրէշ քուրը թագնուած լինելով մի որև տեղում, յանկարծակի իւր վրայ յարձակուի և իրեն մահացնի: Ի՞նչ անէր: Բարձրանար, վախենում էր, չբարձրանար և չտեսնէր իւր աչքերով իրականութիւնը պալատի մէջ ևս, խղճի խայթը կրծոտում էր իւր երիտասարդացին սիրտը: Վերջապէս շատ մտածելուց յետոյ, Աստուծոյ անունը յիշելով՝ իրեն մի կերպ ամրապնդեց և վերջնականապէս վճռեց բարձրանալ պալատը՝ տեսնելու իւր երևակայած հրէշ քրոջն ու նրանից իւր ոխը հանելու՝ իւր այսքան բազմաթիւ մարդկանց կործանման համար:

Շահզագէն սանդուխտներով բարձրացաւ պալատը, մտաւ իրենց շքեղ ապարանքը, բայց դրժքաղդաբար ոչ ոքի չտեսաւ: Յետոյ մտաւ հիւրասենեակ, սեղանատուն, ննջարան, բայց ալդ տեղերն էլ ոչ ոքի չտեսաւ: Համարեա ամբողջ պալատը շրջեց, բացի իւր հրէշ քրոջ սենեակից, և կրկին և կրկին ոչ ոքի չտեսաւ իրենց բնակարաններում, ոչիւր ծնողներին և ոչ էլ պարատականներին ու բարձրաստիճան իշխաններին: Սկսեց այս անգամ աւելի յուսահատութեան մէջ ընկնել ու ասաց ինքն-իւրեն—«Ի՞նչ բան է այս, հրաշք է թէ իրականութիւն... եթէ ճիշդ իմ հրէշ քրոջ արածն էլ լինի այս, միթէ ամբողջ մեր լայնածաւալ տէլութեանը՝ նա միայն վերջ դրեց իւր մարդկերութեամբ: Իսկ եթէ հրէշ քրոջս չմեղադրեմ և ու-

ըիշ թշնամի տէրութեան արած լինի այս բոլոր իմ տեսածները, միթէ այնքան անգութե եղաւ նա, որ մեր հզօր տէրութեան վրայ պատերազմ գալով, յաղթեց և գերելով բոլոր բնակիչներին, մարդկանցից էլ ոչ ոքի կենդանի չմողեց... իսկ կենացնինիներն և անասուններն ուր կորան, մըտեղ անյատացան... միթէ ագահ թշնամին կենդանիների և թռչունների թագաւորութիւններին էլ վերջ գրեց»...:

Շահզագէին յանկարծ պատկերացաւ իւր հրէշ քրոջ ահսւելի պատկերն և նա սկսեց պալատի մէջ մենակութիւնից տերեւի նման գողար, բայց քիչ յետոյ Աստուծոյ անունը յիշելով, մի կերպ քաջալերեց իւրեն ու մտադրուեց մտնել այն սենեակն, որտեղ փոքր հասակում, օրօրոցումն պառկած, իւր հրէշ քրոջն էր գտնւում: Կամացուկ մօտեցաւ նա իւր հրէշ քրոջ սենեակին, մի փոքր դուռը բացեց և ներս նայելով սենեակի մէջ, ընթերցնեց, դուռ երևակալիք, թէ նա ի՞նչ տեսաւ: Հրէշը մի զազրելի կուալին դէմքով նստած էր աթոռի վրայ ու սուրբ առուր ատամները կէս արշինաչափ դուրս ցցած այս ու այն կողմն էր նայում իւր սարսափելի չուած աչքերով: Նրա առաջ արաստաղից կախուած էր Շահզագէի ծերունի Զէն թագաւորի մարմնի կէս մասը, որին երբեմն շուտ-շուտ ահարկու կերպարանքով նայելով կրկնում էր այս խօսքերը.— «Ալսօր ուտեմ, վաղն ինչ անեմ»:

Շահզագէն այս բոլորն իրականապէս տեսնելով, իսկոյն մտքի ընկաւ, որ Աստուծոյ տեսիլքի

ասացուածքը՝ ճիշդ կատարուել է հրէշի միջոցով  
և իսկ և իսկ գա է եղել բոլոր արարածների կորըս-  
տեան պատճառն և ոչ թշնամին։ Քիչ սպասելուց յե-  
տոյ, Շահզադէն մտադրուեց մի կերպ փախչել այդ  
տեղից, բայց այդպիսի գաղտնագողի փախչելն ա-  
մօթ համարելով իրեն համար, ինքն իրեն ասաց։

—Ե՞ս... իմ փախչելը հրէշից... երբէք... այս  
բանը իմ կողմից ստորութիւն կլինի... ես փախ-  
չեմ և ումնից... կին հրէշից... ո՛չ, ո՛չ, դարձեալ  
կըկնում եմ, երբէք։ Այն Օստուածը՝ որ օգնա-  
կան եղաւ ինձ դեւրին կոտորելու ժամանակ, նա  
ևս օգնական կլինի հրէշից ազատուելիս։ Ես, փո-  
խանակ փախչելու, աւելի լաւ է, կմօնեմ նրա  
մօտ և ուրիշ խորամանկ միջոցով կազատեմ ինձ  
նրանից և ոչ թէ փախչել, որն և ամենամեծ  
ամօթ ու նախատինք կլինի ինձ համար։

Շահզադէն ալսպիսի քաջալերական և խրա-  
խուսական խօսքերով իրեն մի կերպ կարողացաւ  
սիրտ տալ ու այս անգամ դուռն ամուր բանա-  
լով ներս մտաւ հրէշի սենեակը։ Երբ Շահզադէն  
հրէշ քոլը տեսաւ իւր մօտ եկող անծանօթ հիւ-  
րին, շատ ուրախացաւ ու իսկոյնսեթ մի ակնթար-  
թում կուլ տուեց առառոտաղից կախուած Շահ-  
զադէի ծերունի հօր՝ դժբաղդ Զէն թագաւորի  
մարմնի կէս մասը։

Շահզադէն այս տեսակ զազրական տեսարանն  
երբ տեսաւ իւր աչքերով, շատ սրտնեղեցաւ և բար-  
կութիւնից ուզում էր հէնց հրէշին տեղն ու տեղը  
մահացնէր, բայց իրեն զսպեց, փախենալով՝ որ մի

գուցէ նախ՝ հրէշին չը կարողանար յաղթել, և երկ-  
րորդ էլ՝ որ գուցէ իրեն կռուովը նրան աւելի և  
աւելի բարկացնելով՝ իրեն յաղթէր, և վերջիվերջու  
փախճան տար իւր կետնքին, ուստի և ձեռք չը  
տուեց։ Քիչ յետոյ Շահզադէն սկսեց ինքնիրեն  
մտսծել և ասել. — «Ճիշտ է, մեծ է Աստուծոյ զօ-  
րութիւնն և յոյս ունիմ որ Նրա Ամենակարող ոլ-  
ժովը կարող եմ հրէշին յաղթել և կործանել, բայց  
ինձ ինձ տանջեմ և չարչարեմ այսպիսի գա-  
զանաբարոյ հրէշի հետ մենամարտելովս։ Աւելի լաւ  
է, մի խորամանկութիւն բանեցնեմ, եթէ ոչ, կա-  
րող է պատահել, որ մինչև իմ մենամարտելը նրա  
հետ, ինձ էլ իմ խեղճ ծերունի հօրս օրինակին  
հասցնի և մէկ ակնթարթում ինձ էլ կուլ տայ և  
վերջ դնի իմ մատաղահաս և երիտասարդ հասակիս։  
Ես կաշխատեմ նրանից մեր սովորական տանու սա-  
զըն ուզել և իրեն առաջը յոգնածութիւնս առաջ  
բերելով, կը խնդրուեմ որ գուրս գնամ պատշգամբը։  
Սազը մի փոքը ածելուց յետոյ, կամաց-կամաց սան-  
դուխտներով ծածուկ ցած կերթամ փողոցն և հրե-  
զէն նժոյգիս միջոցով կը հեռանամ ուրիշ երկիր։  
Իսկ հրէշը, հաւատացած եմ, որ ինձ պալտառում  
ալլ ես չը տեսնելով՝ կը նկնի ետեիցս, իսկ ես էլ նը-  
րան, իմ ետեից գալու միջոցին, կը գլորեմ դև  
հօրս սովորեցրած կախարդական ծովը։ — Մինչ Շահ-  
զադէն այս մտածմունքներով շրջապատուած՝ կան-  
գնել էր հրէշի առաջ քարացած արձանի նման,  
հրէշը մօտեցաւ Շահզադէին և ուրախուրախ ձեռ-  
քից բռնելով, տարաւ ու նստացրեց աթոռի վրայ,

ասելով.—«Եղբայր, ալստեղ դու մի փոքը նստիլ և հանգստացիր, իսկ ես կերթամ միւս սենեակը և կերակուր կը պատրաստեմ քեզ համար»: Այս խօսքերն ասելուց յետով, հրէշը կամեցաւ դուրս գնալ սենեակից, բայց Շահզադէն իսկոյն շտապով տեղից վերկացաւ և խորին կերպով գլուխ տալով՝ սիրայիր ասաց.—«Սիրելի քոլինկ, շատ շնորհակալ եմ քո այս տեսակ հիւրասիրութեան համար, բայց խնդրում եմ, եթէ կարելի է, քո սազը տաս ինձ, որպէս զի դուրս գնամ պատշգամբը՝ մի փոքը ժամանակ ածելու և զուարճանալու: Ես, ուղիղն ասած, շատ երկար ճանապարհորդութիւնից, չափից դուրս յոգնած եմ և քունս էլ տանում է այստեղ, իսկ դուրս՝ պատշգամբում քունըս չի տանիլ, որովհետեւ կը զբաղուեմ սազի ածելով՝ մինչև քո կերակուրի պատրաստելը, իսկ յետով էլ՝ ճաշս վերջացնելով՝ մի քիչ կը քնեմ, որով և ոյժերս կազզուրած լինելով՝ կը ին նորից կը շարունակեմ ճանապարհս: Յուսով եմ և հաւատացած եմ, որ այս փոքրիկ խնդրուածքս կը կատարես անպայման, որով և մեծապէս շնորհակալ կը լինեմ քեզանից»:

Հրէշը որտեղից կարող էր մտածել, թէ Շահզադէն խորամանկութեամբ սազը նրանից ուղեղով՝ մտադրուել էր գաղտնի փախչել: Հրէշը բոլորովին ոչ մի կասկած չտանելով Շահզադէի վրայ և նրա խօսքերը ճշգութիւն համարելով, բերեց սազը Շահզադէին տուեց և իրեն էլ առաջնորդելով՝ տարաւ պատշգամբը, իսկ ինքը մտաւ կը կին

իւր բնակարանն ու սկսեց ոչ թէ Շահզադէի համար կերակուր պատրաստել, այլ իւր սուր-սուր կէս արշինաչափ ատամները սրել, որպէս զի հիւրին տւելի համեղ ուտի:

Շահզադէն ձեռքն առաւ սազը և հրէշի առաջնորդութեամբ՝ դուրս գալով իրենց ապարանքի բազմաթիւ սենեակներից գէպի պատշգամբը՝ նստեց աթոռների մէկի վրայ ու սկսեց սազն ածել: Երբ հրէշը ներս մտաւ ապարանքի խոր սենեակները, Շահզադէն մեծ ուշադրութեամբ այս ու այն կողմը լաւ նայելուց յետով, շուտով սազը պատից կախեց և արհեստական կերպով սազն այնպէս յարմարերեց ալդ օրուայ խիստ քամուն, որ քամին զարկուելով սազի լարերին, մեղմիկ և քաղցը ձայն էր հանում: Շահզադէն այս խորամանկութիւնը նրա համար արաւ, որ իրենից հեռու սենեակների մէջ գտնուազ իւր մարդակեր հրէշ քոլը՝ ոչ մի կասկած չը տանէր իւր վրայ ու ապահով լինէր իրեն այնտեղ լինելու համար: Յետոյ ինքը Շահզադէն էլ զգոյշ և կամացուկ սողալով սանդուխտների վրայով, վազեց փողոցը, իսկոն հանեց ծոցից կարմիր գեկ տուած հրեղէն նժողովների մագերի կապոցը, վերցրեց իւր դե հօր նժողովի մազը, մի փոքը ծալրից ալրեց և մի փոքը ժամանակից յետով, կարմիր հրեղէն նժողովը իւր բոլոր պատերազմական զրահներով ու զէնքերով, խրխնջալով առաջ եկաւ Շահզադէի առաջ: Շահզադէն երբ հրեղէն նժողովին իւր մօտը տեսաւ, շատ ուրախացաւ և իսկոյն նրա վրայից բոլոր

պատերազմտկան զէնքերը վերցնելով՝ շուտով հագաւ ու զբահաւորուեցաւ, իսկ ինքն էլ յանկարծ այլակերպուելով՝ կարմիր միագլխանի դեմի կերպարանքով, նստեց հրեղէն նժոյգի վրայ, ամուր մտրակեց, թռաւ օդի մէջ ու սլացաւ աւտաջ:

Հրէշը ատամների սրելը վերջացնելուց յետոյ, դուրս եկաւ պատշգամբը և ի՞նչ տեսաւ: Սազը պատից կախուած և լարերն արհեստական կերպով քամուն արած, որից և լուռմ էր մեղմիկ բարակ ձալնն, իսկ անծանօթն, իւր սիրելի և համեղ կերակուրն՝ ալլ ևս չկար: Այս ու այն կողմը սկսեց պտրել, բայց ոչ մի տեղ չը կարողացաւ գտնել: Հրէշը իսկոյն մտքի ընկաւ, որ իւր անծանօթ հիւրը՝ Շահզադէն, խորամանկ միջոցով փախել է: Առանց երկար սպասելու, իսկոյնեեթ պալատից դուրս վազեց փողոցը և Շահզադէ յետելիցն ընկաւ: Հրէշը իւր անսանալին ոտքերով՝ այնպէս արագ էր վազում, որ մինչև իսկ լաւ ընտիր հրեղէն նժոյգն էլ կը դժուարանար ալզպէս սրարշաւ սլանալ: Շահզադէն չը նայած իւր անցած երկար տարածութեանը, յետնալեց տեսնելու, թէ արգեօք՝ իւր հրէշ քոյրը իրեն յետելից գալիս է թէ ոչ, և իւրօք իւր յետել՝ հեռու տարածութեան վրայ նկատեց ճանձի չափ մի ինչոր բան: Իսկոյն հասկացաւ, որ դա իւր հրէշ քոյրն է լինելու, որը գացաւ, որ դա իւր հրէշ քոյրը է լինելու համար: Շահզադէ սիրտը չը համբերեց և էլի յետ նալեց: Ալժմ արդէն պարզ տեսաւ հրէշին, որը կատաղած ու փրփրած իւր վրայ էր գալիս: Իսկոյն լիշեց դուռը՝ հրէշի առաջ: Իսկոյն ամբողջ տարածութիւնը գանակի սուր-սուր երեսների փոխարինուեցաւ: Հրէշը ալդակեղիք էլ կարողացաւ իրեն մի կերպ ազատել, կրկին ոչ մի վասնգի չենթարկուելով և ոչ մի վնաս չը ստանալով: Շահզադէն նորից նակեց յետել և տեսաւ, որ այս անդամ հրէշը աւելի կատաղած և մեծ արագութեամբ է գալիս իւր վրայ: Վերջապէս ալժմ վճառեց տրդէն ջրախեղդ անել այ անսանօթ և լսիրշ հրէշին: Աստուծոյ անունը լիշեց, և վերցնելով դեմի կախարդական ջրով լիք շիշը, իրենից շատ հեռու շպրտեց: Կախարդական ջրով լիք շիշ գետին ընկնելուն պէս, իսկոյնեեթ, մէկ ակն-

տուած՝ թշնամուց ազատուելու կախարդական գործիքները՝ սանդրը, դանակը և ջրով լիք շիշը: Առաջ հանեց իւր ուսի վերալ շալակած հովուական մաղախից՝ դեմի ընծալած սանդրը և Աստուծոյ անունը լիշելով՝ իսկոյն գցեց իւր ետելը գտնուած հարթ տարածութեան վրայ և մէկ ակնթարթում Շահզադէի յետելը գտնուած տարածութիւնը զարձաւ խիտ և անմերձենալի անտառ: Բայց չը նայած այդ կախարդական անտառի ծառերի խտութեանն և ծառերի միջև եղած ճանապարհի անանցանելիութեանը, այնուամենալինիւ հրէշն այդ բոլոր տեղերն անցաւ մեծ արագութեամբ, և ոչ մի վնաս չը կրելով՝ կրկին ընկաւ Շահզադէի յետելից: Շահզադէն տեսաւ, որ կախարդուած սանդրով իրեն չը կարողացաւ տպատել, երկրորդ միջոցին դիմեց իրեն պաշտպանելու համար, այն է, վերցրեց նա կախարդուած դանակը և գցեց իւր յետել՝ հրէշի առաջ: Իսկոյն ամբողջ տարածութիւնը գանակի սուր-սուր երեսների փոխարինուեցաւ: Հրէշը ալդակեղիք էլ կարողացաւ իրեն մի կերպ ազատել, կրկին ոչ մի վասնգի չենթարկուելով և ոչ մի վնաս չը ստանալով: Շահզադէն նորից նակեց յետել և տեսաւ, որ այս անդամ հրէշը աւելի կատաղած և մեծ արագութեամբ է գալիս իւր վրայ: Վերջապէս ալժմ վճառեց տրդէն ջրախեղդ անել այ անսանօթ և լսիրշ հրէշին: Աստուծոյ անունը լիշեց, և վերցնելով դեմի կախարդական ջրով լիք շիշը, իրենից շատ հեռու շպրտեց:

թարթում, Նահզադէի ետևն եղած ամբողջ տարածութիւնը՝ դարձաւ մի մեծ և լայնածավալ ծով։ Նահզադէի չար և լանդուգ մարդակէր հրէշ քոյլը՝ Նահզադէի լետևից շատ վազելուց յետոյ, վերջապէս եկաւ հասաւ ծովին, և կանգնեց ծովափին։ Քիչ յետոյ երբ Նահզադէն յանկարծ նորից յետնայեց և տեսաւ իւր յետևի ամբողջ հարթ և երկար տարածութիւնը՝ լայնածավալ ծով դարձած, շատ ուրախացաւ։ փառք տուեց Աստուծուն և ինքն էլ հրեղէն նժոյգից ցած դալով ծովի եղդերքին, նստեց մի փոքր հանգստանալու։ Հրէշը ծովի ափին չէր կարողանում հանգիստ մնալ իւր տեղը։ Մի քանի անգամ պատրաստուեց ծովի վերալով թուչել և հասնել իրենից փախչող որսին, և տեղն ու տեղ պատառուել, բայց վախեցաւ ծովի մէջ ընկնելուց, Քիչ համբերելուց յետոյ, կրկին սկսեց հրէշը կատաղութիւնից այս ու այն կողմը վազգել և վերջնականապէս այլ ևս չը կարողանալով իրեն պահել վճռեց թուչել։ Հրէշը մեծ և ուժգին ցալտունք անելով օդի մէջ, ոլացաւ ծովի վրալով։ Մի փոքր տարածութիւն անցնելով՝ տարաբագդաբար այլ ևս չը կարողացաւ շարունակել և հասնել ծովի թիւմ ափիը, և ուժասպառ լինելով՝ ընկաւ ծովի մէջ տեղը և իսկոյնեեթ՝ ջը տակովնեղաւ։ Զրի ալիքները մի քանի անգամ բարձրացնելով անշնչացած հրէշի մարմինը, կրկին խորասուզեց ծովի անդունդը և յաւիտենական անլայտացնելով ջը երեսից, հոգին յանձնեց չար սպեներին։

Նահզադէն հրէշից ազատուելու համար՝ մի քանի անգամ վառք տուեց Աստուծուն, և յետոյ իւր հրեղէն նժոյգի աչքերից համբուրելով՝ բաց թողեց դաշտը հանգստանալու, իսկ ինքն էլ սկսեց ծովի ափն ու շրջակալքը մանգալ։ Երկար մանգալուց և շատ լոգնելուց յետոյ, նստեց մէկ տեղ, հանեց հովուական մաղախից ուտելեղէններ, կերաւ և յետոյ պառկեց քնելու, բայց չը կարողացաւ քնելու նորից վեր կացաւ տեղից, խոր մտածութեան մէջ ընկղմուեցաւ ու ինքն-իրեն խօսելով, ասաց։ — «Ի՞նչ անեմ. յետ դառնամ իմ հայրենիքը և նոր թագաւորութիւն սահմանեմ, ինչպէս կարող եմ յետ դառնալ, չէ որ առաջս ահագին ծով է գտնւում, իսկ ուրիշ տեղ գնալու համար էլ՝ ճանապարհներ չը գիտեմ։ Տէր Աստուած ինչ, անեմ. ինչ պէտք է լինի դրութիւնս, չեմ հասկանում։ Վերջապէս մնամ այստեղ ծովի եղերքին, մի գուցէ գիշերով՝ ծովալին կենդանիներին կերպուր գառնամ։ Ո՛չ, չեմ մնալ ալստեղ, աւելի լաւ է, կերթամ մի որև է ճանապարհով հեռու օտար երկիր, ինչ կը լինի, թող լինի, Աստուած ողորմած է։ — Ալսպէս երկար մտածելուց յետոյ, վերջնականապէս վճռեց գնալ մի որև է ճանապարհով։ Կանչեց հրեղէն նժոյգին իւր մօտ, նորից համբուրեց աչքերից, հրեղէնի պռչի մազերից մէկը պոկեց ու դրեց գրապանը, իսկ իւր ծոցից էլ հանելով հրեղէն նժոյգի կիսատ ալրուած մազը՝ ամբողջովին ալրեց։ Հրեղէն նժոյգի պռչի մազի ալրելուն պէս՝ իսկոյնեեթ, մէկ ակնթարթում հրեղէն նըս

Ժողովն անյալտացաւ: Նժողովի անյալտանարուն պէս՝ Շահզադէն էլ նորից կերպարանափոխուեց իւր իսկական կերպարանքի: Շահզադէն ծովի ջրով երեսը լուաց, ոսկէպանդուռ մազերը դեմ սանդրովը սանդրեց և իւր ոչխարի մորթուն գդակի ձեւ տալով փաթաթեց գլխին, շալակեց հովուական մազախը ուսին և ձեռքն առնելով իւր դեալին հովուական ցուպը, Աստուծոյ անունը լիշեց ու ճանապարհ ընկաւ ոտքով:

Կախարդական ծովը՝ իւր մէջ խեղդուած հրէ-շովը թողանք ալստեղ և գանք Շահզադէն ուրիշ թագաւորութիւն գնալուն:



\* \*

**Ե**րիտասարդ Շահզադէն ճանապարհ ընկաւ: Նատ գնաց թէ քիչ գնաց. Աստուծ գիտէ, վերջապէս հասաւ Միրան անունով մէկ հարուստ թագաւորի մայրաքաղաքին: Մտաւ քաղաքի հեռու խուլ անկիւններից մինում մէկ սրճարան, մտաւ մէջը: Մի փոքր հանգստանալուց յետոյ, խնդրեց այնտեղ եղող մարդկանց, որ իրեն՝ որպէս օտարական՝ աշխատեն մի կերպ գործի կանգնեցնել: Սրճարանում եղող մարդկանցից մէկն ասաց. — «Եղայր, մեր քաղաքում, այս ինչ տեղը՝ մէկ հարուստ վաճառական կայ, որը հարկաւոր եղած դէպքում, քեզ նման օտարական մարդկանց՝ գործի է կանգնեցնում: Նա ամեն բանով օգնում է: Նա Միրան թագաւորի մօտ շատ ընդունուած մարդ է: Բան է, եթէ իրեն մօտ ծառայելու տեղ չունենայ, կարող է Միրան թագաւորի մօտ գտնի քեզ համար տեղ»: — Շահզադէն շատ ուրախացաւ և ալդ գիշերը սրճարանում գիշերեց, իսկ առաւօտը՝ ծէզը բացուելուն պէս՝ գուրս եկաւ սրճարանից, սկսեց շրջել նորից այս ու այն փողոցներն և վերջապէս գտաւ հարուստ վաճառականի խանութը: Մտաւ խանութը և տեսնելով այնտեղ վաճառականին, խոնարհ գլուխ տուեց և տեղ խընդրեց իրեն համար:

Վաճառականը շատ սիրով ընդունեց մեր օտարական Շահզադէին և ասաց.

— Որդի, շատ լաւ, միայն պէտք է ասեմ, որ  
ինձ մօտ ծառալելու տեղ չը կալ, իսկ եթէ ուզում  
ես գործի կենալ և ծառալելով մի կտոր հաց ուտել,  
աչքիս վրալ, ես իսկոյն կը միջնորդեմ մեր բարե-  
խնամ Միրան թագաւորին՝ որ քեզ մի որ և է պաշ-  
տօն տալ: Ես, ինչպէս հաստատ իմացել եմ, Մի-  
րան թագաւորին հարկաւոր է քեզ պէս մի օտա-  
րական՝ իր պալատի սեփհական բաղերի ու հաւերի  
վրայ վերակացու նշանակելու: Եթէ կարող ես այդ  
պաշտօնը կատարել, ես մեծաւ ուրախութեամբ վաղ-  
նեթ կերթամ պալատը և քո ցանկութիւնը կը  
հազորդեմ մեր մեծարքալ թագաւորին:

Նահզադէն համաձայնեց Միրան թագաւորի  
բաղերի ու հաւերի վերակացու լինելուն, բայց  
իրեն մասին վաճառականին, ոչինչ չը լայտնեց թէ  
ինքն ովէ, կամ ում որդին է, և կամ թէ չէ՝ ինչեր  
էր պատահել իրեն: Նահզադէն մի քանի տնգամ  
խոնարհ գլուխ տուեց ու գուրս գալով խանութից,  
գնաց սրճարան:

Վաճառականը միւս օրը գնաց պալատը, մտաւ  
Միրան թագաւորի ընդունարանը, խոնարհ կեր-  
պով գլուխ տուեց թագաւորին և ասաց.

— Թագաւորն ապրած կենալ, իմ խանութս՝  
երէկ մէկ մտրդ եկաւ և տեղ խնդրեց ինձանից,  
բայց ես ասացի: — «Ինձ մարդ հարկաւոր չէ, որով-  
հետեւ շատ ունիմ, իսկ մեր բարերար Միրան թա-  
գաւորին հարկաւոր է քեզ պէս մի օտարական մարդ՝  
իւր բագերի ու հաւերի վերայ վերակացու նշանա-  
կելու համար, եթէ կը կամենաս ես մեծաւ ուրա-

խութեամբ և սիրով կառաջնորդեմ քեզ թագաւորի  
մօտ: Նա էլ համաձայնուեց իմ խօսքերին և հի-  
մա Զերդ բարեհալեցողութեանն եմ դիմում, կը  
կամենամք արդեօք Տէր թագաւոր՝ բերել Զեզ մօտ:

Միրան թագաւորն այս բանի վրայ շատ ու-

րախացաւ և խնդրեց վաճառականին, որ վաղնևեթ

անպատճառ բերի օտարականին պալատ:

Միւս օրը՝ Նահզադէն նորից գնաց վաճառա-  
կանի խանութը, իսկ նա էլ տարա Միրան թագաւ-  
որի պալատն և ներկայացրեց թագաւորին: Մի-  
րան թագաւորը շատ հաւանեց Նահզադէն և իս-  
կոյն թագաւորի պատուէրով՝ նշանակուեցաւ նոյն-

օրնեթ բագերի ու հաւերի վերակացու: Նահզադէն  
իւր ձարայիկութեան և քաջութեան համար, Միրան

թագաւորից ստացաւ շատ վարձատրութիւններ, ինչ-

պէս օրինակ՝ պալատի մօտերքը՝ սեփհական սե-  
նեակ, ձի, իրեն ստորադրեալ ձառայ՝ սպասաւորե-

լու համար, իսկ վալտ, ածուխ և ուտելեզմնները՝  
տրւում էր Միրան թագաւորից ձրի: Այսպէս երկար

և երջանիկ տպրեց մեր երիտասարդ Նահզադէն՝

Միրան թագաւորի պալատում, և իբրև բագերի ու

հաւերի վերակացու, մնաց մօտ հինգ տարի: Նահ-

զադէն, մի տեօակ սովորութիւն էր դարձեր, երբ

առաւօտները բացերին ու հաւերին կերպկրում էր

և վերջացնում իւր գործը, իսկոյն երեսն ու ձեռքերը

լուանում էր և ճաշից լետով՝ հով ժամանակներին,

գնում էր պարտէզը ու մեծ ծառերի ստուերի տակ

պաւկելով քնում էր մինչև մութ ընկնելը, իսկ լետոյ

մթանը՝ նորից վերադառնում էր իւր սենեակը:

Միրան թագաւորն ունէր երեք դեռահաս՝  
շատ գեղեցիկ աղջկերք, որոնց գեղեցկութիւննե-  
րին շատ պալատականներ և ուրիշ թագաւորների  
ժառանգներ շլացած, մունետիկներով խնդրում  
էին Միրան թագաւորից կնութեան առնելու։ Այդ  
երեք քոյրերի մէջ, աւելի ու աւելի աչքի էր ընկ-  
նում ամենափոքրիկ քոյրը՝ թէ գեղեցկութեամբ,  
թէ մարմնի կազմուածքովն և թէ գլխի մազերի  
խտութեամբն ու երկալնութեամբը։ Դորա անունն  
էր Փէրիխանում։ Սա զանազանում էր քոյրերից  
և նրանով, որ շատ սիրում էր որսորդութիւն ա-  
նելը և օր չէր լինի, որ Փէրիխանումը՝ շրջապա-  
տուած ծառաներով ու նաժիշտաներով որսի չը  
գնար մօտակալ անտառները և միշտ յաղթանակով  
չը վերադառնար որսից, հետը բերելով չսպանած  
կամ ուղղակի սպանած այծեղջիւր, արջ, վայրենի  
խոզ և կամ ուրիշ մի որև է անսուռն։ Բացի սրա-  
նից՝ Փէրիխանումը օժտուած էր Աստուածանից և  
ոլժով։ Նա այն տեսակ սարսափելի մեծ ոլժի տէր  
էր, որ նրան շատ գժուար կարող էր լաւ մենա-  
մարտող կին կամ մարդ նրան յաղթել։ Փէրիխա-  
նումը ուխտ էր դրել, որ վեսայացուներից միմիշտն  
նրան ամուսին կառնի, որը որ իւր ոլժովն իրեն  
կը վերադասէր։ Հակառակ դէպքում՝ ով որ յաղ-  
թող չէր հանդիսանալ, իրեն արած պալմանի հա-  
մաձայն՝ հրամայում էր ծառաներին սպանել։ Փէ-  
րիխանումի գեղեցկութեամբ շլացած և նրա հետ  
ամուսնանալու տեսնով բռնուած, շատ և շատ ե-  
րիտասարդ ազնուականներ և թագաւորանգներ

զոհ զնացին, չը կարողանալով յաղթող հանդիսա-  
նալ նրան։ Փէրիխանումի այս տեսակ ոլժի պատ-  
ճառով, Միրան թագաւորը՝ շատ անգամ մերժում  
էր վեսայացուների խնդիրքն՝ ասելով. — «Որդի, ա-  
ւելի լաւ է հեռանաս և մենամարտութեան չը  
բռնուես աղջկանս հետ, որովհետեւ աղջկանս պատ-  
ճառը չես կարող կատարել, այսինքն, ճիշտն ասած,  
չես կարող նրան յաղթել և իզնուր զոհ կինես նրա  
ձեռքով։» Մեծ քոյրերը շատ էին վախենում Փէ-  
րիխանումից և շարունակ նախանձւում էին նրա  
վրայ այն պատճառով որ իրենք նախ շատ թոլլ  
և ամաչկոտ էին և երկրորդ՝ որ վեսայացուներից  
շատ քչերն էին առաջարկում նրանց ամուսնու-  
թեան համար։ Միրան թագաւորի երեք աղջկերքը  
ամեն օր առաւօտներն ու երեկոները՝ միշտ սովո-  
րութիւն էին դարձրել միասին իջնել իրենց պար-  
տէզը զբօսնելու, իսկ մի քանի ժամից յետոյ զբօ-  
սնքը վերջացնելով, կրկին վերադառնում էին պա-  
լատը։ Առհասարակ Փէրիխանումը՝ իրեն քոյրերի  
հետ զբօսնելիս, սովորութիւն ունէր միշտ իւր  
քոյրերից առաջ գնալ։ Մտնում էր շտապով զանա-  
զան ծառերի ու մացառների խորքերն ու սկսում  
էր այս ու այն կողմն որսալու մի որև է բան  
պրտել։ Եթէ պատահում էր այդ տեղերքը՝ թռչուն  
կամ ուրիշ մի որև է փոքրիկ կենդանի, իսկոյնե-  
ւեթ, կամ սպանում էր և կամ թէ չէ, կենդանի  
բռնում ու բերում էր քոյրերին նուիրում։ Այ-  
սանի համար շատ անգամ՝ Միրան թագաւորը նա-  
խատում էր Փէրիխանումին, ասելով. — «Աղջիկ,

այդ Ենչ լիմար սովորութիւն ես դարձրել քեզ համար, ի՞նչու ես այդ փոքրիկ անլեզու կենդանիներին կոտորում, ի՞նչ մեղք են գործում դրանք քո առաջ: Մի՞թէ բաւական չէ, որ քեզ ամեն Սատուծու օր որսի եմ ուղարկում և այն տեղ՝ սրտի ուղածդ կատարում ես: Ուրեմն, թող, սիրելի աղջիկս, և մի կոտորիր, որպէս դի պարտիզումը նրանք բազմանան և աճեն: Դու կարծում ես թէ նրանց կոտորելով՝ դու մի որև է օգուտ կը ստանաս: Ոչինչ: Աղջիկս, մի՞թէ դու խիզմ չունիս, ի՞նչ են վնասում նրանք քեզ...: Մեղք են, հոգիս, աչքի լուսս, ձեռք վերցրու այդքան անմեղ սպանութիւններից և ուրիշ անգամին էլ այլ ևս մի անիր»: — Բայց Փէրիխանումը բոլորովին ուշադրութիւն չէր դարձրում հօր նախատինքներին և իւր սրտի ուղածը կատարում էր:

Մէկ օր, մեր բագերի ու հաւերի վերակացու Նահզադէն, իւր սովորութեան համաձայն, քնած է լինում պարտիզում մեծ ծառի ստուերի տակ և ոչխարի մորթին էլ գլխին լաւ ծածկած չը լինելու պատճառաւ, քնած ժամանակ Նահզադէի գլխից մի քիչ հեռանում է և պարզ երեսում է գլխի սոկեալ մազերը: Այդ միջոցին տնցնում էին պարտիզի միջով և Միլրան թագաւորի աղջկըքը, որոնք եկել էին զբունելու: Փէրիխանումը իւր սովորութեան մօտենալով՝ փոքրիկ կենդանիներ բռնելու յուսով, լանկարծ մօտենում է այն տեղին, որտեղ պառկած է տեղին կը բռնուեմ, տեսնեմ բազդս ի՞նչ է տալու ի՞նձ: — Փէրիխանումն այս խօսքերը վերջացնելով, կամաց կամաց մօտեցաւ իւր ապագալ ամուսին Նահզադէին, ոչխարի մովթին՝ որ հեռացել էր գլխից, կրկին իւր տեղը քաշեց և սիրոյ փոփառման ծարաւը իւր մէջ լագեցնելու համար՝ մի քանի անգամ ջերմ համբոլներ տա-

և ի՞նչ է տեսնում, իրենց պալատի բագերի ու հաւերի վերակացու օտարականը՝ ծառի սառւերի տակ պառկած քնած, իսկ գլխի գանգուռ ոսկէ մազերը գեղեցիկ սանդրած, որի փայլումից և հազիւ հազ կարողանում էր վրան նայել: Փէրիխանումը երբ շատ մօտենալով Նահզադէին՝ մօտիկից լաւ զննեց և տեսաւ որ իրենց բագերի ու հաւերի վերակացուն՝ թէ կազմուածքով և թէ գէմքի գեղեցկութեամբ իրենից աւելի հրապուրիչ էր և գրաւիչ, նամանաւանդ նրա սոկեալ մազերը, որից բոլորովին ինքը զուրկ էր, իսկ Նահզադէի գէմքին աւելի հրապուրանք էին տալիս և բնութեան այդ պարզեատրութիւնները նրան աւելի գեղեցկատեսիլ հուրիի էին նմանեցնում այդ վալրկեանին, քան մահկանացու մարդու, շատ և շատ հաւանեց և իսկոյն Նահզադէի այդքան գեղեցկութեան սիրոյ անհուն տենչանքը վալրկենաբար նետուելով Փէրիխանումի սիրտը, ասաց ինքն-իրեն. — Ա՛խ, եթէ այսքան գեղեցկութեան և հրապուրի հետ միասին ունենար և՝ ինձանից աւելի ոլժ, որքան լաւ կլինէր, ես սորան անպատճառ ամուսին կը նույնութեան համար: Արի, փողձի համար կը զարթեցեմ սրան և հետը կռուի կը բռնուեմ, տեսնեմ բազդս ի՞նչ է տալու ի՞նձ: — Փէրիխանումն այս խօսքերը վերջացնելով, կամաց կամաց մօտեցաւ իւր ապագալ ամուսին Նահզադէին, ոչխարի մովթին՝ որ հեռացել էր գլխից, կրկին իւր տեղը քաշեց և սիրոյ փոփառման ծարաւը իւր մէջ լագեցնելու համար՝ մի քանի անգամ ջերմ համբոլներ տա-

լուց լետոյ, կամաց ձայն տուեց. «Բաղերի վերակացու, գեղեցիկ հուրի»:

Նահզադէն Փէրիխանումի ձայնը լսելուն պէտի խկոյն աչքերը բացեց և երբ տեսաւ իւր մօտ մի երիտասարդ գեռահաս աղջիկ, շատ զարմացաւ: Քնաթաթախ՝ շատ աշխատեց այդ իւր մօտ եղած աղջկալ ով լինելն իմանալ, բայց չը կարողացաւ: Մի փոքր ուշքի գալով, շտապով վերկացաւ պառկած տեղից և այժմ լաւ, մանրակրկիտ զննելուց լետոյ, երբ տեսաւ Փէրիխանումի դէմքի գեղեցկութիւնն ու մարմնու սիրուն կազմուածքը, քիչ մնաց ուշաթափուէր, բայց նորից իրեն կարողացաւ մի կերպ զսպել և բոլորովին չը ճանաչելով թէ այդ գեղաչեալ և հրապուրիչ գեղեցկութիմ աղջիկը՝ իւր տիրոջ Միրան թագաւորի աղջիկն է, սիրալիր ձայնով ասաց.

— Ո՞վ դու երկնալին հրեշտակ, խնդրեմ ասես, ո՞վ ես դու և ինչու ես այստեղ Միրան թահաւորի պարտէզն եկել ու այս հովասուն մացառուտներն ու անվախ տեղերը թափառում: Ասա, աեսնեմ սիրելի քոյրիկս, ի՞նչ ես ուզում և խնդրեմ բացատրիր թէ ում աղջիկն ես, որ այդքան գեղեցիկ և հրապուրիչ ես:

Փէրիխանումը Նահզադէի այդպիսի սիրալիր խօսքերը լսելով, նորից բունկուեց Փէրիխանումի սիրտը բոցավառ անհուն սիրոյ կայծով, բայց իրեն զսպեց, և քիչ լետոյ դառնալով Նահզադէին՝ խրոխտ և ուժգին ձայնով պատասխանեց.

— Ա! լիմար և տիսմար, ի՞նչեր ես դուրս տա-

լիս, ի՞նչ պէտք է ուզենամ, ես ոչինչ չեմ ուզում: Խոկ եթէ ուզում ես իմանալ, թէ ում աղջիկն եմ ես, թո՞ղ, խնդրեմ, այդ հարցը, այդ քո բանը չէ, այդ իմ գիտնալու բանն է: Քեզ միայն մի բան ունիմ ասելու, այն է՝ որ քեզ հետ պէտք է մենամարտեմ, և ուրիշ ոչինչ: Ասա, խնդրեմ, դու ով ես, որ եկել ես այստեղ ու պառկել այս ծառերի ստուերի տակ: Ո՞վ դու լիմարի գլուխ, պէտք է գիտենաս, որ ես Միրան թագաւորի աւագ նամիշտներից մէկն եմ: Իմ Տիրոջից հրամայուած է, որ այս տեղերում, մանաւանդ այս պարտիզի մէջ, ոչ ոք իրաւունք չունենայ ներս գալու՛ առանց իմ թուլտուութեան, հասկանում ես, լիմար դատարկագլուխ: Լաւ լսիր, ես ելի նորից կրկնում եմ, որ քեզ հետ պէտք է անպատճառ մենամարտեմ, որուհետեւ իմ տիրոջ հրամանը չես կատարել, և լաւ իմացած եղիր, որ եթէ քեզ կարողացայ յաղթել և գետին տապալել, այն ժամանակ պէտք է իմ տէր Միրան թագաւորի մօտ տանեմ քեզ և ցոյց տամ նրան, որ կան աշխարհիս վրայ քեզպէս յանգուգներն էլ, որոնք անհնազանդ են գտնւում թագաւորի հրամանին և նրա բարձրագոյն պատուէրը ճշառութեամբ չեն կատարում, իմացար:

Երբ Նահզադէն՝ այս տեսակ կծու և յանդիմանական խօսքերը լսեց Փէրիխանումից, շատ վրդովուեց և տռանց մի վալրկեան կորցնելու, իւր բոլոր ուժերը հաւաքելով՝ կատարութեամբ յարձակուեց իւր տիրոջ՝ Միրան թագաւորի Փէրիխանում աղջկալ վրայ: Այդ երկու ուժեղ երիտասարդ

ախոյիեանները՝ իրար երկար ժամանակ օրոքելուց  
ու տատանելուց յետով, վերջապէս Շահզադէին լա-  
ջողուեց՝ իրեն կեղծ տւագ նաժիշտ ձեւցնող Փէ-  
րիխանումին գետին տապալել, և հէնց ուզում  
էր բարկութիւնից՝ տեղն ու տեղը մահացնել այդ  
չքնաղ արարածին իրեն ախնալիսի յանդիմանական  
խօսքերի համար, բայց նորն այդ ըոսէին Մի-  
րան թագաւորի Փէրիխանում աղջիկը՝ գետնի վրայ  
թաւալուած դրութեան մէջ, յանկարծ բարձրագոչ  
ծիծաղեց և օդային համբոյքներ տալով, սիրալիր  
ձայնով ասաց.

— Կեցցես, կեցցես, դու անվեհեր և հսկայ քաջ  
պատանի, համբերիր և մի սպանիր ինձ: Լաւ՝ տես,  
քո առաջ ընկածը՝ քո տէր Միրան թագաւորի հա-  
րացատ աղջիկն է, և ոչ աւագ նաժիշտը, ինչպէս  
ասացի: Ես մեղաւոր եմ քո առաջ, ներիր ինձ և  
նորից ինդրում եմ, մի սպանիր: Մի գուցէ գու-  
չը հաւատաս իմ խօսքերիս ճշտութեանը և ան-  
կեղծութեանը, ահա, տես ճկոյթիս թագաւորա-  
կան զմրուխտէ մատանին, որ և կարծեմ բաւա-  
կան կը լինի քեզ՝ համոզուելու ու հաւատալու  
խօսքերիս ճշմարտութեանը և իսկապէս կընդու-  
նես ինձ ախնալիս, ինչպէս ասացի: Անունս էլ  
Փէրիխանում է:

Երբ Շահզադէն իւր առաջ թաւալուած այդ  
չնաշխարհիկ գեղաշեալ աղջիկանից լսեց իւր տիրոջ  
Միրան թագաւորի աղջիկ լինելը և տեսաւ նրա  
ճկոյթ մատի վրայ թագաւորական ոսկեալ թանկա-  
գին զմրուխտէ ակներով զարդարուած գոհարիկ և

արեգակի պէս փայլուն մատանին, շատ վախեցաւ,  
և իսկոյն շտապով վերկացնելով գետնից, մի քանի  
անգամ խոնարհ գլուխ տուեց և ներողութիւն խնդ-  
րեց: Փէրիխանումը մի փոքր ուշքի գալով, դար-  
ձաւ Շահզադէին և ուրախ ուրախ ասաց.

— Կեցցես, կեցցես, ահա, ալժմ իրաւ կարո-  
րողացայ ճարել սրտիս ուզած հերոսիս: Գիտես,  
սիրելիս, ես քեզ հետ դիտմամբ կառի բանուեցի,  
ուզում էի ոլժդ փորձել: Փառք և պատիւ քո քա-  
ջութեանդ: Ես քեզ լաւ ճանաչում եմ, ով իմ հս-  
գոյս հատոր քաջ պատանի, գումեր պալատի բա-  
դերի ու հաւերի վերակացնեն ես, անունդ էլ Շահ-  
զադէ է, ալո՞ շատ լաւ ճանաչում եմ: Լոիր, սի-  
րելիս, ես ուխտած էի, որ կեանքումս միայն  
նրան ամուսին ընտրեմ ինձ համար, ով որ ինձ  
իւր ոլժովը կը յաղթէր, իսկ չյաղթողը՝ պէտք է  
անպայման սպանուէր՝ իմ առաջուց արուած պայ-  
մանիս համաձայն: Եւ երևակալիր, սիրելիս, քա-  
նի, քանի երիտասարդ թագաժառանգներ ու նա-  
զիր վեզիլներ ինձ հետ ամաւսնանալու տենչանքով  
բռնուած, պարտութիւն են կրել ինձանից և զոհ  
են գնացել ձեռքովս: Իսկ այսօր էլ՝ բաղդի բեր-  
մունքով, քոյլերիս հետ՝ պարտիզով անցնելիս,  
յանկարծ նկատեցի քո ոսկէգանգուռ մազերն ու  
երեսիդ գեղեցկութիւնը, շատ հաւանեցի ու ասա-  
ցի ինքս ինձ: «Ա՛յս, որքան երջանիկ եմ լինելու  
ես, որ եթէ այս քնած երիտասարդը՝ այսքան գե-  
ղեցկութիւնների հետ ունենալ և ինձանից աւելի  
ոլժ: Ես սրան անպատճառ ամուսինս կը դարձ-

Նեմ»:—Եւ ճիշտ հենց իմ խօսքերիս համենատ էլ կատարուեց: Այս օրուանից դու, իմ սիրելի Շահ զադէ, ուխտադրութեանս համաձայն՝ դառնում ես իմ ապագայ ամուսինս, և ահա, այս իմ խօսքերիս գրաւականը՝ թող լինի իմ այս ջերմագին համբոլները: Շահզադէն և Փէրիխանումն երկար ժամանակ սկսեցին ջերմ համբոլներ տալ իրար: Քիչ լետոյ Փէրիխանումը կամեցաւ բաժանուել Շահզադէից և գնալ քոյրերի մօտ՝ որովհետեւ շատ ուշացել էր, բայց Շահզադէն թոյլ չը տուեց իրենից հետանար, այլ նստացրեց ծնկների վրայ և շուտ-շուտ համբուրելով գեղեցիկ աչքերից, սկսեց պատմել իւր ով լինելը և գլխին անցածները մանրամասնօրէն: Փէրիխանումն երբ լսեց իրենց բաղերի ու հաւերի վերակացուից, որ նա ևս նոյնպէս թագաւորի որդիի եղել, շատ և շատ ուրախացաւ: «Նա սիրալին այնպիսի մի բուռն փափառվ լցուեց, որ քիչ առաջ՝ թէ որ Շահզադէն էր Փէրիխանումին ուժով պահում իւր մօտ և թոյլ չէր տալիս հեռանալ իրենից, ալժմ ինքը՝ Փէրիխանումը չէր ուզում բաժանուել Շահզադէից: Նրանք նորից սկսեցին բաժանուել հետո, վերջապէս Փէրիխանումը պատման առնելուց լետոյ, վերջապէս Փէրիխանումը պատրաստուեց բաժանուելու: Հանեց ձկոյթ մատից իւր զմբուխտէ ակներով զարդարուած ոսկէ մատանին և տալով Շահզադէի ձեռքն, ասաց: — Իմ սիրելի արքայազն իշխան և հոգոյս հատոր Շահզադէ, մի գուցէ իմ սիրալին համբոլնե-

ըլ ըլ բանականանան քեզ՝ որպէս նշան մեր ապագալ՝ սուրբ և անքակտելի ամուսնութեան, առ ուրեմն այս թագաւորական մատանին և պահիր քեզ մօտ ծածուկ, մինչև մեր պսակագրութիւնը: Փէրիխանումն այս խօսքերն վերջացնելով՝ կրկին և կրկին մի քանի անգամ համբուրելով իրար, երկու սիրալին զոյգերին հազիւ-հազ լաջողուեց բաժանուել իրարից: Փէրիխանումը՝ կամաց կամաց այս ու այն կողմը նայելով, յանկարծ գուրս վազեց այնտեղից ու արագ-արագ քայլուած քներով ուղղուեց դէպի քոյրերի սպասած տեղը: Փէրիխանումը՝ թագստեան տեղից գուրս գալուն պէս՝ տեսաւ որ քոյրերը շատ հեռու՝ սպասում էին իրեն և իրենց վախկոտութիւնից սիրտ չէին արել գալուայն տեղը, որտեղ ինքը և իւր սիրելի Շահզադէն՝ սիրոյ համբոլներ էին առնում իրարից, ուստի և քոյրերը՝ այդ օրուայ Շահզադէի և Փէրիխանումի ամուսնական դէպքի մտսին՝ բոլորովին ոչինչ չը կարողացան իմանալ: Փէրիխանումը քոյրերին մօտենալուն պէս՝ կեղծ լոգնածութիւն առաջ բերելով, կիսաշնչասպառ ձայնով ասաց: — «Ու՞ֆ, կատարելապէս մեռայ. գիտէք, ինչ պատճառով ուշացայ, մի փոքրիկ՝ շատ սիրուն նապատակի պատճառով: Նատ սիրունիկ էր. ուզեցի բըռնել, բայց ափսնս, որ փախաւ. ընկայ լետեմիցն, ուզում էի ողջ-ողջ որսալ, բայց չը լաջողուեց, նորից վազեցի լետեմիցն արագ քայլերով, շատ չար չարուեցի ու տանջուեցի այդ ճարպիկ կենդանու չետեմից վազվելուց և ոչ մի կերպ դարձեալ չը

կարողացալ բռնել: Ուզում էի ձեզ համար ընծայ  
բերել բայց չեղաւ, յոյս ունեմ, որ յետևեալ ան-  
գամին անպատճառ կը բռնեմ և կը բերեմ ձեզ: —  
Քոլը բը՝ Փէրիխանումի ալդ հնարովի խօսքերը՝ իս-  
կութիւն համարելով, հաւատացին, և այդ պատ-  
ճառով էլ ոչինչ չը կասկածեցին նրա վրայ:  
Նահզադէի հետ պատահած սիրոյ գէպքի վե-  
րաբերմամբ, Փէրիխանումը հոգուով ու մարմնով  
նուիրուեց նրան և շարունակ մտածում էր Նահ-  
զադէի մասին, ասելով.  
Այս, երբ պէտք է արդեօք հայրա՝ քայլե-  
րիս ամուսնութեան տալ, որ ես էլ արժանունամ  
իմ գեղեցիկ և սրտիս սիրած ու պաշտած Նահզադէիս:  
Փէրիխանումը իրեն համար սովորական բան  
էր գարձրել հետեւեալը, Երբ քոլը իրենց սովո-  
րութեան համեմատ գնում էին պարտէզը զբու-  
նելու, նա խկոյն հեռանում էր քոլը իրեց, յաւա-  
նելով՝ որ իբրև նապաստակ կամ ուրիշ փոքրիկ կեն-  
դանի է ուզում բռնել ու սպասեն մէկ տեղ մին-  
չե վերագառնալը, և շտապով մտնելով պարտի,  
զի խորքի մացառուտները, վազէվազ հասնում էր  
Նահզադէի հետ ժամադրած տեղը և նրանից սի-  
րախն ջերմ համբոլներ էր քաղում և սրանով  
բաւական չլինելով, իրար գրկախառնուում էին և  
երկար ժամանակ իրար հետ սիրոյ ծարաւը լու-  
յակեցնելուց յետով, հազիւհազ կարողանում էին  
իրարից բաժանուել:  
Փէրիխանումի և Նահզադէի սիրախն յարաբե-  
րութիւնների վրայ, ոչ ոք չէր կասկածում և որ-

աեզից կարող էին կասկած տանել, քանի որ գաղտ-  
նի էր կատարւում այդ երկու սիրոյ կրակով բըոն-  
կուած արքայազունների տեսակցութիւնը և միայն  
Սստուծուն էր յայտնի և ուրիշ ոչ ոքի:  
Ալսպէս անցան տալիներ:

Փէրիխանումի մտածութեան առարկան շա-  
րունակ Նահզադէն էր: Սուաջուալ նման որսին ա-  
ռաւելի սիրահար չէր լինում: Առաջ, երբ ամեն օր  
էր որսորդութիւն անում, Նահզադէի հետ սիրահա-  
րութիւնից յետով՝ շաբաթական 2—3 անգամ հազիւ  
էր որսորդութեան գնում: Օրէցօք Փէրիխանումը նի-  
հարանում էր և թուլանում, բայց այնուամենայնիւ  
իրեն ամենայն զգուշութեամբ պահում և զապում էր,  
որպէս զի ոչ ոք կասկածանք չը տանէին իւր վրայ:  
Մէկ օր էլ Փէրիխանումը՝ պարտիզի մէջ զբու-  
նելիս՝ քոլը իրեց հեռանալով, շտապով և ուրախ-  
ուրախ վազելով՝ եկաւ իրենց սովորական ժամա-  
դրած տեղը, և Նահզադէի ճակատից մի քանի  
անգամ համբուրելով, ասաց:  
— Ուրախացինը, սիրելիս, ես այսօր իմ աւագ-  
նաժիշտից ստորգ իմացալ, որ հայրս այս մօտիկ  
օրերս մտադրուել է և իրօք կամենում է արժա-  
նաւոր փեսայացուներ հրաւիրել քոլը իրիս ամուս-  
նութեան համար և Սստուծով՝ մենք էլ շուտով  
կարժանանանք մեր այսքան երկար տարիների սըր-  
բութեամբ և անբիծ պահպանած կենակցութեան  
քաղցր և երջանիկ ամուսնական միաւորման:  
Եւ խկապէս Փէրիխանումի այդ խօսքերը շու-  
տով կատարուեց:

Փէրիխանումի այս խօսքերից մի քանի օր անց, ահա, մէկ օր էլ, Միրան թագաւորը հաւաքում է իւր պալատի ժողովարանի դահլիճում՝ բոլոր պալատականներին, և յայտնում է որ իրեն աղջկերանց ժամանակը հասած լինելով, ուզում է ամուսնացնել, և սրա համար պէտք է ուղարկուեն աշխարհի ամեն ծալրեր՝ մունետիկներ և գրութեամբ հրովարտակներ, յայտնելու թագաւորների քաջ և մեծ ոյժի տէր ժառանգներին և նազիր-վեզիրներին, որ նրանք իւր պալատը հաւաքուեն Միրան թագաւորի աղջկերանց ընտրութեան և նրանց հետ ամուսնանալու նպատակով:

Հաւաքուեցան աշխարհի ամեն ծալրերից գեղեցիկ և ուժեղ թագաժառանգներ Միրան թագաւորի պալատում և մեծ խնճոյք սարքեցին: Եկան նոյնպէս Միրան թագաւորի երեք աղջիկներն իրենց հօր Միրան թագաւորի կարգադրութեան համեմատ, գեղեցիկ ու նուրբ մետաքսեայ հանդերձներ ու հալաւներ հագած և գոհարիկ զարդարանքներով պճնուած: Քալով դահլիճը՝ բազմեցին հանդիսականների մէջ տեղում գտնուած գահաւորակի վրայ, իսկ բազկաթուաների վրայ նստուեցին Միրան թագաւորն ու թագուհին: Երբոր բոլոր հրաւիրեալները նստուեցին կարգով իրենց պատկանած տեղերը, Միրան թագաւորն ոտքի կանգնեց ու դառնալով իւր աղջկերանց, սիրալիր և քընքոյշ ձայնով ասաց.

—Ահա, իմ սիրելի զաւակներս, ձեզ ուզում եմ ալժմ բաղդաւորել: Այսքան քաջ և ընտիր թա-

գաժառանգներ ու նազիր վեզիրներ ձեզ համար են հաւաքուել: Ո՛վ որ ձեզանից սրտով՝ ումը կը սիրէ և իրեն համար յարմարաւոր ամուսին կը ճանաչի, թող վերկենալ տեղից ու գնայ իւր ընտրած ապագայ ամուսնացուի կողքին կանգնի:

Միրան թագաւորի մեծ ու միջնակ աղջկէրքը իրենց հօր՝ այսպիսի խօսքերը լսելուն պէս, իսկոյն նազ-նազելով տեղներից վերկացան և յամրաքալ սկսեցին դահլիճի մէջ շրջել շարունակ այս ու այն կողմը նայելով: Նատ մանգալուց և չորս բոլորքը լաւ պարտելուց յետոյ՝ վերջապէս ընտրեցին իրենց համար ապագայ ամուսիներ: Միրան թագաւորի մեծ աղջիկը գնաց և կանգնեց մէկ երիտասարդ գեղեցիկ հագնուած նազիրի կողքին, իսկ միջնակն էլ գնաց և կանգնեց վեզիրի կողքին: Մնաց Միրան թագաւորի փոքրիկ աղջիկ Փէրիխանումը տեղն ու տեղը նստած, որովհետև ոչ ոքի չը հաւանեց, և ումը կը հաւանէր և կընտրէր իրեն փեսալացու, բացի իւր սիրելի ու պաշտելի Նահպագէից աւել, որն որ նոյն իսկ այդ ըսպէին չկալ ալդտեղ հրաւիրեալների մէջ: Բոլոր հրաւիրեալ իշխանազուները մեծ անհամբերութեամբ սպասում էին չքնաղ Փէրիխանումի փեսալացուի ընտրութեանն, և մտածում էին՝ թէ ո՞լ արդեօք իրենցից բաղդ կունենայ ալդպիսի մի քնքոյշ և գեղաշեալ արարածի հետ ամուսնանալու, բայց իզուր: Փէրիխանումը նստած տեղից բոլորովին չը շարժուեց և սուս ու փուս նայում էր այս ու այն կողմը: Միրան թագաւորը շատ զարմացաւ այս բանի վերայ ու դառնալով Փէրիխանումին՝ քաղցրաժամկետ ասաց.

— Իսկ դու, հոգեակս, ինչու չես ընտրում  
քեզ համար փեսացու: Այսքան բազմաթիւ նշանա-  
ւոր պալատականների, թագաժառանգների ու նա-  
զեր վեզիրների մէջ, միթէ ոչ ոքի չես հաւանում:  
Ասա, սիրելի զաւակս, եթէ այստեղ չկայ քո սրտի  
ուզած երիտասարդը, ասա, ուրիշներին Հրաւիրել  
տամ, ասա, ասա, մի ամաչիր, ասա, ումն ես ու-  
զում հրաւիրեմ: Գուցէ սրտիդ ընտրելին ուրիշ է.  
չէ որ դու էլ պէտք է անպատճառ ընտրես քեզ  
համար մէկին ամուսին, որպէս զի իմ կենդանու-  
թեանս օրով, ես ձեզ երեքիդ միասին իմ ձեռքովս  
պատկեմ ու բազդաւորեմ:

Փէրիխանումն ոտքի կանգնեց ու խոնարհ  
գլուխ տալով հօրն, ասաց.

— Հայրիկ, ճիշտն ասած, ես այստեղ եղող  
հրաւիրեալներից ոչ ոքի չեմ հաւանում, հրամանք  
տնիր, որ մեր պալատի մէջ ծառայող բոլոր մարդ-  
կերանց հրաւիրեմ այստեղ, թէ պաշտօնականներին,  
թէ սպաններին ու զինուորներին և թէ հասարակ  
ծառաններին:

Միրան թագաւորը Փէրիխանումին իրաւունք  
տուեց հրաւիրելու նրանց, սրոնց որ ինքն էր ցան-  
կանում: Դահլիճում եղող առաջուայ արքայազուն-  
ներն և ուրիշ ընտրեալ բարձրաստիճան երիտա-  
սարդները՝ հեռանալով դահլիճից պալատի զանազան  
սենեակները, Փէրիխանումի սլատուէրով՝ ալժմ ե-  
կան դահլիճ՝ պալատի բոլոր ծառայողները՝ բարձր  
պաշտօնեաններից սկսած մինչեւ ամենայետին ծա-  
ռան: Դրանց թւումն էր և մեզ ծանօթ բազերի

ու հաւերի վերակացու Շահզադէն, որն եկել էր  
դահլիճ ամենօրեալ հին հասարակ զորերով, իսկ  
գլխին էլ ծածկած ունէր իւր սովորական ոչխարի  
մարթու գլխարկը: Շահզադէն դահլիճը մտնելուն  
պէս, չը համարձակուեց բարձրաստիճան պաշտօ-  
նականների ու զօրականների մէջ խառնուել, այլ պա-  
լատի միւս հասարակ սպասաւորողների հետ միասին՝  
կանգնեց դրան մօտ ու սկսեց այնտեղից սրտատրով  
նայել իւր պաշտելի ու սրտի սիրեկան Փէրիխանու-  
մին, որը շքեզ արքայափալել նուրբ մետաքսեալ  
հանդերձներով զարդարուած՝ որպէս լաւերժահարս,  
նստած էր գահաւորակի վրայ միայնակ:

Դահլիճում հաւաքուող հասարակութիւնը՝ բո-  
լորն էլ իրենց պաշտօններին համապատասխանող  
տեղերը նստուեցին կարգով: Տիրեց դահլիճի մէջ  
ընդհանուր լուութիւն: Ամենքի աչքերն դարձուած  
էր Միրան թագաւորի փոքրիկ աղջիկ Փէրիխանու-  
մի վրայ և մեծ անհամբերութեամբ սպասում էին  
թէ վերջապէս՝ ումը պէտք ընտրի նա իրեն հա-  
մար վեսացու: Փէրիխանումն երկար ժամանակ  
այս ու այն կողմը նաևելուց յետույ, վերջապէս նը-  
կատեց դահլիճի դրան մօտ իւր սիրեկան և վազուց  
ընտրած ամուսնուն—Շահզադէին և իսկոյն դա-  
հաւորակի վրայից վեր թուշելով ուրախուրախ՝ դահ-  
լիճում հաւաքուած հրաւիրեալ պաշտօնեանների ու  
զօրականների միջով՝ նազիկ քայլերով անցնելով,  
մօտեցաւ դրան մօտ կանգնած իրենց բազերի ու  
հաւերի վերակացու Շահզադէին, առանց ամաչե-  
լու և քաշուելու այնտեղ եղողներից՝ համբուրեց

ճակատից ու ձեռքից ամսւը բռնելով՝ բերեց իւր  
հօր մօտ և բարձր ծիծաղագոչ ձախով ասաց,  
— Ահա, հալրիկ, սա է իմ ընտրեալս և ապա-  
գայ ամուսինս և բացի սրանից, ուրիշ ոչ ոքի  
չեմ ուզի:

Դահլիճում հաւաքուած բարձրաստիճան՝ Փէ-  
րիխանումի անհուն սիրոյն փափագող և յուսող ա-  
պագայ փեսացու երիտասարդներները Փէրիխա-  
նումից՝ այսպիսի մի անսպասելի ստոր արարմուն-  
քը տեսան՝ նրանց անհաճոյ թուաց ալս և շատ էլ  
տըխրեցին: Այս բանը սաստիկ վերաւորեց նամանա-  
ւանդ Միրան թագաւորին, որը բոլորովին չէր սպա-  
սում իւր աղջկանից այդ տեսակ իրեն արքայական պա-  
տուին հակասող ստոր և ծաղրական վարմունք: Մի-  
րան թագաւորն ալնպէս էր հաւատացած, որ իւր  
փոքրիկ աղջիկն աւելի արժանաւորագոյնին կընտրէր  
իրեն համար փեսացու, քան իրեն մեծ ու միջ-  
նակ աղջկէրքը ընտրեցին, բայց Միրան թագաւորի  
սպասածին հակառակ, Փէրիխանումը միայն իրենց  
բագերի ու հաւերի վերակացու Շահզագէին ընտրեց  
իրեն ամուսին: Փէրիխանումից այսպիսի անսպասելի  
դէպքը՝ ոչ թէ միայն Միրան թագաւորին և թա-  
գուհուն վերաւորեց, այլ և Միրան թագաւորի  
նորընտրեալ նազիր-վեզիր փեսալացուներին ևս վըր-  
դովեց, և նրանք այլ ևս չը կարողանալով իրենց պա-  
տուին արհամարտնք պատճառող վըդովմունքը զըս-  
պել, անարգ խօսքերով նախատեցին Փէրիխանու-  
մին և խելագարի տեղ ընդունելով՝ սկսեցին ծաղ-  
րել այսպէս ասելով.

— Ա՛յ դու խելառ և դիժ, ամօթ քեզ, որ  
դու քո թագաւորական տոհմը ծաղըի ու ծանակի  
առարկայ շինեցիր ուրիշ թագաւորների առաջ: Մի-  
թէ այսքան՝ թէ առաջուայ արքայազն իշխանա-  
զունների և թէ ներկայ հաւաքուած պալատի ընտ-  
րեալ բարձրաստիճան հրաւիրեալներից՝ ոչ ոքի չը  
կարողացար քեզ համար փեսացու ընտրել, որ ձեր  
պալատի բագերի ու հաւերի վերակացուին ամու-  
սին չը դառնալիր և քո ծնողների ու մեր անունը  
չը խալտարակէիր: Ամօթ քեզ, հազար ամօթ, որ  
դու, քո այդ ստոր արարմունքովդ, քո հօրն ու  
մօրդ, ծերութեան հասակում, տրտմութիւն ու  
վիշտ պատճառեցիր և սեերես ու խալտառակ ա-  
րեր նրանց օտար տէրութունների առաջ:

Դահլիճում հաւաքուած բարձրաստիճան պա-  
լատականներիցն էլ շատերը նոյնպէս՝ խրատական  
և արհամարհական խօսքեր ասելով Փէրիխանու-  
մին, ստիպում էին հեռացնել իրեն ընտրած փե-  
սացուից, բայց իզուր, ոչ մի հնարքով չը կա-  
րողացան համոզել և հեռացնել նրան Շահզագէից:  
Փէրիխանումը բոլորին էլ այս էր ասում.

— Իզուր էք ձեզ գլխացաւանք պատճառում։  
ինչ ուզում էք ասէք, ես ուրիշ ոչ ոքի չեմ ու-  
զում ինձ ամուսին ընտրել, բացի Շահզագէից, միայն  
սա է իմ ընտրածս, իմ սրտիս սիրուծ փեսացուս։  
Պէտք է մինչև մահս ապլեմ օրա հետ միասին և  
պէտք է մեռնեմ դարձեալ Շահզագէիս հետ միա-  
սին։ Եթէ դուք ոլժով ինձ ուրիշի վրայ նշանէք  
և ստիպէք որ նրան ամուսին ընդունեմ, լաւ ի-

մացած եղէք, որ այդ դէպքում, թէ ինձ և թէ ձեր ընտրած փեսացուին կը սպանեմ և լաւիտես նական կը զրկուէք բոլորեքեանքդ՝ ձեր սիրեցեալ Փէրիխանումից: Այս է իմ վերջնական վճիռս:

Փէրիխանումը շատ ուրախ էր՝ որ վերջապէս այդքան երկար տարիներ համբերելուց յետոյ այժմ հազիւհազ արժանի եղաւ իւր սրտին սիրելի և համակրելի քաջ Շահզադէին ու այդ բանի համար նրա սիրտն աւելի ու աւելի բոցավառում էր սիրալին վառ կրակով:

Դահլիճում իրարանցումը շարունակում էր: Բոլորեքեանքը համարեա Փէրիխանումի վրայ էին խօսում, բայց նա ոչ ոքի վրայ ուշագրութիւն չէր դարձնում և նրանց խօսակցութիւնը բոլորով վին ազդեցութիւն չէին անում նրա վերայ, այլ մըտքով սաւառնած էր իւր և Շահզադէի լաւիտենական սուրբ պսակի կապով միաւորեցման գաղափարին:

Միրան թագաւորը երբ տեսաւ որ իւր փոքրիկ Փէրիխանում ազջիկն ոչ ոքի խօսքին չը զիշանեց և իւր փեսացուի ընտրութիւնն անքակտելի թողեց, շատ բարկացաւ, և հրամայեց ծառաներին, որ շուտով հանեն Փէրիխանումի վրայից արքայավալել բեհեզեալ հանդերձներն ու պալատից դուրս վռնդեն իւր նշանածով միասին:

Միրան թագաւորի պատուէրը՝ հրամախուածի պէս իսկոյն կատարուեց:

Հանեցին Փէրիխանումի վրայից մարդարտահիւս նուրբ մետաքսեալ հալտւները, հագցրին հին պատառոտած շորեր և արհամարանքով պա-

լատից գուրս արին: Միրան թագաւորի հրամանով յատկացրին նլանց պալատից շատ հեռու, մի փոքրիկ սենեակ, որի մէջ միայն գիշերում էին ծառաներն և ահա այդ սենեակի մէջ հաստատեց Փէրիխանումը իւր բնակութիւնն՝ իւր սիրելի նահագէի հետ միասին:

Միրան թագաւորն իւր մեծ և միջնակ աղջկերանց համար փառահեղ հանդէսով հարսանիք արեց, ու եօթն օր, եօթ գիշեր, հարսանիքի ուրախութեան տօնախմբութիւն սարքեց: Միրան թագաւորը նորապսակներին իւր ձեռքով բաղդաւորելուց յետոյ, օրհնեց և համբուրելով նորապսակների ճակատից, բնակեցրեց նրանց պալատին կից շքեղ ու զարդարուն սենեակներում:

Անցաւ մի քանի տարիներ:

Մէկ օր Միրան թագաւորը սաստիկ հիւանդացաւ և ընկաւ անկողին: Խոկոյն հրաւիրեցին բժիշկներ. բայց չնայած բժշկական օգնութեան, Միրան թագաւորի դրութիւնն աւելի ու աւելի դժուարանում էր, ցաւն աւելի սաստիկանում և աւելի վտանգտոր կերպարանք էր ստանում: Բժիշկները տեսնելով, որ ոչ մի բժշկական օգնութիւն չեն կարողանում հասցնել և Միրան թագաւորի դրութիւնն աւելի ու աւելի վատթարանում է, մօտեցան թագուհուն և խոնարհաբար երեք անգամ գլուխ տալով՝ տիսուր կերպարանքով այս խօսքերն ասացին.

— Թագուհին ապրած լինի, ճիշտն ասած, մենք մեր գեղերով ոչինչ չենք կարող օգնել հիւանդին,

որովհետև սրա ցաւն, ինչպէս ստորդ քննելուց իմացանք, անբժշկելի և երկարատև է։ Աւելի լաւ է, դիմեցէք մի ուրիշ որևէ է միջոցի։ Մի գուցէ գտնուի մի այլ ուրիշ անձնաւորութիւն, որը կարողանայ իմանալ սրա ցաւի բժշկութիւնը։ Մենք նորից կը կնում ենք, որ ոչինչ չենք կարող օգնել մեր զեղերավ։

Բժիշկները թագուհուն այս խօսքերն ասելուց յետով, նորից երեք անգամ խոնարհ գլուխ տուեցին ու հեռացան պալատից։

Պալատի մէջ եղողները, մեծից մինչև փոքրը՝ երբ բժիշկներից իմացան Միրան թագաւորի հեւանդութեան անբուժելիութեան լուրը՝ սարսափահար եղան և մտածելով՝ որ այլ ևս Միրան թագաւորին ոչ մի օգնութիւն չի լինի, լուսները կտրեցին ու սկսեցին բոլորն էլ աղիողորմ սգալ ու լաց լինել։

Պալատի ծառաներից մէկը, որը մի ութսունամեայ ծերունի էր և Միրան թագաւորի պալատում գոնապանի պաշտօն էր վարում, երբ լսեց որ իւր տէր Միրան թագաւորին բժիշկները չեն կարողանում բժշկել և խորհուրդ են տուել ուրիշ միջոցի դիմելու, մէկ օր Միրան թագաւորի նորապսակ նազիր-վեզիր վեռաներին մօտենալով, ասաց։

— Ձերդ գերազանցութիւն, ես շատ վաղուց գետեմ, որ մեր մալրաքաղաքում ապրում է մէկ պառաւ կախարդ կին, որը իւր լատուկ կախարդական արհեստագիտութեամբ շատ և շատ հրաշքներ է գործում. ինչպէս օրինակ — չբերք կանանց երե-

խայ է տալիս, մարդ և կնոջ իրարից բաժանում է, երկու իրար ատելի անձնաւորութիւններ իրար սիրահարեցնում է, զանազան դժուարին ու անբուժելի հիւանդներին առողջացնում է և այլն և այլն։ Հիմայ, Ձերդ գերազանցութիւն, խորհուրդ կտայի Ձեզ, որ մի կերպ գտնէիք այդ կախարդ պառաւ կնոյն և մի գուցէ Աստուծով գա կարողանայ բժշկել մեր տէր և իշխան թագաւորին։

Երբ Միրան թագաւորի նորապսակ նազիր-վեզիր վեսաները ծերունուց այս խօսքերը լսեցին շատ ուրախացան, և ներկայանալով հիւանդ Միրան թագաւորին ու թագուհուն, պատմեցին կախարդ պառաւ կնոջ մասին։ Հիւանդ Միրան թագաւորի մօտ գտնուողները՝ թէ թագուհին, թէ նորապսակ Միրան թագաւորի աղջիկները և թէ պալատականները, երբ այդ բանը լսեցին, շատ ուրախացան և իսկոյն մարդիկ ուղարկեցին մալրաքաղաքի ամեն կողմը, որ հարց ու փոք անեն ամենքից և անպատճառ գտնեն կախարդ պառաւին՝ և բերեն պալատ։

Ծառաները գնացին և քիչ ժամանակից յեւվերադառնալով պալատ՝ բերին կախարդ պառաւին էլ և ներկայացրին հիւանդ Միրան թագաւորին։

Կախարդ կինը հիւանդ թագաւորին ուշադրութեամբ լաւ զննելուց յետով, դարձաւ թագուհուն և երեք անգամ խոնարհ գլուխ տալով, տըխուր գէմքով ասաց։

— Թագուհին ապրած կենայ, սրա հիւանդութիւնը, ճիշտն ասած, անբժշկելի է և ոչ մի բժիշկ

չի կտրող օդնիւ սրան։ Թագաւորի ցաւը շատ  
վատ ցաւ է։ Միայն այս կասեմ, որ սրան կա-  
ռողջացնի միմիալնելթ հրեղէն ալծեղջիւրի ան-  
մահական կաթը, որը շատ և շատ դժուար ճա-  
րուելու է։ Այս իմ ասած ալծեղջիւրը դժուար է  
մեր մալրաքաղաքի սահմաններնց սկսած՝ քառա-  
սուն սարի ետև գտնուող մի խոր անդունդի մէջ  
քարաժայուում։ Այդ քարաժայուը ամսէնը մի ան-  
գամ Աստուծոյ հրամանով բացւում է ու գարձեալ  
կրկին նորից շուտով փակւում, իսկ հրեղէն ալծեղ-  
ջիւրը միշտ հենց ալդ բացւող օրերն է կերակ-  
րում իւր ձագերին։ Հիմայ, ես Զեզ խորհուրդ  
կտամ, որ եթէ Զեր պալատականների մէջ կը գրտ-  
նուի մի որ և է քաջ և անվախ երիտասարդ,  
թող գնալ իմ ասած հրեղէն ալծեղջիւրի բնակա-  
վալը և աշխատի մի կերպ բերել անմահական  
կաթը, որ և խմացնելով հիւանդին, իսկոյն կա-  
ռողջանալ։

Կախարդ պառաւն այս խօսքերն ասելուց յե-  
տոյ, նորից երեք անգամ խոնարհ գլուխ տուեց  
թագուհուն ու պալատականներին և դուրս գալով  
հիւանդի սենեակից՝ գնաց իւր կացարան։

Միրան թագաւորի նորապսակ նազիր-վեզիր  
փեսաները՝ կախարդ պառաւի ասած հրեղէն ալ-  
ծեղջիւրի անմահական կաթ ճարելու վերաբերմամբ՝  
մի փոքր ժամանակ խոր մտածմունքների մէջ  
ընկլմուեցան և շատ էլ տիրեցին, որովհետև  
գլխաւորապէս իրանք պէտք է աշխատէին այդ  
անմահական կաթի համար։ Բայց Ենչ կերպով

պէտք է ճարեկին, ինչպէս պէտք է գնային քա-  
ռասուն սարի ետև գտնուող խոր անդունդն և  
կալծակի արագութեամբ՝ կախարդ պառաւ կնոջ ա-  
սած քարաժայուն մտնելով, այնտեղից հրեղէն ալ-  
ծեղջիւրի անմահական կաթը բերեկին, ահա, սրանք  
էին Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաների մը-  
տածութեան ու տիրութեան պատճառը։

Թագուհին և Միրան թագաւորի նորապսակ  
աղջիկները՝ հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթ  
ճարելու համար, յոյսները գրել էին միմիալն ի-  
րենց սիրելի նազիր-վեզիրների վրայ, և խնդրեցին,  
որ անպատճառ գնան և ինչպէս որ լինի, մի կերպ  
աշխատեն այդ անմահական կաթը բերել։

Նրանք թագուհու և իրենց ամուսիների աշ-  
քին քաջ և անվախ երեւացնելու համար և իրենց՝  
բոլոր պալատականների առաջ չը ստորացնելու ու  
պատուի արժանիքից չը զրկուելու պատճառաւ,  
չը կարողացան նրանց խնդիրքը մերժել և խոս-  
տացան, որ անպատճառ կը ճարեն ու կը բերեն  
կախարդ պառաւ կնոջ ասած անմահական կաթը։ Քիչ  
յետոյ ճանապարհի պատրաստութիւններ տեսնելով,  
թագուհուն, իրենց ամուսիներին և բոլոր պալատա-  
կաններին՝ սիրալիր հրաժեշտի ողջոյն տուին և դուրս  
գալով պալատից, նստեցին ընտիր ձիաների վրայ  
և ճանապարհ ընկան կախարդ պառաւի ցոյց տու-  
ած ուղիով։

Շահզագէն՝ մէկ երեկոյ սովորական գործերը  
վերջացնելուց յետոյ, վերադառնում է իւր սենեա-  
կը և ասում է Փէլիխանումին։

— Հոգետկս, նոր համբաւ իմացել ես թէ ոչ  
Գիտես սիրելիս, ինչ կայ, ալսօր ստորդ իմացայ,  
որ հայրդ այս քանի օրերս սաստիկ հիւանդա-  
ցել է մի ինչ որ երկարատե ցաւով։ Բժիշկ-  
ները նրա ցաւի անբուժելութիւնն իմանալով՝ հե-  
ռացել են սպալատից, իսկ հիմալ էլ մեր ծերունի-  
դոնապանի սովորեցրած մի ինչ որ կախարդ պա-  
ռաւի յորդորանքով, քո նազիր վեզիր փեսաներդ-  
գնացել են քառասուն սարի ետև գտնուող խոր-  
տնդունդի մէջ մտնելու, և այնտեղ, այն անդուն-  
դի քարաժայուսմ ապրող հրեղէն ալծեղիւրից ան-  
մահական կաթ բերելու, բայց խելքդ էնչ է կըտ-  
րում, դու ինչպէս ես կարծում, նրանք կարճ են  
ճարել, ի հարկէ ոչ, երբէք։ Իսկ ես, այս ես, յոյս  
ունիմ Աստուածանից, որ վաղնեթիւ կերթամ ու  
դե հօր ինձ ընծայած հրեղէն նժոյգների շնորհիւ-  
մի քանի օրուայ ընթացքում կը ճարեմ։ Իսկ յե-  
տոյ տես, սիրելիս, թէ ես ինչ եմ անելու քո այդ  
անամօթ և լիրը փեսաներիդ, որոնք քեզ, սիրե-  
լիս, այս քեզ, խելագարի տեղ ընդունելով՝ այնպէս  
խայտառակութեամբ և անվալել ու անարդ խօս-  
քերով՝ պալատից դուրս արին։

Փէրիխանումը պատասխանեց։

— Հօրս հիւանդութեան մասին ես ոչինչ չէի  
գիտում։ Ճիշտ ես ասում, հիւանդացել է, այն,  
ես բոլորովին անտեղեակ էի։ Հօրս հիւանդութիւ-  
նը այս առաջին անդամ քեզանից եմ լսում, և  
եթէ հիմալ դու չասէիր, ես որտեղից կարող էի  
իմանալ, քանի որ ծնողներիս մօտ բոլորովին չեմ

գնում և կարիք էլ չունիմ գնալու և նրանց գոր-  
ծերի մէջ խառնուելու։ Այսուհետեւ ումն ինչ  
ուզում է, թող պատահի։ Ես այսուհետեւ բո-  
լորովին երբէք չեմ վիրաւորուի, որովհետեւ սիր-  
տը շատ ալրուած է նրանց արարմունքներից։  
Դու, սիրելիս, ինչպէս ասացիր, եթէ կարող ես,  
հենց վազնեթիւ ճանապարհ ընկիր անմահական  
կաթը ճարելու համար և ճարելուց լետոյ, տուր  
իմ անգութիւն և լիրը փեսաներիս, թող բերեն և  
բժշկեն մերձիմահ հօրս, վնաս չունի, բայց տշ-  
խատիր, սիրելիս, որ առանց մի որ և է նշանի ըլ-  
տան և ըլ թողնես նրանց հեռանալու, բայց բերիդ  
ու հաւերիդ ես կը սպասաւորեմ, ապահով եղիր։  
Միւա օրը ծէգ բացուելուն պէս, Շահզագէն  
վերցրեց ճանապարհի համար ուտելեղէններ և եր-  
կու դատարկ շիշ, գարսեց խուրջինի մէջ, շա-  
լակեց ձիու մէջքին, Փէրիխանումի շրթունքներից  
մի քանի անդամ սիրային համբուլներ տուեց,  
նստեց ձիու վրայ ու հեռացաւ։ Միրան թագաւորի  
մայրաքաղաքի սահմաններից շատ և շատ հեռու։  
Շահզագէն մօտենալով մէկ տափարակ ու կա-  
նաչ մարգագետնին, իսկոյն ձիուց ցած թուաւ,  
կապեց ձիուն ծառից, շիշերը խուրջինից հանելով  
գարսեց գրպանների մէջ, իսկ յետոյ ծոցից հա-  
նելով դե հօր ընծայուած հրեղէն նժոյգների մաղերի  
կապոցը, բացեց, հանեց կարմիր միագլխանի գեկ  
հրեղէն նժոյգի մազը, ծալրից մի փոքր արեց իսկ  
մնացեալ ալրածը դրեց կրկին ծոցն և իսկոյն մէկ  
ակնթարթում իւր առաջ յայտնուեցաւ կարմիր

նժոյգն իւր բոլոր պատերազմական զէնքերով։ Նահազադէն հէնց որ վեր առաւ նժոյգի վրայից զէնքերն ու ինքը զրահաւորուեցաւ, իսկոյն ինքն էլ կերպարանափոխուեցաւ և դարձաւ իսկ և իսկ միագլխանի վիթխարի կարմիր դե։ Նահզադէն հլ եղէն նժոյգի հետ սկսեց խօսել արաբերէն լեզուով ու տաց։

— Սիլերի նժոյգս, ուր գիտե՞ս, թէ ես ի՞նչ եմ ուզում քեզանից։ Մենք պէտք է շատ արագ թռիչքներով գնանք և մօտենանք քառասուն սարի ետև գտնուող խոր անդունդի մէջ գտնուած քարաժային և այնտեղից երկու շիշ հրեղէն ալծեղջիւ րի անմահական կաթ պէտք է բերենք իմ Միրան թագաւոր աներօշա համար, որը մէրձիմահ հիւանդ պառկած է անկողնում և սպասում է մեզ։ Այդ անմահական կաթը անպատճառ պէտք է ճարենք և բերենք, որովհետև աներս միմիայն դրանով է բժշկուելու։

Այս առաջարկութիւնը կարմիր հրեղէն նժոյգին թէև անհաճոյ թուաց, բայց ստիպուած համաձայնուեց և Նահզադէին իւր մէջքի վրայ առնելով՝ օդի մէջ սլացաւ և մէկ ակնթարթում հասցըց քառասուն սարի գլուխը։ Երբ Նահզադէն սարի գլխից ցած նայեց և տեսաւ անդունդը, շատ զարհուրեց, որովհետև մարդկային ոյժից ու կարողութիւնից շատ վեր էր այդ անդունդի մէջ մըտնելն և բացի դրանից կախարդ պառաւի ասած քարաժայոն անդունդի անհուն տարածութեան մէջ Նահզադէի աչքին անտեսանելի էր։ Առա մասին Նահզադէն երկար մտատանջութեան մէջ ըն-

կաւ և չէր կարողանում իմանալ թէ արդեօք՝ ո՞րտեղ է գտնուում կախարդի ասած քարաժայուը։ Կրկին Նահզադէն շատ երկար նայեց անդունդի զանազան կողմէրը՝ քարաժայուը տեսնելու, բայց դարձեալ ոչ մի կերպ չկարողացաւ տեսնել։ Վերջը, աչքերը լաւ լոգինելուց լետով, ուզեց մի փոքր հանգստանալ, ցած եկաւ նժոյգից և մի փոքր ժամանակ, սարի վրայ գտնուած վիթխարի ծառի ստորոտում նըստելով, նորից ընկաւ խոր մտածմունքների մէջ։ Երբ հրեղէն կարմիր նժոյգը տեսաւ Նահզադէին տիսուր, և մտածմունքների խոր անդունդի մէջ ընկղմուած, տաց։

— Վսեմափայլ թագաժառանդ և իմ ազնիւտէր, այս բանի մասին բոլորովին մի մտածիր։ Դեռ պէտք է աշխատէիր, այս տեսակ դժուար գործը յանձգ չառնէիր, բայց քանի որ խոստացել ես անպատճառ ճարելու, ալ ևս մտածելու բան չկայ. անհոգ եղիր, ես կաշխատեմ։ Ես շատ լաւ գիտեմ քարաժայուի ուր և որտեղ լինելը, իսկ գուըոլորովին հանդիս եղիր և մի վրդովուիր։ Առ ալժմ միայն ինդրում եմ, տէր իմ, որ եթէ կարելի է, թոյլ տուր ինձ ես մի փոքր հանգստանալ, իսկ լետոյ կտեսնեն՝ թէ ի՞նչպէս ես քեզ մէկ ակնթարթում հրեղէն ալծեղջիւրի բնակարանը կը տանեմ։

Նահզադէն հրեղէն նժոյգին բաց թողեց ազատ սարի գլուխը, իսկ ինքն էլ պառկեց ննջելու։ Երբ զարթնեց, քիչ կերպարուեց ճանապահի համար վերցրած ուտելեղէններից, կանչեց հրեղէն

նժոյգին իւր մօտ, որն աղատ շրջում էր սարի գաղաթին, նատեց վրան ու համբուրելով նժոյգի աչքերից, նորից խնդրեց, որ որքան կարելի է, շուտ տանի իրեն հրեղէն ալծեղջիւրի ընակարանը: Հրեղէն նժոյգը Նահզադէին խոնարհ գլուխ տուեց և շուտափոյթ իւր մէջքի վրայ առնելով նրան, նետի արագութեամբ ցած սլացաւ խոր անդունդի խորքը և բաւականին տարածութիւն անցնելով, վերջապէս Նահզադէին հասցրեց քարաժարմին այն ժամանակ, երբ քարաժարոն էլ ինքն-իրեն բացուեց: Ներս մտան քարաժարոը թէ չէ, իսկոյն քարաժարի ներսն ամբողջտպէս կարմիր փայլով փայլատակեց և ինչ տեսան. մի ահագին սարի մէծութեամբ ալծեղջիւր՝ կանգնած մէջ տեղում, իսկ նրա երկու ձագերն էլ կաթ էին ուտում իրենց մօր ծծերից: Նահզադէն իսկոյն կամեցաւ ցած թռչել նժոյգից ու վազելով հրեղէն ալծեղջիւրի մօտ, ուզեց կաթով լցնել իւր շշերը, բայց նժոյգը թոյլ չտուեց ցած գալու իւր վրայից, ասելով.

—Մի անիր, տէր իմ, սպասիր, ցած մի գալ վրայիցս, եթէ ոչ հրեղէն ալծեղջիւրը կը մահացնի քեզ: Լսիր, շուտով իմ վրայիցս ցած թռիր և անցիր քամակս, որպէս զի քեզ չը վնասի: Հիմայ ես հետը կռուի կը բռնուեմ, և մինչ մենք զբաղուած կլինենք կատաղի կռուով, դու իսկոյն սետի արագութեամբ կը սլանաս ալծեղջիւրի ձագերի մօտ և որքան ոյժ ունիս քո մէջ, աշխատիր մի կերպ հեռացնել նրանց ու փախարէնը՝ դու սկսիր կթել շշերիդ մէջը նրա կա-

թը: Նա, կատաղի տաք կրուի մէջ բոլորովին ոչինչ չի զգալ, թէ իրենից կաթ վերցնողը իւր ձագերն են թէ մի ուրիշ անձնաւորմւթիւն:

Այս տեսակ խօսքերը Նահզադէն հրեղէն նժոյգից լսելով, շատ ուրախացաւ և փառք տուեց Աստուծուն: Նուտով ցած թռաւ նժոյգից և քամակում թագնուելով՝ սպասեց երկու հրեղէն ախոյեանների կատաղի կռուի սկսուելուն: Վերջապէս կռիւր սկսուեց: Երկու հրեղէնները յարձակուեցան իրար վերայ մեծ ոյժով և սարսափելի ձայներ բարձրացնելով: Մինչ սրանք այսպէս կատաղի կռուով էին զբաղուած, Նահզադէն, ինչպէս ասել էր իւր հրեղէն նժոյգը, կալծակի արագութեամբ վազեց ալծեղջիւրի ձագերի մօտ, նրանց մեծ ոյժով հրեց հեռու, և ինքը սկսեց մեծ ճարպիկռութեամբ հրեղէն ալծեղջիւրի կաթը լցնել իւր շշերի մէջ: Նահզադէն ալս բռնորն ալնպիսի շուտափութութեամբ կատարեց, որ ալծեղջիւրը ճիշտ որ ոչինչ չկարողացաւ հասկանալ: Լցնելուց լետոյ, կրկին արագ թռիչք-ներով վազեց իւր նժոյգի քամակը, վեր թռաւ և նստեց նժոյգի վրայ և իսկոյն՝ առանց մի փոքր ուշանալու՝ գուրս նետուեցան քարաժարոից: Դրանց գուրս գալուն պէս, քարաժարոն էլ կրկին ինքն իրեն փակուեց: Հրեղէն նժոյգը նորից սկսեց ոլանալ օդի մէջ և մեծ ու ուժգին թռիչքներ անելով՝ արագ-արագ վերև բարձրացան անդունդից կրկին դէմի սարի գլուխը:

Երբ հասան սարի գաղաթը, Նահզադէն իսկոյն ցած թռաւ նժոյգից և համբուրելով աչ-

քերից, բաց թողեց սարի գագաթի անհուն և  
ընդարձակ տարածութեան մէջ հանգստանալու հա-  
մար, իսկ ինքն էլ ծունկ չոքելով, նորից փառք  
տուեց Աստուծուն և ասաց.

—Փառք քո Մեծութեան Տէր, այս բոլորը  
Քո Ամենազօր կարօղութեամբ կատարուեց, որով-  
հետև ես, առանց Քո օգնութեան, ինչ կարող էի  
անել և ոչինչ: Միմիայն Քո պահպանութիւնը կա-  
րողացաւ ազատել ինձ այնքան դժուար ճանապարհ-  
ներից: Եթէ Քո հովանաւորութիւնը չլիներ, գուցէ  
Ես և իմ հրեղէն նժոյգս էլ չազատուէինք այն քա-  
րաժայուից և յաւիտեան կոլծանուէինք, բանտար-  
կուած մնալով այնտեղ:

Նահզադէն սարի գլխին գտնուող վիթխարի  
ծառի տակ նստելով, մի քիչ կերակրուեց ու լաւ  
հանգստանալուց լետով, կանչեց հրեղէն նժոյգին  
իւր մօտ, համբուրեց աչքերից, նստեց վրան և  
խնդրեց, որ նորից աշխատի, որքան կարելի է  
շուտով անցկացնի իրեն քառասուն սարից, որով-  
հետև շատ ուշացել են և մի գուցէ իրենց ուշա-  
նալով՝ Միրան թագաւորը յանկարծակի վախճա-  
նուի և իրենց չարշարանքն ու աշխատանքը իզրու  
անցնի:

Հրեղէնը խոնարհ գլուխ տուեց Նահզադէին և  
նրա խնդրուածքի համաձայն՝ մէկ վայրկեանում  
Նահզադէին տարաւ-հասցըեց այն մարգագետինը,  
որտեղ կապուած էր նրա ձին ծառից: Նահզադէն  
ցած գտլով նժոյգից, բաց թողեց դաշտը, իսկ ինքն  
էլ մօտեցաւ իւր ձիուն՝ նրա մօտ հանգստանալու

համար: Նահզադէի վիթխարի գեական տեսքից  
ու կարմիր փայլից, ձին սկսեց խրանել, բայց ինչ  
կարող էր անել խեղճ անասունը, քանի որ ծառից  
ամուր կապուած էր: Հանեց գրպանից հրեղէն ար-  
ծեղջիւրի անմահական կաթով լի շշերը և դրեց  
ձիու մէջքի վրայ շալակած խուրջինի մէջ, ապա  
հանեց խուրջինից ուտելեղէններ, մի փոքր կերակ-  
րուեց ու պառկեց ծառի ստորոտում ննջելու: Ա-  
հա, հէնց այդ միջոցին տեսաւ, որ հեռուից շտապ-  
շտապ երկու մարգիկ են գալիս ձիաներով դէպի  
իւր կողմը: Երբ բաւականին մօտեցան, նրանց  
ձիաները Նահզադէի կարմիր փայլից խրանեցին,  
իսկ իրենք էլ Նահզադէի գեալին կերպարանքից  
վախեցած, սարսափահար ուզում էին յետ փախ-  
չել, բայց Նահզադէն թուրը հանելով պատեսնից,  
ձայն տուեց.

—Կանգնեցէք տեղներդ, չփախչէք, եթէ ոչ  
ահա այս րոպէին իմ սրովս ձեր երկուսի գլխներն  
էլ կը թուցնեմ:

Խեղճ ձիաւորները, որոնք Միրան թագաւորէ  
նորապակ նազիր-վեզիր փեսաներն էին, երբ այս  
խօսքերը լսեցին, սկսան աշնանալին տերևի պէս  
դողալ և իրենց ձիաներին մի կերպ զսպելով՝ ա-  
ռանց տեղներիցը շարժուելով՝ գլխները թեքելով,  
քարացած արձանների նման մնացին տեղն ու տե-  
ղը կանգնած: Նահզադէն լաւ գիտէր գրանց ի-  
րեն կողմը շտապելու պատճառն և սպասում էր  
նրանցից մի որ և է հարցի, բայց Նահզադէի դե-  
ւալին կերպարանքից այնքան վախեցել էին, որ չէին

կարողանում մի խօսք անգամ արտասանել, և լուսում մունջ կանգնած էին իրեն առաջ։ Միրան թագաւորի նազիր-վեղիր փեսաները՝ բոլորվին չը ճանաչեցին Շահզադէին և որտեղից կարող էին ճանաչել և մտածել անգամ, թէ այդ վիժխարի կարմիր միագլխանի դևը, որից իրենք այնպէս սարսափած դողում էին, իրենց պալատի բագերի ու հաւերի վերակացու Շահզադէն է, այն Շահզադէն՝ որին իրենք այնպէս անպատիւ և խտառապահի կերպով դուրս էին արել պալատից իւր Փէրիխանում ամուսնու հետ միասին։ Նրանք երկար ժամանակ մնացին գլխները թեքած՝ ձիաների վրա նստոտած և սպասում էին դե՛Շահզադէիր իրենց մահուան դատավճռին։ Շահզադէն հրամալեց նրանց, որ ձիաներից ցած գան ու սկսեց հարց ու փորձ անել նրանց, իբր թէ չէ ճանաչում, թէ ովքեր են, որտեղից են գալիս, ուր են գնում և ինչու համար են նեղութիւն կրել ճանապարհորդելու և այն։

Միրան թագաւորի նազիր-վեղիր փեսաները՝ իսկոյն ցած իշան ձիաներից և ծունկ չոքելով դե՛Շահզադէի առաջ, ասացին.

— Սիրելի և լարգելի դե թագաւոր, գուցէ դու իմացած լինես Միրան թագաւորի անունը. մենք նրտ փեսաներն ենք, նա շատ հիւանդ դրութեան մէջն է և մերձիմահ պառկած է անկողնում. շատ ընտիր և գովուած քժիշիներ հրաւիրեցինք պալատ՝ նրան բժշկելու համար, բայց ոչինչ չօգնեցին։ Վերջը մեր պալատում սպասաւորող մի ութունամեալ ծերունի դռնապանի ասելով՝ դտանք մի

կախարդ պառաւ կին։ Նա ասաց, որ հիւանդի ցաւը անբուժելի է և միմայն և թ հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթը կարողացնի, որը գտնուում է քառասուն սարից լետոյ՝ խոր անդունդի մէջ եղած քարաժայուում և ոչ մի ուրիշ բան։ Մենք շատ սար ու ձորեր, քաղաքներ և գիւղեր անցանք և շատ տեղեր էլ շրջեցինք ու ամենալին տեղ հարց ու փորձ արինք, բայց հրեղէն ալծեղջիւրի բնակութեան տեղը ոչ մի կերպով չը գտանք, հիմայ չենք իմանում, ինչ անենք, ումը դիմենք և կամ ումնից իմանանք նրա տեղը։ Բացի սրանից՝ անմահական կաթի մասին՝ էլլ ուրիշ շատ տեղեր հարցընք, բայց գարձեալ ոչ մի հնարքով չը կարողացանք ճարել։ Ճարներս կտրտ, ձեռնունայն և գատարկ պէտք է վերադառնանք պալատ և մեր խոստմունքը չկատարելու համար, ամօթահար լինելով՝ պէտք է խալտառակուենք բոլոր պալատակաների և մեծամեծների առաջ, նամանաւանդ Միրան թագաւորի փոքրիկ Փէրիխանում աղջկայ և իւր փեսայ Շահզադէի առաջ, որը բագերի ու հաւերի վերակացութեան պաշտօնն է վարում։ Ահա նորից կրկնում ենք, որ այդ երկու անձնաւորութիւնների առաջ պէտք է կատարելսպէս ծաղրի առարկա գառնանք, որնց մենք Միրան թագաւորի գրդամբ պալատից խալտառակ կերպով դուրս արինք։ Եւ այժմ նրանք մեր անշնորհքութիւնն իմանալով, խիստ կերպով կը խալտառակեն մեզ, որից լետոյ մենք յաւիտեան կորած ենք։

Միրան թագաւորի փեսաները այս խօսքերն

ասելուց յետոյ՝ վեր կացան և նորից գլխները քարշ  
գցելով, ձեռքերը կուրծքին ծալած՝ կանգնեցին  
լուռ ու մունջ առաջուայ պէս՝ քարացած արձան-  
ների նման:

Նահզադէն ասաց նրանց.

— Միք յուսահատուիլ, եթէ ալդքան հարկաւո-  
րութիւն ունիք, ինձ մօտ կալ ալդ անմահական կա-  
թը, ինձանից աւել, ուրիշ ոչ ոքի մօտ չէք կա-  
րող ճարել: Եթէ կամենում էք, կտամ, տարէք  
ձեր Միրան թագաւորին լաւացրէք, բայց իմացած  
եղէք, որ ես բոլորովին փող չեմ վերցնի ձեզանից  
դրա համար, այլ ձեզ վրայ մէկ մէկ նշան կա-  
նեմ ու յետոյ կտամ: Ես առհասարակ ամենքին էլ  
նշան եմ դնում, ով ուզում է թող լինի: Ես փողով  
կամ ուրիշ բանով երբէք չեմ ծախում անմահա-  
կան կաթը: Իմս միայն նշանն է, ով որ համաձայն-  
ւում է պալմանիս, նրան էլ տալիս եմ:

Միրան թագաւորի փեսաներն այս բանի վրայ  
շատ ուրախացան և քաղցրաժամկետ դէմքով ասացին  
Նահզադէին:

— Տէր դե թագաւոր, դու քո խօսքերովը  
մեզ շատ ուրախացրիր. ոչ թէ միայն թոյլ  
կտանք քեզ՝ մեզ վրայ նշան դնելու, այլ և եթէ  
կամենաս, հոգով ու մարմնով լաւիտենական քո  
ճորտերը կդառնանք, միայն թէ մեզ ազատես այս  
տեսակ ծանր և դժուարին յանձնարարութիւնից:

Նահզադէն մօտեցաւ ձիուն, մէջքի վրայ շա-  
լակած խուրջինից հանեց կաթնով լի շշերն ու տա-  
լով նրանց, ասաց.

— Ահա, սրանք են ձեր աներ Միրան թա-  
գաւորի հիւանդութիւնը բժշկող կախարդի ասած  
հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթը, տարէք և  
բժշկեցէք:

Նրանք վերցրին կաթնով լի շշերն ու դար-  
սեցին իրենց ձիաների վրայ շալակած խուրջինի  
մէջ՝ ու յետոյ մօտենալով երկուսը միասին դե-Նահ-  
զադէին, ասացին.

— Տէր դե թագաւոր, շատ և շատ շնոր-  
հակալ ենք քեզանից, քո այս մեզ արած բա-  
րութեան համար, համեցիր և նշան դիր մեզ վը-  
րայ, ինչպէս կը կամենաս, մենք պատրաստ ենք  
քո ամեն առաջարկութիւնդ ընդունել և կատարել:

Նահզադէն խուրջինից հանեց փոքրիկ դանա-  
կը և մօտենալով Միրան թագաւորի փեսաներին,  
կտրատեց նրանց ականջների ներքեւի փափուկ մա-  
սերն և ասաց.

— Ալժմ, իրաւունք ունիք նստելու ձեր ձիա-  
ների վրայ և գնալու, ազատ էք, Աստուած ձեզ  
հետ: Ես էլ իմ դե տեղովս կազաչեմ Ամենակարող  
Աստուածուն, որ ձեր աներ Միրան թագաւորն, այս  
ձեր տարած դեղովն առողջանայ և ձեզ վրայ ա-  
ւելի սիրալիր և քաղցը հայեացք ունենայ:

Նրանք իսկոյն նստոտեցին ձիաների վրայ և  
խոնարհ գլուխ տալով Նահզադէին, ճանապարհ  
ընկան:

Ճանապարհին Միրան թագաւորի մեծ փեսան  
ասաց միասին.

— Տեսա՞ր, ի՞նչ աղնիւ դե էր նա. նախ մեզ ոչ

մի վնաս չտուեց, և երկրորդ էլ ընդհանուր խայտայօսակութիւնից տղատեց մեզ: Ի՞նչ վնաս, թէ մեր երկուսիս ականջների փափուկ մասերը կտրատեց: Թէև ճիշտն ասած, սարսափելի ցաւում է ականջտ, բայց գլուխը քար, հօ կարողացանք ուղածներս ճարել: Ով ի՞նչ գիտէ, թէ ինչպէս ճարեցինք: Եթէ մի որևէ է անձնաւորութիւն կը հարցնի թէ՝ «ինչո՞ւ է ձեր ականջների փափուկ մսերը կտրատած» — մենք կասենք, — «քարաժայռից դուրս գալիս, յանոկալծ քարաժայռի փակուելու միջոցին երկուսիս ականջները տակը մնաց ու կտրատուեց և էլի փառք Աստուծուն, որ այսպէս պրճանք և քարաժայռի մէջ չը մնացինք յաւիտենական փակուածուն: Ոչ ոք չի իմանալ, թէ բանն ինչումն, իսկ այն դեմ հօ չի գալ և չի ասի ամենքին, թէ՝ ես կը բառեցի զբանց ականջների փափուկ մսերը: Նա, ինչպէս երեաց, շատ տղնիւ դեւ էր երեւում և կարծում եմ, որ այդ տեսակ անաղնուութիւն երբէք չի անիլ — այս տեսակ խօսքերով, վերջապէս մօտեցան սպալատին: Մօտենալուն պէս՝ իսկոյն ուրախ-ուրախ իջան ձիաներից, հանեցին խուրջինից կաթնով լիք շշերը և մեծ ուժգնութեամբ վազելով աղալատի սանդուխտներով, շնչասպառ մտան հիւանդ Միրան թագաւորի սենեակը: Ներս մտան և տեսան որ արդէն վերջին շնչի մէջն էր գտընուում ուժտասպառ ծերունի Միրան թագաւորը: Իսկոյն շշերից մի քանի կաթիլ կաթացնելով հիւանդի բերանը, մի փոքր ուշքի բերեցին, իսկ լետոր էլ ամեն օր հետզհետէ քիչքիչ խմեցնելով, բո-

լորովին շշերը դատարկուեցան և թագաւորն էլ առողջացաւ:

Այս բանի վրայ՝ շատ ուրախացան, թէ թագաւորը, թէ թագուհին և թէ բոլոր պալատականներն ու խիստ էլ սիրելի եղան նազիր վեզիր-փեսաները բոլորին իրենց այդ տեսակ քաջութեան ու շնորհքի համար:

Մեր Շահզադէն էլ հրեղէնի պոչի մազերից մէկ հատը պոկեց, փաթաթեց թղթի մէջ ու դրեց ծոցը: Յետոյ վրայից վերցրեց բոլոր զէնքերն ու զրահները, դարսեց կարգով նժոյքի մէջքին, հանեց ծոցից կիսով այրած նժոյքի մազն և ամբողջովին այրեց: Կարմիր հրեղէն նժոյքն իսկոյն անյատացաւ: Հրեղէնի անլայտանալուն պէս, ինքն էլ կըրկին ստացաւ իւր իսկական կերպարանքն և ձիու վրայ նստելով, շուտափութ, ծալտեալ կերպով կէս գիշերին եկաւ և մտաւ իւր սենեակը: Տեսնելով իւր սիրելի Փերիխանուումին տիսուր, գրկեց, համբուրեց աչքերից և մանրամասնօրէն բոլորը պատմելով՝ ուրախացրեց նրան:

Այս գէպքից յետոյ անցաւ դարձեալ մի քանի տարի:

Մէկ օր էլ թագուհին հիւանդացաւ և ընկաւ անկողին: Հրաւիրեցին թագուհու համար էլ ընտիր և հռչակուած թժիշկներ, բայց գրանք իրենց բժշկական միջոցներով ոչինչ չը կարողացան օգնել նրան և ճարները կտրած՝ Միրան թագաւորին ասացին.

— Թագաւորն ապրած կենալ, որա հիւանդու-

թիւնն էլ ջեր հիւանդութեան պէս՝ անբժշկելի և  
երկարատև է ևս էլ կառողանալ միայն այն դե-  
ղովը, ինչովն էլ գուք առողջացաք:

Միրան թագաւորն իսկոյն մտքի ընկաւ, ո՞՛  
թագուհու հիւանդութիւնը բժշկելու համար ևս  
անպայման պէտք է իւր նազիր վեզիր փեսաները  
հոգան և նրանք պէտք է ճարեն հրեղէն այծեղ-  
ջիւրի անմահական կաթը՝ որպէս զի թագուհին էլ  
առողջանայր: Ուստի և առանց երկար սպասելու՝  
շուտով կանչեց իւր նազիր վեզիր փեսաներին ու  
խնդրեց, որ այս անգամին էլ գնան և անշուշտ  
ճարեն ու բերեն հրեղէն այծեղջիւրի անմահա-  
կան կաթը:

Նրանք խոստացան և միտմտեցնելով Միրան  
թագաւորին՝ նստեցին ձիաների վերայ, դուրս ե-  
կան պալատից և ուղղակի դիմեցին այն կողմը,  
որտեղ որ մեր միագլխանի կարմիր դևահզարէին  
էին պատահել:

Նահզադէն երբ իմացաւ որ Փէրիխանումի  
մայր – թագուհին էլ էր հիւանդացել ու նո-  
զիր վեզիր փեսաներն էլ նորից գնացել են ան-  
մահական կաթ բերելու, ինքն էլ նորից պատ-  
րաստուեց ճանապարհ ընկնելու:

Առաւօտեան ծէգը բացուելուն պէս՝ Նահզա-  
դէն շատ վագ վերկացաւ անկողնուց, լուացուեց,  
հագնուեց, նստեց ձիու վրայ և դուրս գալով մար-  
րագաղաքեց, բաւականին հեռացաւ: Երբ մօտեցաւ  
առաջուայ կանաչազարդ մարգագետնին, ձին կա-  
պեց ծառից, հանեց ծոցից երեք գլխանի սև դեկի

Հրեղէն նժոյգի մազը, մի փոքր ծալրից ալրեց և  
յանկարծ իւր աւաջը խրխնջալով եկաւ հրեղէն սև  
նժոյգը՝ իւր բոլոր պատերազմական զրահաւորու-  
թիւններով: Նահզադէն շուտով վերցրեց նժոյգից  
բոլոր զէնքերն և հէնց որ իւր մէջքին առաւ և  
կապուեց, իսկոյն ինքն էլ այլակերպուեց ու նմա-  
նուեց իսկ և իսկ երեք գլխանի սև դեկին:

Նահզադէն նստեց հրեղէն նժոյգի վերայ և  
արաբերէն լեզուով իւր սրտի ուզածը յայտնելով  
նրան, ինդրեց, որ այս անգամ էլ՝ որքան կարելի  
է նորից շուտով հասցնի հրեղէն այծեղջիւրի բնտ-  
կավալրը: Հրեղէն նժոյգին՝ թէև այս անգամին  
էլ Նահզադէի խնդրուածքը անհաճութուաց, բայց  
ինչ կարող էր անել: Ճարահատեալ համաձայնեց  
և իսկոյն Նահզադէին առնելով իւր վրայ՝ այս ան-  
գամին էլ օդի մէջ սլանալով, մի քանի վալրկեա-  
նում տարաւ-հասցրեց հրեղէն այծեղջիւրի բնա-  
կավալրը այն ժամանակ, երբ քարաժայոն էլ բա-  
ցուեց: Ներս մտան քարաժայոն և հէնց որ ա-  
ռաջուայ պէս՝ երկու ամեհի հրեղէն ախոյաններն  
իրար հետ կռուել բոնուեցին, Նահզադէն քամու  
արագութեամբ մօտենալով հրեղէն այծեղջիւրին,  
ձագերին մի կողմը հրեց ու մէծ արագութեամբ  
սկսեց շշերի մէջ հրեղէն այծեղջիւրի անմահական  
կաթը լցնել: Այս անգամ Նահզադէն աւելի մեծ  
չարչարանքների ու դժուարութիւնների հանդի-  
պեց քարաժայում, որովհետեւ ամբողջապէս քա-  
րաժայուի ներսը մութն էր, բայց նա ամեն  
քան շտապով կարողացաւ վերջացնել իւր հետ

վերցրած ճրագի աղօտ լոյսի միջոցով։ Նա կաթնով լիք շշերը դբեց գրպանները և իւր հրեղէնի հետ միասին դուրս սլացաւ քարաժայուից լոյս աշխարհէ Հրեղէն նժուղը օդի մէջ մեծ ոստիւններ անելով վերջապէս բարձրացրեց շուտով անդունդից սարի գլուխն և այնտեղից էլ շարունակ արագ թռիչքներ անելով օդի մէջ՝ անցաւ քառասուն սարը և այժմ, առաջուանից աւելի շուտ, տարաւ-հասցրեց այն մարգագետինը՝ որտեղ կապուած էր ծառից իւր ձին։ Շահզադէն իւր հրեղէնի աչքերից մի քառնի անդամ համբուրելով, բայց թողեց նրան դաշտը հանգստանալու համար։

Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաները մեզ ծանօթ միազլիսանի կարմիր դև Շահզադէն շատ այս ու այն կողմը պտրտելուց ու մանգալուց յետոյ՝ ոչ մի տեղ չը գտնելով նրան, մեծ յուսահատութեան մէջ ընկան և չգիտէին ինչ անէին։ Այսպէս յուսահատ տիսուր-տրտում, և մտածութիւնների խոր անդունդի մէջ ընկլմուած՝ մանգալով, յանկարծ եկան, հասան այն տեղը, որտեղ երեք գլխանի սե դեմ կերպարանքով մեր քաջ հերոս Շահզադէն էր գտնելում։ Շահզադէն նրանց տեսնելուն պէս՝ իսկոյն ճանաչեց։ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաները՝ երբ երեք գլխանի գե-Շահզադէին տեսան՝ շատ սարսափեցին և մտադրուեցին իսկոյն յետ փախչել, բայց մեր հերոս Շահզադէն առաջուայ նման թուրը պատեանից հանելով, դեմին յատուկ եղանակսվ ձաւեց։

— Ո՞վ դուք թուլասիրտներ, ուր էք փախչումք

Եկէք այստեղ, եթէ ոչ այս ըոպէին ձեր երկուսի գլուխը կը կտրեմ և ձեր մարմինը գիշատիչ թըռչունների կերպակուր կը շինեմ։

Նրանք մօտեցան երեք գլխանի սև դե-Շահզադէին, խոնարհ գլուխ առւին և ծունկ չոգելով, ասացին.

— Ո՞վ դու արքայաբարոյ և պատուարժան թագաւորների թագաւոր դե-արաբ, մենք Միրան թագաւորի փեսաներն ենք. թագուհին շատ ծանր հիւանդ է և մերձիմահ պառկած է անկողնում. մի կախարդ պառաւ կնոջ պատուէրով՝ պալատից դուրս եկանք՝ գնալու քառասուն սարի ետև գտնուող խոր անդունդի քարաժայուը և այնտեղից հրեղէն այծեղջիւրի անմահական կաթ բերելու, բայց ոչ մի կերպ չկարողացանք գտնել։ Մտածում էինք և չգիտէինք թէ ինչ էինք արել։ Հէնց էս էր պէտք է ձեռնունայն ու դատարկ ձեռքով յետ վերադառնալինք պարատ և ահա բաղդի բերմունքով քո առաջը եկանք։ Հիմա քո ճորտերն ենք. ուզում ես սպանիր, ուզում ես ազատ թող եթէ կը խղճաս մեր կեանքը, բայց չէ, աւելի լաւ է, սպանիր մեզ երկուսին էլ, որովհետեւ սեերես ենք վերադառնալու մեծաւորների ու պալատականների տռաջ։

Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն այս խօսքերն ասելով, գլուխները քաշ գցեցին ու մնացին տեղն ու տեղը կանգնած քարացած արձանների նման։

Շահզադէն ասաց նրանց.

— Միք յուսահատուիլ, եղբայրներ, այդ ինչ որ

զուք ուզում էք, ինձ մօտ կայ, ինձանից աւել ուրիշ  
ոչ մի անձնաւորութեան մօտ չէք կարող ճարել արդ  
ձեր ասած և կախարդ պառաւ կնոջ ակնարկած ու  
պահանջած հրեղէն ալծեղիւրի անմահական կաթը  
Եթէ ճիշտ պահանջ ունիք և անպայման հարկա-  
ւոր է, կտամ, տարէք ձեր թագու հուն անբուժելի  
հիւանդութիւնից պրծացը էք, բայց իմացած ե-  
ղէք, որ ես փողով չեմ ծախում, և ոչ մի վար-  
ձատրութիւն էլ չեմ վերցնում, այլ ձրի եմ տա-  
լիս, ով որ կամենում է։ Միայն մէկ պայման կա-  
ռաջարկեմ, այն է, որ թուլ տաք ձեր երկուսիդ  
վրան էլ մէկ մէկ նշան դնեմ։ Եթէ կը համաձայ-  
նէք, մեծաւ ուրախութեամբ կտամ ալս, իսկ եթէ  
ոչ, վերկացէք և գնացէք, ու այլ ևս իմ աչքիս բոլո-  
րովին չերևաք։

Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն  
երք Շահզադէից այս տեսակ խօսքերն իմացան, շատ  
ուրախացան և ժպտալից դէմքով ասացին։

Պատուարժան և արքայաբարութագաւորնե-  
րի թագաւոր դեարաբ, եթէ իրաւ ճիշտ են խօս-  
քերդ և իսկապէս քեզ մօտ գտնւում է այդ մեր  
ուզած հրեղէն ալծեղիւրի անմահական կաթն ու  
մեզ կտաս, մենք քո ալդպիսի լաւութեանդ հա-  
մար՝ շատ և շատ շնորհակալ կը լինենք և կեր-  
դուենք Աստուծոյ անունով, որ ոչ թէ թուլ կտանք  
քեզ՝ մեզ վրա նշան դնելու, ալև քո հլու ստրուկ-  
ները կը դառնանք և ինչ որ կը հրամայես մեծաւ  
ուրախութեամբ կը կատարենք։

Շահզադէն Միրան թագաւորի նազիր-վեզիր

փեսաներից այսպիսի խօսքերը լսելուց յետոյ  
մօտեցաւ ձիուն և մէջքի վրայ շալակած խուրջի-  
նից հրեղէն ալծեղիւրի անմահական կաթնով լիք  
շները հանելով բերեց, տռւեց նրանց և ասաց։

— Ահա, եղբայրներ, սրանք են ձեր սիրելի  
թագուհուն բժշկող՝ կախարդ կնոջ ասած անմա-  
հական կաթը, տարէք և բժշկեցէք։

Նրանք ուրախ-ուրախ՝ անմահական կաթնով  
լիք շները դրին իրենց խուրջիների մէջ ու յետոյ  
մօտենալով երեք գլխանի սեղեւ Շահզադէին, խո-  
նարհաբար երեք անգամ գլուխ տուին և ասացին։

— Արքայաբարոյ և պատուարժան թագաւոր-  
ների թագաւոր դեարաբ, մենք պատրաստ ենք  
քո ամեն հրամայած առաջարկութիւնդ ընդունե-  
լու, ինչ տեսակ նշան կամենում ես դիր մեզ  
վրայ, ամեն բանին մենք համաձայն ենք։

Շահզադէն շտապնկ ձիու մէջքին շալակած  
խուրջինից հանեց փոքրիկ դանակը և մօտենալով  
նրանց, երկուսի աջու ձեռքերի ձկոլիթ մատ-  
ները ծալից մի փոքր կտրեց ու յետոյ ասաց։

— Ալժմ բոլորովին ազատ էք, կարող էք նըս-  
տել ձիաներիդ վրայ և գնալ, իսկ ես էլ իմ զեալին  
տեղովս կը ցանկամ՝ որ ձեր գմուար բժշկելի հի-  
ւանդ թագուհին՝ ալս ձեր տարած անմահական  
կաթովը առողջութիւն ստանալ և բժշկուելուց  
յետոյ բարի աչքով նայի ձեզ վրայ։

Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաները  
նստեցին իրենց ձիաների վրայ և կըկին նորից  
մի քանի անգամ գլուխ տալով երեք գլխանի և

դւ Շահզագէին, ճանապարհ ընկան դէպի պալատ։  
Ճանապարհին նրանք սկսեցին այս անգամն էլ  
իրար հետ առաջուայ նման խօսակցել. այժմ փոք-  
րիկ փեսան ասաց մեծին.

— Տեսնում ես, ի՞նչ լաւ է գնում գործերս։  
Աստուած բարի տալ թէ առաջուայ և թէ հիմի-  
կուայ դևերին. Եթէ դրանք չտալին մեզ հրեղէն  
այծեղիւրի անմահական կաթը, ի՞նչ պէտք է լի-  
նէր մեր վիճակը։ Երանի թէ միշտ այսպիսի բաղդ  
վիճակուի մեզ՝ ամեն պատահած վտանգների ժա-  
մանակ։ Ի՞նչ վնաս, թէ երեք գլխանի գեր՝ մեր  
երկուսի աջ ձեռքերի ճկոյթ մատների ծայրերը մի  
փոքր կտրեց։ Յրանով կարծում եմ որ ոչ մի վնաս  
չի պատահի մեզ, իսկ որ այսուհետեւ, պալատա-  
կանների ու մեծամեծների առաջ պարզերես ու յաղ-  
թանակ տարած կը լինենք և ծաղրի ու ծանակի ա-  
ռարկայ չենք դառնալ, դրան խօսք չկալ, և այս աւելի  
ևս ուրախալի է մեզ համար, քան ճկոյթ մատնե-  
րի ծայրերից զրկուելը։ Սա բոլորին չնչին բանէ.  
մի քանի տարուց յետոյ, քիչ-քիչ միսն աւելանա-  
լով, կրկին կը ստանայ իւր առաջուայ սկզբնական  
ձև։ Ե՞հ, գիտես, սիրելիս, այս անգամին էլ բան  
է, եթէ մէկը՝ պալատականներից կամ ուրիշ մարդ-  
կանցից՝ հետաքրքրուի մեր կտրած ճկոյթներով և  
հարցնեն մի որեւէ բան, մենք առաջուայ պէս կը  
պատասխանենք թէ՝ «քարաժայուից դուրս գալիս,  
յանկարծ քարաժայուի փակուելու ժամանակ ճկոյթ-  
մատներս տակովն եղաւ ու կտրուեց և էլի փառք  
Աստուծոյ, որ ալպէս պրծանք ու քարաժայուի»

մէջ չը մնացինք յաւկութեան բանտարկուած»։ Ո՞գ  
ինչ կարող է իմաստալ, թէ բանն ինչումն է, ի  
հարկէ և ոչ ոք։ Ամենքը միայն մեր խօսքերին կը  
հաւատան և ճշտութեան տեղ կընդունեն։ Այս  
անգամին էլ այսպէս երկար ու բարակ խօսակցե-  
լով՝ վերջապէս մօտեցան պալատին։ Խսկոյն ձիա-  
ներից ցած էջան, խուրջնից հանեցին անմահա-  
կան կաթնով լի շշերը ու մեծ արագութեամբ ներս  
վազելով պալատ, շնչասպառ և ուրախ-ուրախ մը-  
տան հիւանդ թագուհու սենեակը։ Տեսան որ թա-  
գուհին արդէն ուժառապառ էր եղել և մերձիմահ  
հազիւ-հազ կարողանում էր շնչել։ Խսկոյն շշերից  
անմահական կաթի մի քանի կաթիլ կաթացնելով  
թագուհու բերանը՝ մի քիչ ուշքի բերին, իսկ յե-  
տոյ էլ ամեն օր, հետզհետէ, քիչ-քիչ խմացնելով,  
շշերը դատարկուեց ու թագուհին էլ բոլորովին  
առողջացաւ։

Թագուհու առողջութեան պատճառաւ՝ կրկին  
տիրեց ընդհանուր ուրախութիւն։ Այս անգամին  
էլ կրկին ամենքը հաւատացին, որ իսկապէս Մի-  
րան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն են անմա-  
հական կաթ ճարողները։ Միրան թագաւորը՝ թէ  
իւր անբժշկելի հիւանդութիւնից ազատուելու, թէ  
թագուհու շուտափոյթ առողջանալու, և թէ իւր  
նազիր-վեզիր փեսաների ալդ տեսակ քաջութիւն-  
ների համար, փառահեղ խնճոյք սարքեց և մեծ  
ուրախութիւն արին։

Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն  
այս անգամ էլ ոչինչ չը պատմեցին հրեղէն այծեղ-

ջիւրի անմահական կաթ ճարելու վերաբերմամբ։  
 Մեր Շահզադէն էլ՝ երբ Միրան թագաւորի  
 խաբերայ և ապերախտ նազիր-վեզիր փեսաներին  
 ճանապարհ դրեց և իրեն աչքեց բոլորովին ան-  
 յալտացան, իսկոյն կանչեց իրեն հրեղէն նժոյգին,  
 պրչի մազերից մէկը պոկեց և փաթաթելով թղթի  
 մէջ՝ դրեց ծոցը, յետոյ իւր վրալից վերցըց բոլոր  
 զէնքերն ու զբահները, դարսեց կարգով նժոյգի  
 վերալ, հանեց ծոցից կիսով շափ ալրած սև  
 հրեղէն նժոյգի մազը, ամբողջովին աւրեց, և  
 իսկոյն հրեղէն նժոյգը մէկ ակնթարթում ան-  
 յալտացաւ։ Հրեղէնի անյալտանալուն պէս՝ ինքն  
 էլ իսկոյն ստացաւ իւր իսկուկան պատկերը և իւր  
 ձիու վրալ նստելով, շուտափոյթ, կէս գիշերին,  
 գաղտնագողի եկաւ ու մտաւ իւր սենեակը։ Շահ-  
 զադէն այս անգամ էլ տեսնելով իւր սիրելի կո-  
 ղակից Փէրիխանում ամուսնուն տիսուր, իսկոյն  
 գրկեց ու մի քանի անգամ համբուրելով նրա աչ-  
 քերից, ուրախ ուրախ պատմեց բոլոր մանրամաս-  
 նութիւնը։

Թագուհու առողջանալուց յետոյ, անցաւ հա-  
 մարեալ ամբողջ տարի։

Տարին լրանալուն պէս՝ Միրան թագաւորի  
 տէրութեան մէջ ձախն ընկաւ, որ ուրիշ իրենց  
 գրացի հարեան հզօր տէրութիւնը մտադրուել է  
 պատերազմ յալտարարելու։ Միրան թագաւորին և  
 Այս յանկարծակի մահաբեր լուրի տարածման հա-  
 մար՝ ժողովուրդը շատ խիստ սարսափի մէջ էր ըն-  
 կել և օր-օրի վրայ ահ ու գողով սպասում էր  
 այդ մահաբեր լուրի իրագործման։

Եւ ահա մէկ օր, Միրան թագաւորի հարեան  
 հզօր թշնամու տէրութեան զօրքերը ընտիր և  
 քաջ զօրապետների առաջնորդութեամբ՝ արշաւում  
 են Միրան թագաւորի տէրութեան վրայ, սկսում  
 են իրենց առաջ պատահած՝ թէ քաղաքներում և թէ  
 գիւղերում մեծ աւերումներ ու կողոպտումներ ա-  
 նել ու այսպէս կեղեքելով, յափշտակելով Միրան  
 թագաւորի խաղաղ ու անվրդով ժողովրդեան գոյքն  
 ու կայքը՝ մեծ վնասներ են տալիս։ Թշնամու  
 զօրքերը չէին բաւականում միայն կեղեքում-  
 ներով, այլ և կանանց և օրիորդներին բռնաբա-  
 րում և փոքրիկ ծծկեր երեխաներին սոսկալի տան-  
 ջանքներով սրախոխող էին անում։

Երբ Միրան թագաւորը տեղեկանում է իւր  
 հարեան թշնամի անգութ թագաւորի զօրքերի  
 վերուիշեալ գործած բարբարոսութիւնների մա-  
 սոին, սաստիկ կատաղում է և մտադրում է իսկոյն  
 առաջն առնել։ Բայց կասկածելով, որ թշնամու  
 անգութ զօրքերը մի գուցէ իւր ընդարձակ տէրու-  
 թեան սահմաններին մօտենալով՝ ամբողջ տէ-  
 րութիւնը չըրս կողմից շրջապատեն, պաշարեն  
 ու իրենց էլ հէնց տեղն ու տեղը ոչնչացնեն, ուս-  
 տի սկսեց ինքն ևս մեծ պատրաստութիւններ տեսնել։  
 Իսկոյն հրաման տուեց որ զօրքերը կարգի ու կա-  
 նոնի բերուեն։ Միրան թագաւորի պատուերը հրա-  
 մալուածը պէս կտարուեց։ Պատրաստեցին առան-  
 ձին լաւ զինափարժ ձիաւոր և հետիոտն գնդեր և  
 կանգնեցնել տուին պալատի չորս բոլորքը՝ թշնա-  
 մու յանկարծակի յարձակումից ազատ և ապահով

պահելու համար, իսկ մայրաքաղաքի ներսն է՝ ամենայն փողոցներում, Միբան թագաւորի հրամանի համաձայն, լցուեցան ժողովրդից ընտրուած սպառազինուած հրօսակային խմբեր, որոնք նմանապէս իրենց ազատ կամքով պէտք է պաշապանէին իրենց սրելի եղբայրակիցների կեանքն ու գորքը բարբարոս թշնամու սրերի հարուածներից բացի այս բոլորից, Միբան թագաւորի խնդր անօք իւր նազիր-վեզիր փեսաներից ամեն մէկը՝ իրեն հովանաւորութեան տակ վերցնելով մեծագումար լաւ և ընտիր պահեստի զօրքեր, իսկոյն մայրաքաղաքից դուրս գնացին և աճապարելով՝ առաջն ընկան թշնամու ճանապարհը կտրելու։ Միբան թագաւորը բաւական չը համարելով մայրաքաղաքում եղած թէ կամաւոր և թէ իրեն յատուկ լաւ զինավարժ զօրքերով, իսկոյն, առանձին հրովարտակներով, նորից մեծ քանսակութեամբ զօրքեր կանչել տուեց ուրիշ հեռաւոր և մօտիկ քաղաքներից, և կանգնեցնել տուեց արիւնուուշտ թշնամու գալիք ճանապարհների վերայէն այսպէս կարճ ժամանակում՝ Միբան թագաւորի տէրութեան զանազան կողմերում հաւաքուեցաւ մեծաքանակ զօրքերի և հեծելագնդերի վաշտերն ու բոլորեքեանք անհամբեր սպասում էին թշնամու վրայ արշաւելուն։

Մինչ Միբան թագաւորն այսպէս իւր զօրքերը կարգ ու կանոնի էր զնում թշնամուց իւր հայրենիքն ու ժողովուրդը ազատելու համար, թշնամու զօրքը վաղուց արդէն մօտեցել էր Միբան

թագաւորի տէրութեան սահմաններին և մի փոքր հեռու, կանաչազարդ մարգագետնի վրայ բանակ էր գրել։ Այդ արիւնարբու զօրքերը, որոնք թուով շատ մեծ էին, կազմ ու պատրաստ վաղուց սպասում էր Միբան թագաւորի պատերազմ յայտարարելուն, բայց Դեռ Միբան թագաւորի դանդաղկոտ նազիր-վեզիր փեսաները իրենց հետ վերցրած զօրքով թշնամու դիմաց չէին դուրս եկել։ Վերջապէս, քիչ ժամանակից յետոյ, հազիւհազ երկացին և Միբան թագաւորի գոռոզու հպարտ նազիր վեզիր փեսաներն իրենց զօրքերով և գալով զօրքերին կանգնացրին թշնամու բանակի դէմ առ դէմ՝ նոյն կանաչազարդ մարգագետնի վրայ։ Յետոյ մունետիկ ուղարկեցին թշնամու զօրքերի սպասալարին և յայտնեցին, որ արդէն վաղուան համար անպատճառ պատրաստ լինեն պատերազմելու և առաւտեան ծէգը բացուելուն պէս դուրս գան բանակից՝ կոռուի արիւհահեղ գաշտ։

Նախ քան միւս օրուայ կոռուի արիւնահեղ պատերազմի սկսուելը, այդ գիշեր՝ երկու իրար թշնամու բանակների զօրքերը խաղաղ ու անվրդով հանգստանում էին իրենց վրաններում։ Միբան թագաւորի նազիր վեզիր փեսաները՝ երբ գիշերով թշնամու բանակն ուղարկած իրենց լրտեսնեցից իմացան թշնամու մեծաքանակ լինելը, շատ անհանգստութեան մէջն ընկան և չէին իմանում թէ ինչպէս անէին, որ կարողանային թշնամուն լազմել ու չը խայտառակուէին Միբան թագաւորի

առաջ: Մինչ կէս գիշերին զօրքը քաղցը ննշում էր, բացի պահապաններից՝ որոնք արթուն հըսկում էին շուրջը, Միրան թագաւորի նազիր վեզիր փեսաները մտածմունքների ալեկոծութեան խոր անդունդի մէջն էին ընկղմուել և մտածելով միւս օրուայ պատերազմի մասին, ասում էին իրար.— Հվաղուան պատերազմի համար ո՞նց պէտք է անենք: Չէ որ մենք կարող ենք յաղթուել, որովհետև թշնամու զօրքն աւելի շատ է, քան մեր զօրքը և այսպէս քիչ զօրքով, ի՞նչ կարող ենք անել: Պէտք է մի կերպ թագաւորին իմացում տանք հէնց այս գիշեր, որպէս զի նորից զօրք ուղարկի մեզ օգնութեան, եթէ ոչ երբէք չենք կարող թշնամու դէմ առնել, և այն ժամանակ, մենք բոլորս, և ամբողջ տէրութիւնն էլ մեզ հետ, կորած և ոչընչացած կը համարուենք: Ուրեմն, քանի որ ժամանակ ունինք, շուտով կանչենք մի քանի ձիաւոր զօրականներ և շտապով ուղարկենք մայրաքաղաք՝ Միրան թագաւորին յայտնելու: Այսպէս վըճռեցին Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն և իսկոյն մի քանի զօրականների պատուիրեցին, որ շուտով գնան մայրաքաղաք և Միրան թագաւորին յայտնեն թշնամու զօրքի վերթերալ մանրամանութիւնն և խնդրեն, որ վաղուան համար շուտափոյիթ օգնական զօրք ուղարկի կռուի դաշտը: Համբաւատար զօրականների հեռանալուց յետոյ, Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն առանց ժամանակ կորցնելու, իսկոյն պառկեցին և մի փոքր հանգստանալուց յետոյ,

շուտով արթնացան և առաւօտեան շատ վաղ՝ բոլոր քուն մտած զօրքերին էլ զարթացնելով աւելի ամուր սպառազինեցին, և ամեն մէկը իւր հովանաւորութեան տակ գտնուող զօրքերը դուրս տանելով կռուի դաշտ՝ թշնամու բանակի դէմ առ դէմ՝ կարգով կանգնացրին բոլորին իրենց տեղերը: Յետոյ սկսեցին զօրքերին խրախուսական խօսքերով քաջալերել այսպէս: — Շով դուք իմ քաջեր, մի վախենաք այսօրուայ պատերազմի համար: Ճիշտ է, մենք թշնամու զօրքերից թուով քիչ ենք, բայց յուսով եղէք, մեծ է Աստուծոյ զօրութիւնը, մենք կը յաղթենք անպատճառ թշնամու անթիւ և անհամար զօրքին և խայտառակ կերպով յետ կը փախցնենք, դուք էլ առոյդ և ճարպիկ եղէք կռուի ժամանակ, քաջութեամբ պատերազմեցէք թշնամու դէմ, և լաւ իմացած եղէք, որ եթէ Աստուծով մենք կարողացանք յաղթել արիւնարբու թշնամուն և ամօթահար ու սարսափով յետ փախցրինք ու մի կերպ կարողացանք ազատել մեր տէր Միրան թագաւորին ու իրեն սիրեցեալ ժողովրդեան կեանքը, այն ժամանակ, իմացած եղէք, որ ամենքդ էլ մեծ պարգևներ և վարձատըութիւններ կը ստանաք ու թագաւորին էլ ամենասիրելիներ ինելով ձեր արած քաջութիւններիդ համար՝ մեծ անուններ կը ժառանգէք մինչև մահներդ»: — Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներն այս տեսակ խօսքերով մի կերպ խրախուսելով զօրքերին, առաջին անգամ իրանք ուղեցին յարձակուել թշնամու վրայ, բայց սիրտ չարին և վախցան:

Քիչ ժամանակ անցնելուց յետով, երկու թըշ-  
նամի բանակներից պատերազմական շեփորների ձայ-  
ներ հնչեցրին և նշան պատերազմ սկսուելուն։ Իս-  
կոյն նրանց զօրքերը միմեանց վրայ կատաղաբար-  
յարձակուելով, սկսուեցաւ մեծ արիւնալից կոտո-  
րած։ Սկզբներում Միրան թագաւորի զօրքերը՝  
մեծ ոլժով էին դիմադրում թշնամուն, բայց  
տեսնելով՝ որ մեծ թուով աւելի իրենցից են կո-  
տորւում քան թշնամու զօրքերից, նրանք հետ-  
զհետէ սկսեցին թուլանալ, և այլ ևս չը կարո-  
ղանալով դիմադրել անդութ զազանաբարու թշնա-  
մու սրերի ուժզին հարուածներին, յետ նահանջե-  
ցին և երեսները շուռ տալով՝ սկսան սարսա-  
փահար փախչել։ Թշնամին Միրան թագաւորի  
զօրքերի յետեցից ընկած՝ սկսաւ հալածել և շատե-  
րին էլ անինայ կոտորել։ Այսպիսով այնքան հա-  
լածեցին ու կոտորեցին, մինչև որ թշնամու զօր-  
քերը եկան-հասան մալրաքաղաքի սահմաններին և  
նրանց կատաղի զօրքերը՝ ոչ թէ բաւականանում  
էր Միրան թագաւորի զօրքերի կոտորելովը, այլ և  
ամենայն տեղեր՝ ճանապարհներին, մեծ անգիտու-  
թիւներ անելով՝ կամ աւերում ու մոխիր էր  
դարձնում լսեղմ, անմեղ բնակիչների ունեցած-չու-  
նեցածը կամ իրենց համար աւար էին վերցում։

Մինչ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսա-  
ները՝ կոռւի արիւնահեղ դաշտում անօրէն թշնա-  
մու հետ մենամարտութեամբ էին զբաղուած և  
ամօթահար յաղթուելով՝ սարսափահար հալած-  
ուում էին թշնամուց, մեր քաջ և անվեհեր

Նահզադէն, մենակ նստած իւր սենեակում, մտա-  
ծում էր ինքն-իրեն և ասում. «Հետաքրքիր է ի-  
մանալ, թէ արդեօք, մեր Միրան թագաւորի նա-  
զիր-վեզիր փեսաները, որոնք իրանց փառափրու-  
թեան համար ինձ ոչնչի տեղ դրին և իրենք էլ ամե-  
նայն ստորութիւն վիզը կալան ու այժմս էլ արիւ-  
նարբու թշնամու դէմ են գնացել զօրքերին ա-  
ռաջնորդ լինելու, արդեօք, յաղթեցին թշնամուն,  
թէ յաղթուելով՝ տմօթահար յետ փախան»։ Ահա  
այսպիսի մտածմունքներով շրջապատուած՝ երկար  
ժամանակ սպասում էր բօթաբեր լուրին։ Յանկարծ  
Նահզադէն իմացաւ, որ մալրաքաղաքի մէջ խառ-  
նաշփոթութիւն է ընկել և իսկապէս էլ վայնա-  
սունի ազաղակների ձայներ լսուեցան նրա ա-  
կանջում։ Նահզադէն հասկացաւ՝ որ Միրան թագա-  
ւորի զօրքերը յաղթուել են, իսկ թշնամին էլ հաջա-  
ծելով նրանց, եկել հասել է մալրաքաղաքի սահ-  
մանները և կասկածելով՝ որ մի գուցէ այժմս  
էլ նոյն կոտորածը շարունակեն մալրաքաղաքի  
մէջ, իսկոյն շտապով վերկացաւ տեղից, հագաւ-  
պատառուած շորերն և սպասելով մինչև մութ-  
ընկնելը, կէս գիշերին՝ դուրս եկաւ սենեակից,  
նստեց իւր կաղ ձիու վրայ և անծանօթ փողոց-  
ներով, ծպտեալ, հեռացաւ մալրաքաղաքից դուրս։  
Նախ քան մինչև մալրաքաղաքից հեռանալը, ճա-  
նապարհին մի քանի մարդիկ շրջապատեցին Նահ-  
զադէին և չը ճանաչելով նրա ով լինելը՝ սարսա-  
փած ասացին։

—Ա՛յ ողորմելի, ուր ես գնում այս կէս գի-

շերին. միթէ չը գիտես, որ սարսափելի պատերազմ կայ: Բարբարոս և անգութ թշնամին յարձակուեց ու յաղթեց մեր Միրան թագաւորի բոլոր զօրքերին ու մեծ կոտորածներ անելով, հալածեց մինչեւ մալրաքաղաքի սահմանները. իսկ հիմայ էլ այստեղ են գալիս և եթէ ինելք ունես, կամ փախիր և գնա մի ուրիշ հեռու տեղ՝ որ թշնամինները չը բռնեն քեզ, և կամ տեղն ու տեղդ անձնասպան եղիր, որ թշնամիններից չը գերուես ու դժուարին տանջանքներով չը մտհանաս:

Շահզադէն ճանապարհին շատ շատերից այս տեսակ խօսքերը լսեց և տեսաւ որ ճիշտ իրենք էլ սարսափահար ոչխարների նման այս ու այն կողմն էին փախչում: Մի քանիսներն էլ ուղղակի անձնասպանութիւն էին գործում, ասելով.—«աւելի լաւ է մենք մեզ սպանենք, քան գարշ ու արիւնարբու գազան թշնամու սրերի հարուածներից մեռնենք»:

Երբ մեր հերոս Շահզադէն մարդկանց այդ սարսափելի փախուստը տեսաւ և նրանց խղճալի, սիրտ կտրատող աղաղակները լսեց ու ականտես եղաւ, սկսեց իւր ձիուն աւելի շտապեցնել և վերջապէս միւս օրուայ առաւօտեան, ծէգը բացուելուն պէս՝ մալրաքաղաքից շատ հեռու մէկ կանաչաղարդ տափարակ մարդգետնին հասաւ. իսկոյն ձին բաց թողեց աղատ դաշտ, շտապով ձեռքը տարաւ ծոցը, հանեց հրեղէն նժոյգների մազերի կտալոցը, ջոկեց նրանցից եօթ-գլխանի սպիտակ դևի հրեղէն նժոյգ գի մազի կտալոցը, հանեց հրեղէնի մազը, և հէնց

որ ծալրից մի փոքը ալրեց, մնացեալը դրեց ծոցը, իսկոյն սպիտակ հրեղէն նժոյգը իւր բոլոր պատերազմական զէնքերով ու զրահներով՝ խըրխնջալով եկաւ Շահզադէի առաջ, և երբ Շահզադէն էլ զէնքերն ու զրահներն առաւ նժոյգի մէջքից և հագաւ ու կտալուեց բոլորը, իսկոյն ինքն էլ կերպարանափոխուելով՝ դարձաւ մի եօթ-գլխանի՝ ձիւնի նման փալլուն սպիտակ դե, որի արտաքին տեսքը զարհուրելի ու զազրական էր և որը տեսնողին սարսափ էր բերում իւր այդ ահարկու դեալին կերպարանքով: Շահզադէն շտապով նստեց հրեղէն նժոյգի վրայ, Աստուծոյ անունը լիշեց և ամուր մտրակելով՝ մէկ ակնթարթում նժոյգը՝ Շահզադէին թռցրեց կոռուի արիւնահեղ դաշտը այն ժամանակ, երբ թշնամին Միրան թագաւորի զօրքերի մեծ մասին կոտորելով՝ նրա սիրելի նազիր-վեզիր փեսաների ու մի քանի ընտիր զօրականների յետեկց ընկած, մալրաքաղաքն էին ուզում ներս խուժել և կոտորածը ու աւերմունքները շարունակել: Մեր Շահզադէն եօթ-գլխանի դևի կերպարանքով՝ հասնելուն պէս իսկոյն թուրը պատեանից հանեց, կրկին Աստուծոյ անունը լիշելով՝ խառնուեց թշնամու զօրքի մէջ, և սկսեց նրանց անխնայ կոտորել. ոչ թէ միայն Շահզադէն էր կոտորում թշնամու զօրքերին, այլ և Շահզադէի հրեղէն նժոյգը՝ որն աւելի մեծ սարսափ էր հասցնում թշնամու զօրքերին: Նժոյգը պատերազմում թուլացածներից մի քանիսին, որին՝ պոչի հարուածով տեղն ու տեղը մահացնում էր,

որին՝ ոտքով աքացի էր զարկում, որին էլ՝ գլուխութին հարուածով մի քանի քայլ հեռու շպըրտում ու սպանում, և այսպիսով կարճ ժամանակում, սարսափահար յետ փախցրին մայրաքաղաք ներս խուժող արիւնարբու թշնամուն։ Երբ թշնամու զօրքերից շատերը տեսան այդ մահ ու սարսափի հասցնող՝ ձիւնի նման փալող եօթ-գլխանի դե-Շահզադէին և իւր ամեհի ու վիթխարի հրեղէն նժոյգին՝ որը բերանից փրփուը էր թափում, շատ փախցան և սկսան այս ու այն կողմը փախչել իրենց ազատելու համար, իսկ Շահզադէն էլ նրանց յետերից ընկած իւր հրեղէն նժոյգով՝ սկսեց աջ ու ձախ շարունակ թշնամու զօրքերից մեծ կոտորածներ անել ու նրանց բոլորովին հալածելով Միրան թագաւորի տէրութեան սահմաններից, շատ և շատ հեռու փախցրեց։ Սարսափելի կոտորածը շորունակում էր։

Մինչ մեր եօթ-գլխանի դե-Շահզադէն կատաղի կոռւի ասպարիզում զբաղուած էր թշնամու զօրքերի կոտորածովը, Միրան թագաւորի մօտ կոռւի արիւնալի դաշտից շտավով եկաւ հեծեսլ զօրականներից մէկը, և երեք անգամ խոնարհ գլուխ տալով, ասաց.

— Թագաւորն ապրած կենալ, պէտք է Ձեզ ու բախցնեմ, որ մենք յաղթուած և թշնամին էլ մեր մայրաքաղաքն անպատճառ գրաւած կը լինէր, եթէ որ Աստուծոյ նախախնամութեան շնորհիւ մեղ օդնութեան չը գար մի ինչ որ եօթ-շնորհիւ մեղ օդնութեան չը գար մի ինչ որ եօթ-գլխանի սպիտակ դե, որը ահուելի և զազրական

տեսքի տէր էր և փայլատակում էր կռուի դաշտում որպէս ձիւն։ Ահա, այդ եօթ-գլխանի գեն իւր հրեղէն նժոյգով՝ խառնուելով թշնամու զօրքերի մէջ՝ սկսեց թշնամու զօրքերին անխնալ կոտորել, իսկ միւս մնացեալ կենգանի զօրքերն էլ այդպիսի սարսափելի կոտորածներն ու հալածանքները տեսնելով՝ երեսները դարձրին յետ և բոլորն էլ այս ու այն կողմը փախան։ Հիմայ, տէր թագաւոր, եթէ կը հետաքրքրուէք և կը կակամենաք այդ եօթ-գլխանի դեին իւր հրեղէն նժոյգով տեսնել, համեցէք, գնանք, ես կառաջնորդեմ ձեզ կոռւի դաշտը և Գուք ինքներդանձամք ականատես եղէք այդ իմ ասած՝ եօթ-գլխանի դե հերոսին։

Միրան թագաւորը շատ ուրախացաւ այսպիսի աւետաբեր լուրի համար, բայց միւսնուն ժամանակ լրատու զինուորականի վրայ սաստիկ բարկանալով՝ ասաց.

— Ով դուք թուլասիրտներ և վախկուներ, ինչպէս չկարողացաք այնքան բազմաթիւ զօրքերով դիմադրել թշնամուն, և ամօթաբար յաղթուելով յետ էք փախել, և յանկարծ մի ինչ որ եօթ-գլխանի դե իւր նժոյգով՝ ազատել է ձեզ թշնամու կոտորածներից։ Ամօթ ձեզ, հազար ամօթ ձեր ասպետութեան ու քաջութեան, անսպիրտ թոյլ-փախկուներ...։ Լաւ, բայց մեր զօրքերի մասին ոչինչ չը պատմեցիր։ Չը լինի՞ թէ այն քո ասած եօթ-գլխանի դեր մեր զօրքերին էլ կոտորեց։ Հա, ասա, շուտ, պատմիր։ Նազիր-վեզիր

փեսաներս ո՞րտեղ են, կենդանի են թէ մեռած,  
պատմիր շուտ:

Զօրականը Միլան թագաւորին՝ նորից երեք  
անգամ խոնարհ գլուխ տուեց ու ասաց.

— Թագաւորն ապրած կենալ, ալդ իմ ասած  
եօթ-գլխանի գեղ, մեզնից ոչ ոքի չը կոտորեց մին-  
չե իմ այնտեղ եղած ժամանակս, իսկ թէ ինձա-  
նից լետով կոռւի դաշտում՝ ինչեր կարող էր պատա-  
հել, ես ոչինչ չեմ կարող տոել. գուցե և կոտո-  
րում է, ես չգիտեմ: Աւելի լաւ է, տէր թագաւոր,  
շտապենք գնալու կոռւի դաշտ և Դուք ինքներդ-  
անձամբ տեսէք բոլոր եղելութիւնը:

Միլան թագաւորը առանց ուշանալու՝ իս-  
կոյն զրահաւորուեցաւ ընտիր զէնքերով ու դուրս  
գալով պալատից նստեց ձի ու մի քանի վարժ ու  
ընտիր զօրքով շրջապատուած, արագ քայլուած-  
նելով՝ եկան-հասան կռուի դաշտը ու հեռու-մօ-  
տիկ մէկ տեղ կանգնելով՝ սկսան մեծ հետաքըր-  
քը ութեամբ և ուշի ուշով դիտել արհւնալից աս-  
պարիզում եղող կատաղի կռուողներին: Միլան թա-  
գաւորը երբ հեռուից տեսաւ կռուի դաշտում եօթ-  
գլխանի դե-նահզադէին՝ որը վիթխարի դեալին  
թուրը ձեռքին բռնած մեծ քաջութեամբ պատե-  
րազում էր և թշնամու զօրքերին անխնայ կո-  
տորում, շատ հաւանեց և ասաց ինքն-իրեն. —  
«Փառք Քո Մեծութեան. Տէր, որ այսպիսի արա-  
լածներին էլ ես ստեղծել: Ի՞նչ պէտք է լինէր  
մեր զրութիւնը, եթէ Քո նախախնամութեամբ  
այս եօթ-գլխանի գեղ իւր հրեղէն նժողով՝ չօգ-

նէր մեզ: Մենք ամենքս իսպառ կորած և բոլորո-  
վին ոչնչացած կլինէինք թշնամուց, եթէ այս գեղ  
չերեար: Ես Սստուծով, կռուից լետով, կը խնդ-  
րեմ այդ կռուի հերոս եօթ-գլխանի գլեին՝ որ մեզ  
հետ գայ պալատ և մի կերպ համոզելով՝ կտանեմ  
և մեծ մեծ պարզեներ տալով՝ կը նշանակեմ  
իմ բոլոր զօրքերի վրայ ընդհանուր հրամանատար  
և կառավարիչ: Այս տեսակ մեծ ոյժի տէր արարա-  
ծի պահէլլ՝ նամանաւանդայիսի մեծ կռուի ժա-  
մանակ, շատ հարկաւորէ: Այս բոլորը շատ լաւ,  
բայց ուր են անլայտացել իմ նազիր-վեզիր փեսա-  
ներս որ չեն երեսում: Չը լինի՞ թէ այս վիթխարի  
գեղ կռուի մէջ՝ նրանց սպանել է. Տէր Աստուած,  
ի՞նչպէս իմանամ...: — Ահա այս մտածմունքներով  
յանկարծ Միլան թագաւորը իւր մօտ կանգնած  
զինուորականներից մէկին հարցը եց.

— Ե՞լ, զինուորական, արդեօք, չե՞ս գիտում  
որտեղ են նազիր-վեզիր փեսաներս: Սպանուած  
հօ չե՞ն, գնա՞ շուտ տեղեկութիւններ բեր նրանց  
մասին:

Զինուորականը շտապ հեռացաւ դէպի կռուի  
դաշտը և կրկին շուտափութ վերագանալով՝ երեք  
անգամ խոնարհ գլուխ տուեց Միլան թագաւորին  
և պատասխանեց:

— Թագաւորն ապրած կենալ նրանք սպանուած  
չե՞ն, այլ կենդանի են և մեզանից շատ և շատ  
հեռու, մեր զօրքերի առաջ կանգնած՝ մեծ քա-  
ջութեամբ պատերազմում են թշնամու հետ, իսկ  
եօթ-գլխանի գեղ էլ, ինչպէս Դուք տեսնում էք,

ահա, այստեղ մեծ ջարդ է տալիս թշնամուն. Մեր զօրքերը թշնամու զօրքերից համարեա մեծ մասին կոտորել են, իսկ կենդանի մնացածներից էլ շատերին հալածելով՝ յետ են դարձրել և բոլորովին փախցրել: Հիմայ, Զերդ Մեծութիւն Մեծարքայ տէր-թագաւոր, իմ կարծիքով՝ մի քիչ կարճ ժամանակից յետոյ՝ կռուի ասպարէզը բոլորովին կը խաղաղուի: Ճիշտն ասած, սկզբներում, մինչեւ եօթ-գլխանի գևի երեալը, Զեր նազիր-վեզիր պատուաթան փեսաները մեր զօրքերի մեծ մասի կոտորածները տեսնելով՝ սարսափահար ու զում էին յետ փախչել, բայց հենց որ եօթ գլխանի գևն երեաց և սկսեց անխնայ կերպով սրախող խող անել թշնամու զօրքերին, նրանք էլի նորից լրենց ոյժերը կրկնապատկերով՝ սկսեցին մեծ քաջութեամբ դիմադրել և հիմայ՝ այս ըրովէիս էլ մեծ ոյժով կռուում են:

Միրան թագաւորն երբ այդպիսի խօսքերը լսեց նրանցից, շատ ուրախացաւ և սկսեց իւր տեղից նորից ուշագրութեամբ երկար ժամանակ նայել կռուին: Յանկարծ նա իւր կանգնած տեղից նկատեց՝ որ եօթ-գլխանի գև Շահզադէ ձեռքերից արեան կաթիլներ էր հոսում: Խոկոյն մաքի ընկաւ, որ այդ նրա ձեռքերի վերանորումը՝ կամ անգութ և բարբարս թշնամու զօրքերի սրերի հարուածներից է պատահել, և կամ իւր ձեռքին բռնած դեալին սրիցն է վիրաւորուել, ուստի շտապով իւր կանգնած տեղից ձին քշելով՝ գնաց, մատեցաւ մեր եօթ-գլխանի գև Շահզադէին այն ժա-

մանակ, երբ թշնամու զօրքերը բոլորովին կոտուել և պատերազմը մի քիչ խաղաղուել եր: Միրան թագաւորը շտապով զրպանից հանեց իւր մետաքսեալ մարդարտա հիւս թաշկինակն և շալրեց եօթ-գլխանի գև Շահզադէին: Մեր քաջ Շահզադէն՝ իսկոյն ձեռքով բռնեց իւրեն շպրտուած թաշկինակը ու գրեց գրպանը, իսկ մի ուրիշ թաշկինակով փաթաթելով իւր արիւնոտած ձեռքերը, մտրակեց իւր հրեղէնին և յանկարծակի աներեւութացաւ պատերազմի դաշտում գտնուողների տչքից: Մեր Շահզադէի հրեղէն նժոյգը երկար ժամանակ օդի մէջ սրարշաւ սլանալուց յետոյ, վերջապէս ցած եկտ կրկին այն կանաչազարդ մարդգետնի վրայ, որտեղ կապուած էր Շահզադէի կաղ ձին: Խոկոյն մի քանի անդամ համբուրեց հրեղէնի աչքերից և արաբերէն լեզուով շնորհակալութիւն յայտնելուց յետոյ՝ բաց թողեց դաշտը հանգստանալու, իսկ ինքն էլ ձիու վրայ շալակած խուրջինից հաներով ճանապարհային ուտելերէններ՝ մի փոքր կերակրուեց, ու շատ լոգնածութիւնից պարկեց ննջելու: Մի փոքր ժամտնակից յետոյ զարթնելով, կանչեց իւր մօտ հրեղէն նժոյգին, սորից համբուրեց աչքերից, պոկեց պոչի մազերից մէկ հատն ու գրեց ծոցը, հանեց իւր վրայից զրահաւոր հագուստը և իւր վրայ կրած բոլոր զէնքերի հետ միասին՝ դարսեց կարգով հրեղէնի մէջքին, յետոյ ծոցից հանելով հրեղէն նժոյգի կիսալրուած մազը՝ բոլորովին ալրեց, ալրելուն պէս՝ իսկոյն, հրեղէնը անյալտացաւ: Հրեղէն նժոյգի անյալտա-

նալու պէս, Շահզադէն նորից կերպարանափոխուեցաւ և ստացաւ իւր առաջուայ իսկական կերպարանքը: Մեր անվեհեր և քաջ Շահզադէն իրեն ալսքան տարած յաղթանակների համար, գոհունակ սրտով մի քանի անգամ փառք տուեց Աստուծուն, նստեց իւր կաղ ձիու վրայ և կէս գիշերին, կրկին ծպտեալ կերպով վերադարձաւ իւր սենեակ: Վերադառնալով տուն, Շահզադէն տեսաւ որ իւր սիրելի ու պաշտելի Փէրիխանում ամուսինը աղիողորմ կերպով լալիս էր: Նրա արտասուտխառն աչքերը Շահզադէի սիրտը յուգեց և մօտենալով նրան, ամուր գրկեց և մի քանի անգամ աչքերից ու ալտերից սիրու կարօտագին ջերմ համբուրներ տալուց լետոյ, հարցըեց.

— Փէրիխանում, աղաւնեակս, ինչու էիր լալիս. շուտ սսա, հոգիս, բնչն էր լացիդ պատճառը: Երբ Փէրիխանումը նկատեց որ իրեն գրկող և համբուրողը՝ իրեն կողակից՝ իւր սիրելի Շահզադէն էր, շատ ուրախացաւ և մի մեծ ախ քաշելով, կծկտուր ձայնով պատասխանեց.

— Շահզադէ, այդ դու ես. վերջապէս եկար. քեզ նորից կենդանի կարողացաւ տեսնել աչքերնվա: Ա՛իս, իմ հոգոյս սիրտկան Շահզադէ, գիտէս ինչու համար էի լալիս: Այս մի քանի օրում դու չեկար և չերևացիր, շատ վախեցաւ, մտածեցի. «Չը լինի թէ պատերտազմում սպանեցին իմ սիրելի ու սրտիս սիրեկան Շահզադէիս, և կամ թէ թշնամիները գերի տարան և բանտարկեցին մի որև տեղ: Օ՛չ, եթէ իսկապէս մտածմունքներիս համա-

ձայն՝ միշտ իրականութիւն դառնալ և ես յաւիտենական զրկուեմ իմ Շահզադէից, բնչ պէտք է լինի այնուհետև իմ ճարս: Արժէ արդեօք որ նրա մահից յետոյ ես ապրեմ» — ահա այս սարսափելի մտածմունքներն էին որ սիրտս կտրատում էին ու այս մի քանի օր՝ գիշեր ու ցերեկ շարունակ աղիողորմ լալիս էի երեխալի պէս:

Երբ Շահզադէն Փէրիխանումից այս տեսակ սիրտ կտրատող խօսքերը լսեց և ինքն էլ անձամբ ականատես եղաւ նրա տիրութեանն ու լացին, այս անգամ իւր անհուն սիրու կրակը աւելի ու աւելի բորբոքուելով իւր սրտում, նորից փաթաթուեց Փէրիխանումին ու ամուր գրկելով կրծքին, սկսեց շարունակաբար համբուրել աչքերից ու ասաց.

— Մի վախենար, հոգիս, աղաւնեակս, ես Աստուծանից միշտ լոյս եմ ունեցել և այժմս էլ ունիմ, որ ինձ պատերազմում միշտ յաղթող կը հանդիսացնի, և ամեն մի դժուարինը՝ որը մարդկային ոյժից վեր է, ես Աստուծոյ օգնութեամբ կը փշեմ, կը խորածակեմ, կը տապալեմ, և մինչեւ մահս՝ իմ անունը անջինջ կը պահպանէ աշխարհի երեսից: Ահա, սիրելիս, մի փոքր էլ սպասիր, և շուտով կը տեսնես թէ քո այդ անամօթ ու լիրը փեսաներիդ ինչպէս պէտք է խալտառակեմ բոլորի առաջ իրենց վատ արարք: Ների ու լանգզնաբար պալատից դուրս վրնգելուդ համար՝ որոնց ոխը համարեա մինչեւ այսօր խեղդել է ինձ:

Սորանից յետոյ Շահզադէն, պատերազմի բոլոր եղելութիւնը Փէրիխանումին մանրամասնօրէն պատմելուց յետոյ, հանեց գրպանից Միրան թագաւորի մետաքսանման մարդարտահիւս թաշկինակը և տալով նրան, ուրախուրախ ասաց.

— Ահա, սիրելիս, այս էլ քեզ երրորդ նշան քո փեսաներիդ արտրքները երեսին խփելու համար, Ուրախացիր աղաւնեակս, որովհետեւ թէ նրանց վրայ առաջուց դրած փմ երկու նշաներովն և թէ ահա այս թաշկինակովը, մէկ օր ես պատառելու եմ նրանց երեսի վրայ ծածկած դիմակը, որը և հեռու չէ, և ամացուցանելու եմ, որ ոչ թէ նրանք են եղել իրենց կեղծ քաջութիւնների հերոսները, այլ ես եմ եղել, և կարծում եմ որ հէնց ալսքանն էլ բաւական է ամենքին, որ նրանք բոլորեքեանք կը համոզուեն, և նրանց բոլորովին կը ստորացնեն իրենց նազիր վեղերութեան պաշտօնից ու բոլորովին Միրան թագաւորի աչքիցն ընկնելով կը ոչընչանան:

Շահզադէն և Փէրիխանումը, շատ երկար ու բարակ խօսակցելուց յետոյ, կէս գիշերին խոր քուն մտան:

Մինչ Շահզադէն ու Փէրիխանումը գիշերուայ խոր քունն էին մտած, պատերազմը խաղաղուելուց յետոյ Միրան թագաւորը իւր նազիր-վեղիր փեսաներով և միւս կենդանի մնացած զօրքերով, գիշերուայ ժամուն, երաժշտութեան փողերի ու գիշերուայ ժամուն, երաժշտութեան փողերի բարձեփորների նուազածութեամբ և կեցցէների բարձրագույն աղաղակնելով ու մեծ յաղթական հանդէրագույն աղաղական հանդէրագույն:

սով՝ պատերազմական ասպարիզից վերադարձան պալատ։ Խւկոյն Միրան թագաւորի հրամանով մեծ խնջոյք սարքուեցաւ։ Պալատի դահլիճում բացուեցաւ մեծ արքայավայել ընդարձակ սեղան, և սեղանի շուրջը հաւաքուեցին պալատի մէջ բոլոր եղողները։ Սկսուեցաւ կերուխումի ուրախ հանդէսը՝ ուր լսում էր երաժշտական նուազածութիւնը և կեցցէների աղաղակը։

Մինչ Միրան թագաւորն և բոլոր սեղանսկիցները՝ կերուխումի տաքացած տրամադրութեան տակ էին և իրենց հայլենիքի ու ժողովրդեան ազտառութեան համար՝ իրար երկարակեցութեան կենացների գինու բաժակներն էին դատարկում, մեր հերոս Նահզադէն ալդուկների ձայնից արդէն զտրթել էր և ականջ էր գնում պալատում եղողների ուրախութեան աղաղակներին։ Քիչ ժամանակից յետոյ, նա հազնուեց գեղեցիկ ու մաքուր, ոսկէզօծ մազերը գեղեցիկ սանդրեց, Միրան թագաւորի մետաքսեալ մարդարտահիւս թաշկինակը գրպանը դրեց և գիշերուայ մութ խաւարի մէջ գուրս գալով սենեակից՝ գնաց դէպի պալատ։ Երբ մօտեցաւ պալատին, տեսաւ որ՝ թէ սրահում և թէ պալատի պատշգամբներում ահագին բազմութիւն էր հաւաքուել, որոնք մեծ հետաքրքրութեամբ նալում էին պալատի պատուհանների միջով՝ դահլիճում հաւաքուած Միրան թագաւորի արժանապատիւ սեղանկիցներին։ Նահզադէն արագ քայլերով անցաւ սրահը, յետոյ բարձրացաւ պալատի սանդուխտներով վերև պատշգամ-

բը և խառնուելով՝ հանդիսականների հետ՝ թագ-նուեց մի յարմար տեղ։ Հաւաքուած հանդի-սականները և որանց հետ էլ պալատի ծառալող-ները, որոնք նոյնպէս եկել էին Միրան թագաւորի և սեղանակիցների յաղթական տօնախմբութիւ-նը տեսնելու, այնքան զբաղուած էին, որ ոչ ոք նրանցից Շահզադէին նկատողութիւն չարաւ։ Մեր Շահզադէն օգուտ քաղելով՝ հանդիսականների ա-նուշագրութիւնից, նորից կամաց-կամաց գողունի կերպով՝ հանդիսականների միջով առաջ անց-նելով, մօտեցաւ պալատի դահլիճի դրանն և գլու-խը քարշ գցած կանգնեց ու սկսեց մեծ հետա-քրքրութեամբ սեղանաւորների խօսակցութեանն ա-կանջ դնել։

Միրան թագաւորը որպէս սեղանապետ և կառավարիչ ընդհանուր սեղանակիցների, իրենից սկսած մինչև վերջին պաշտօնեանների կենաց գի-նու բաժակները գատարկելուց յետով, չորս մեծ բաժակներ գինիով լցնել տալով՝ վերցրեց ձեռքը և ոտքի կանգնելով՝ ասաց։

— Ո՞վ դուք, իմ սիրելի սեղանակիցներ, թէ և մենք բոլորս միտսին առաջին անգամին պարտա-ւորուած էինք խմել այն եօթ-գլխանի սպիտակ կենաց բաժակը, բայց որովհետեւ այդ հերո-սը ալստեղ չէր գտնւում, այդ պատճառով էլ բո-լոր կենացներից յետով եմ առաջարկում։ Ահա, այս չորս բաժակով, ես ձեզ բոլորեցունց, սիրելիներս, առաջարկում եմ դատարկել այն եօթ-գլխանի դեմ կենացը, որն այսօր արիւնալից կոռուի դաշտում՝

Սստուծոյ նախախնամութեամբ մեզ օգնութեան եկաւ իւր հրեղէն նժոյգով ու թշնամու զօրքերին սարսափահար անելով ու մեծ ջարդ տալով, հալա-ծեց նրանց և հալենիքն ու մեր սիրեցեալ ժողո-վրդեանը ազատեց թշնամու սրերից։ Սստուծ թող երկար կեանք տայ նրան։ Եթէ նա չլինէր և մեզ օգնութեան չգար, մենք յաւիտենական կորած և ոչնչացած էինք։ Անգութ թշնամին մեզ բոլորիս սրախողխող անելով՝ բոլորովին վերջ կը տար մեր կեանքին, և մեր տէրութիւնն էլ կը նուա-ճէր։ Ուրեմն, սիրելի սեղանակիցներ, վերցրեք ա-մենքդ գինու լի բաժակները և դատարկեցէք մինչև վերջին կաթիլը այն եօթ-գլխանի դեմ կե-նացը։ Պէտք է ասեմ, շատ ափսոսում եմ, որ պատերազմը խաղաղելու ժամանակ, յանկարծ այն եօթ գլխանի դեմ նժոյգը օդի մէջ սլանալով՝ բո-պէտպէս անյալտացաւ մեր աչքից և բոլորովին չկարո-ղացանք տեսնել՝ թէ որ կողմը գնաց։ Ես շատ սրտով ուզում էի որ մի կերպ նրան համոզելով բերէի պալատ, որովհետեւ այդ տեսակ արարածի պահելը շատ հարկաւոր էր մեզ համար։ Նա ամեն ըովէ կը հարկաւորուէր մեզ, որովհետեւ նա եղաւ միայն թշնամու կործանման պատճառը և ոչ մի ուրիշ մարդ։ Եթէ այն եօթ-գլխանի դեմն մի կերպ մեզ մօտ բերէինք, մեր տէրութիւնը միշտ ապահով կը լինէր թշնամու ամեն տեսակ յարձա կումներից, որովհետեւ ոչ թէ միայն ինքն էր կո-տորում թշնամուն, այլ և իւր հրեղէն նժոյգը։ Հիմա, կըկին երրորդ անգամն եմ առաջարկում

ձեզ, ով իմ սկրելի սեղանակիցներ, խմել այդ եօթ-գլխանի դեմ երկայնակեցութեան բաժակները:

Միրան թագաւորի պատուէրով իսկոյն սկը-սուեցաւ երաժշտական նուեգների ու շեփորների ցնծագին նուեգածութիւնն և երկար ուռաներ: Հէսց այդ միջոցին, երբ Միրան թագաւորը և ի-րեն սեղանակիցները հաջագէի կենաց գինիով լիք բաժակներն էին դատարկում և ուռաների գո-ուռմ գոչումներ էին բարձրացնում պալատի դահ-լիճում, գահիճի դրան մօտ կանգնած Շահզադէն էլ իսկոյն դուռը յանկարծ բանալով՝ ներս մտաւ դահիճ և շտամշտապ մօտենալով Միրան թա-գաւորին, երեք անգամ խոնարհ գլուխ տուեց ու քաղցրաժպիտ դէմքով ասաց.

—Մեծարքալ, տէր թագաւոր, ահա, այդ Զեր ասած եօթ-գլխանի սպիտակ զազրական տեսքի տէր դեր ես եմ, այս, ես, Զեր արքունիքից՝ իմ սիրելի և սրտիս պաշտելի Փէրիխանումի հետ միասին ամօթալի կերպով աքսորուածը և Զեր բազերի ու հաւերի վերակացու հաջգոտէն: Ես շնոր և շատ շնորհակալ եմ Զեր այդքան իմ կենաց բարեմտաղ-թութիւնների համար: Մեծարքալ տէր, արգեօք, կարելի է Զեզ սեղանակից համարուել և Զեր ու-րախութիւններին մասնակից լինել թէ ոչ:

Միրան թագաւորը և նրա հետ եղող բոլոր սեղանակիցները, երբ յանկարծակի իրենց մօտ տե-սան մի սիրուն, գեղեցիկ դէմքով, սոկէգունգուռ մազերով, բարձրահասակ, ամուր կազմուածքով և գեղեցիկ ու մաքուր հագնուած երիտասարդ հահ-

զադէին՝ շատ ուշախացան, քայց քիչ յետոյ մտա-ծելով՝ որ մի գուցէ չար ու դաւաճան դիտու ու-րութիւններով լի մի ուշից օտար անծանօթ անձ-նաւորութիւն լինի և ոչ իրենց բարի ցանկացողը՝ մի փոքր վախեցան և իսկոյն շտապով իրենց այն-քան վտանգներից ու դժբախտութիւններից ազա-տող Շահզադէին՝ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաները մի փոքր հեռացնելով փառահեղ խնջու-քին մասնակցող սեղանաւորներից, ամուր ոյժով հրեցին շատ հեռու մինչև պալատի դուռը և յար-ձակուելով վրան՝ գոռացին.

—Ինչ ասացի՞ր, մեր բազերի ու հաւերի սպա-սաւորող Շահզադէն ու եօթ-գլխանի դեմ կեր-պարանքով պատերազմի արիւնալից դաշտում թըշ-նամիներին կոտուող հերոսը՝ ասում ես որ դու ես, երեք, սուտ ես խօսում: Բայց շատ լաւ, իսկ ե-թէ իսկապես մեղ կամենում ես հաւատացնել քո Շահզադէ լինելով և իրաւ կը հաստատես էլ փատե-րովդ, մենք այդ դէպքում այլ ևս խօսք չունենք ասելու և յաղթութիւնը քոնն է լինելու: Դէ, ու-րեմն, շուտ արա, ով գու յանդուդն և անամօթ լիրը գաւաճան սրիկալ, ասա շուտ, տեսնենք ու-նես փաստեր՝ վերոյիշեալ խօսքերդ հաստատելու համար թէ ոչ: Նորից ենք կրկնում, հաստատիր փատերովդ՝ որ հաւատանք, եթէ ոչ, հակառակ դէպքում, լաւ գիտենաս և հաւատացած եղիր, որ գլուխդ կտրել կտանք այդպիսի ստեր խօսալուդ համար, իսկ մարմինդ էլ մաս-մաս անել տալով շների ու գալլերի բաժին կը շինել տանք: Այ դու 9

խեղճ սզբանելի, ինչու ես սուտ խօսում, մըտեղից դու կարող էիր մեր բոլորեցունց ազատիչ՝ այն վիթու խարի եօթ-պլխանի գել լինել, քանի որ դու հողեղին մահկանացու արարած ես, իսկ նա գեի ծնունդ։ Այդ քո բոլոր խօսքերդ հնարովի ստախօսութիւն է, և դու մեղ բոլորեցունց խարում ես՝ քո չար գիտաւորութիւններդ իրագործելու համար։ Դարձեալ նորից կրկնում ենք, հաստատիր փաստերով։

Նահզադէն երբ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներից այդ տեսակ լանդուգն խօսքերը լսեց և նրանց վերին աստիճանի կոպիտ և անքաղաքավարի վարմունքը տեսաւ, շատ վիրաւորուեց և վարի ևս չկարողանալով այդպիսի խայտառակ վիրաւորանքն ու բոլոր բարձրաստիճան հիւրերի առաջ ամօթաբար անարգանքը տանել, կրակի կայծերի պէս մէկ ակնիմարթում բոցավառուելով՝ ուզեց Միրան թագաւորի նազիր վեզիր փեսաներին տեղն ու տեղը ապտակի հարուածով քիթը ու պառունդ ջարդ ու փշուր անել, բայց մի կերպ իրեն զսպեց ու շտապով Միրան թագաւորի մետաքսեալ մարդարտահիւս թաշկինակը գրպանից հանելով, բարկութեան վրէժինդրութեամբ լցուած՝ կատաղի հայեացքով և սրանեղութեամբ՝ մեծ ոլժով շպրտեց Միրան թագաւորին ու ինքն էլ մի քիչ մօտ գնալով գէպի խնջութի սեղանը, բարձրագոչ ձախով Միրան թագաւորին ասաց։

— Մեծարքալ տէր թագաւոր, քանի որ Զեր սիրելի նազիր-վեզիր փեսաները ինձ՝ արդար և անմեղ

մարդուս՝ բոլոր մեծամեծների և պալատականների առաջ խալտառակեցին ու իմ բոլոր խօսքերը ստախօսութեան տեղ ընդունելով՝ յանդգնաբար և ամօթալից կերպով ինձանից փաստեր պահանջեցին, ուստի խոնարհաբար խնդրում եմ, որ Զեր մետաքսեայ մարդարտահիւս թաշկինակը լաւ աչքի անցկացնէք ու ստուգէք իսկութիւնը՝ թէ այդ մետաքսեալ մարդարտահիւս թաշկինակը իսկապէս Զերն է թէ ոչ։ Եթէ հարկաւ Զեր սեփհական թաշկինակն է լինելու, ուրեմն և այդ կինի իմ խօսքերիս հաստատման ամենամեծ փաստը։ Ունիմ և ուրիշ փաստեր, եթէ կը կամենաք, մեծաւ ուրախութեամ կապացուցանեմ ու շուտով էլ կը հաստատեմ իմ վերոլիշեալ խօսքերիս մմարտութիւնը՝ որ ես, Զեր բագերի ու հաւերի վերակացուն և Զեր նազիր վեզիր փեսաների գրդմամբ պալատից աքսորուած Նահզադէն՝ ոչ թէ համարձակուել եմ ստախօսութեամբ և զինծու խօսքերով Զեզ բոլորեցունց խաբել, ալլ որ բոլոր ասած խօքերս զուտ ճշմարտութիւն է, և իսկ և իսկ ես Նահզադէն եմ, այս ես, եօթ գլխանի սպիտակ գեկ կերպարանքով երեացող ու անգութ թշնամու զօրքերին մահ ու սարսափ հասցնող պատերտզմի հերոս Նահզադէն, և ոչ մի ուրիշ գաւաճան ու սրիկալ անձնաւորութիւն, ինչպէս Զեր նազիր վեզիր փեսաներն անուշանեցին ինձ։

ինջուքին մասնակցող սեղանաւորների մէջ տիրեց մեռելալին լուութիւն։ Ամենքը սկսեցին սարսափահար հայեացքով նախել Միրան թագաւորի

նազիր-վեզիր փեսաներին՝ որոնք Շահզադէի խօս-  
քերը լսելուց յետոյ՝ վախից դեղնել ու մեռելի  
գոյն էին ստացել։ Մշան թագաւորը իւր սեղ. հա-  
կան մարգարտահիւս թաշկինակը լաւ մանրազնին  
տնդղելուց յետոյ՝ իսկոյն ճանաչեց, որ իրեն սեփ-  
հականն է և երկար ժամանակ խոր մտածմունք  
ների մէջ ընկնելով՝ վերջապէս վճռեց որ իրեն  
դիմաց կանգնած և բարձրաձայն խօսող՝ ոսկէգան-  
գուռ մազերով երիտասարդ անձնաւորութիւնը՝ իսկ  
և իսկ իւր ամենափոքր փեսայ՝ բագերի ու հա-  
ւերի վերակացու Շահզադէն է, և ուրեմն դա-  
է եղել իսկապէս եօթ-գլխանի դեք, որին թըշ-  
նամու հետ պատերազմելու ժամանակ, շպրտեց  
իւր թաշկինակը՝ արիւնոտ ձեռքերը փաթաթե-  
լու համար։ Միրան թագաւորը շտապով տեղից վեր-  
կացաւ և մօտենալով Շահզադէին, ձեռքիցը բըռ-  
նեց ու տարաւ ինչուքի սեղանը, մի քանի անգամ  
համբուրեց Շահզադէի ոսկէգանգուռ մազերից ու  
քաղցրաժպիտ դէմքով ասաց. «Խնդրեմ, սիրելիս,  
մանրամասնօրէն պատմիր մեզ, թէ ինչպէս դու-  
եօթ-գլխանի դեք կերպարանքի փոխուեցար և  
կամ թէ հրեղէն նժողը՝ որտեղից և ինչ կերպով  
ճարեցիր»։

Շահզադէն նստեց դահլիճում սեղանաւորների  
մէջ Միրան թագաւորի կողքին և մի փոքր կերա-  
կրուելուց ու Միրան թագաւորի, թագուհու և նը-  
րանց աղջկերանց կենաց բարեմաղթութիւնները՝  
դինիով լի բաժակներով իրար ետևից դատարկելուց  
յետոյ, ոտքի կանգնեց, ու սկսեց խօսել ալսպէս.

—Մեծարքայ տէր թագաւոր, մեծաբարոյ թա-  
գուհի, և դուք սիրելի սեղանաւորներ, ինչպէս  
և տռաջուց ասացի, ես, իսկ և իսկ ձեր բոլորից  
արտաքսուած ձեր բագերի ու հաւերի վերակացու  
Շահզադէն եմ։ Ոչ թէ միայն ձեր կատաղի կռուի  
ասպարեզում՝ թշնամու զօրքերին սարսափեցնող  
ու կոտորող եօթ-գլխանի դեք կերպարանքի տէր  
անձնաւորութիւնն եմ, այլ և ձեր, Մեծարքայ  
տէր թագաւոր, և ձեր ամուսնու՝ մեծաբարոյ թա-  
գուհու անբուժելի հիւանդութիւնից ազատողն ու  
ապրեցնողն եմ։ Հիմայ, ես հաւատացած եմ, որ  
այս իմ ասած խօսքերիս համար ևս կը պահանջէք  
հասաատ փաստեր և Դուք ևս ստախօս կանուանէք  
ինձ՝ ինչպէս մի փոքր առաջ՝ բոլորեցունց մօտ՝  
Ձեր յարգելի պատուարժան նազիր-վեզիր փեսա-  
ներն անուանեցին ինձ, բայց ես, այս, ես, յու-  
սով եմ Աստուածանից՝ որ դրան ևս կապացու-  
ցանեմ և երեք չեմ ստորացնի ինձ Ձեր նազիր-  
վեզիր փեսաներիդ առաջ, ինչպէս որ իրենք պէտք  
է այս րոպէին ստորանան և ոչնչանան իւրեանց  
վատութիւնների պատճառով։ Ահա, ալժմ ասեմ  
Ձեզ իմ նոր արտասանած խօսքերիս հաստատման ա-  
պացուցող փաստերը։ Խօնարհաբար խնդրում եմ  
Ձեզ, Մեծարքայ տէր թագաւոր, որ մի փոքր նե-  
ղութիւն կրէք և տեսնէք Ձեր նազիր-վեզիր փե-  
սաների ականջների ծայրերի փափուկ մսերը և  
երկու աշ ձեռքերի ճկոյթ մատների կտրատած տե-  
ղերը և հարցնէք իրենց, թէ ով է արդեօք դրանց  
վրայ այդ նշանները դրել՝ Ձեր և թագուհու ան-

բուժելի հիւանդութիւններից բժշկող, և պառաւ կտիարդ կնոջ ասած՝ քառասուն սարի ետև գըտնուող խոր անդունդի մէջ եղած քարտաժայում բնակուող՝ հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթը ճարելու համար:

Միրան թագաւորի խնջուքի սեղանին մասնացող հիւրերի և նամանաւանդ դրսում պատըշագամբի վերալ հաւաքուած բազմաթիւ հանդիսականներից մէջ՝ իրարանցում ընկաւ. պատշագամբում ժողովուած հանդիսականներից ամենքն էլ աշխատում էին մի կերպ իրար առաջը կտրել տեսնելու իրենց բադերի ու հաւերի վերակացուին, որը պէտք է բոլորի առաջ փաստերով և ապացոյցներով խալտառակէը Միրան թագաւորի սիրելի նազիր-վեզիր փեսաններին ու իրեն արդարացնէ՛ ստախօսութեան մեղադրանքից: Ալդ նոյն միջոցին՝ նկատելի էր լինում ամենքին, որ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսանները հետզհետէ աւելի ու աւելի կորցնելով գէմքի գոյնը՝ բոլորովին ալլալուեցին ու սկսան վերջապէս ամբողջ մարմնով՝ աշնանալին թափուող տերևների պէս դողալ իրենց նստած տեղները: Նրանք իրենց մտքներումն ասացին. «Ալժմ ճիշտ որ մեր բադերի ու հաւերի վերակացու զահզագէն իւր սիսը հանեց մեզանից: Հիմայ արդէն բոլորովին խալտառակուեցինք ամենքի առաջ: Մեր անդիտութեամբ ու անհեռատեսութեամբ և լիմար խելքներով միայն նոր կարողացանք իմանալ, որ մեզ վրայ նշաններ դնողը և զանազան դեալին կերպարանքներով երեացող անձնաւորութիւնը՝ ոչ թէ

իսկապէս եղել է դևի ծնունդ՝ որպէս մենք կարծում էինք, այլ Միրան թագաւորի փոքրիկ փեսան և Փէրիխանումի նշանած Շահզագէն, որին պալտից ամօթալի կերպով վոնդել տուինք: Վայ մեր գլխին, հողը մեր գլխին, արդէն բոլորովին կորանք»— և գլխները քարշ դցելով՝ սկսան առաջուանից աւելի գողալ:

Ծերունի Միրան թագաւորը խնջուքի սեղանից գողգողալով վերկացաւ և մօտենալով իւր նազիր-վեզիր փեսաններին, նալեց մօտիկից Շահզագէի ասած տեղերը, և լաւ մանրազննին տնդղելուց յետով, տեսաւ որ Շահզագէի ասածի նման՝ թէ նրանց ականջների ծալրերի փափուկ մսերը և թէ աջ ձեռքի ճկոյթ մատների ծալրերը իսկապէս կըտրուած են, իսկոյն հասկացաւ բանի էութիւնը և տեղն ու տեղը մնաց քարացած տրձանի նման կանգնած: Մի փոքր ժամանակից յետով ուշքի գալով՝ թքեց խարերալ և իսկապէս ստախօս նազիր-վեզիր փեսանների երեսին և շտապով դառնալով Շահզագէին, փաթաթուեց նրա զիովը և երկար ժամանակ համբուրելով նրա ոսկէգանգուռ մազերից, աղերսում ու ներողութիւն էր խնդրում, ասելով.

— Ներիր ինձ ծերունուս, իմ սիրելի, համբերատար Շահզագէ, ներիր: Ալժմ, երբ աչքերովո անձամբ ականատես եղալ իսկութեանը, նորից կրկնում եմ, որ այժմ, ամբողջ հոգւով և սրտով հաւատում եմ, որ բոլոր քաջութիւնների և յաղթանակների տէրն ու տիրական՝ քաջազնեալ հե-

ըսուը դու ես եղել և ոչ թէ նազիր-վեզիր փեսաւ-  
ներս, որոնք քեզ, որպէս բագերի ու հաւերի վե-  
րակացուիդ, այնպէս անարդ կերպով՝ բոլոր մե-  
ծամեծների առաջ խայտառակեցին և նրանց գըրդ-  
մամբ՝ իմ սիրելի Փէրիխանում աղջկաս հետ միա-  
սին պալատից գուրս արի: Ների՞ր ինձ, իմ սիրելի  
Շահզադէս: Հաւատում եմ նոյնպէս, որ իսկ և իսկ  
դու ես եղել՝ թէ իմ, թէ թագուհու և թէ ամ-  
բողջ տէրութեան ազատիչ հըշշտակը և ոչ թէ իմ  
ստոր, նենդ և ստախօս նազիր-վեզիր փեսաները՝  
որոնց գու քո արհեստական նշաններովդ գերել  
ես՝ յաւիտենական քեզ ծառաներ դարձնելուդ հա-  
մար: Կրկին հաւատում եմ, որ իմ կեանքի, հայ-  
րենիքի ու ժողովրդեան՝ արիւնարըու թշնամու  
սրերից ազատողն ու կեանքը տուողը՝ միմիայնելի՛  
դու ես, իմ սիրելի և աչքի լոյս Շահզադէ: Նո-  
րից կրկնում, ների՞ր ինձ, ների՞ր ինձ մեղաւոր ծե-  
րունուս, որովհետեւ ես հեռատես չը գտնուեցալ  
քո վերաբերմամբ. չը քննեցի քո ներքին Աստուա-  
ծալին շնորհները և չաշխատեցի իմանալ քո ինչ  
անձնաւորութիւն լինելը, որի պատճառով և գու  
զրկուեցար ամեն բանից և անարգուեցար ու վարն-  
դուեցար շքեղ պալատից: Բայց այժմ, ես որպէս  
ամբողջ թագաւորութեան տէր և թագաւոր, զգում  
եմ սիալս, որ ես պարտական էի հէնց առաջին  
պատահած դէպքից՝ ալսինքն իմ անբուժելի հի-  
ւանդութեանս առողջանալու օրից, այն, կրկնում  
եմ նորից, պարտական էի իսկութիւնը ստուգել և  
ծշմարտութիւնը երևան հանել, բայց, ախ զաւակս,

ների՞ր ինձ այդ բանի համար, իմ սիրելի և հոգոյս  
հատոր Ջահզադէ: Հիմալ որովհետեւ դու քո  
համբերատարութեամբ գետին տապալեցիր ու  
սեերես արիր բոլորի առաջ իրենց անարդ և  
ստոր խօսքերի պատճառով, իսկ դու էլ սորա-  
նից յետոյ քո ծշմարտութեանդ համար արժանա-  
ցար իմ թագաւորական գահի վերան նստելուն,  
ուստի և նրանց արժանի պատիժը տալու իրաւուն-  
քը թողնում եմ քեզ՝ որպէս ապագալ թագաւորիդ:  
ինչպէս կը կամենաս, այնպէս էլ պատժիր: Հա-  
ւատացնում եմ քեզ, որ եթէ այժմ չը գալիք գու-  
ալստեղ և ծշմարտութիւնն ու իսկութիւնը երևան  
չը հանէիր, դարձեալ գու՝ մեղանից անարգուած և  
վանտուած կրինէիր պալատից: Ես, արդեօք որտեղից  
կարող էի իմանալ, որ այս իմ անամօթ և սկերես  
նազիր-վեզիր փեսաներս՝ ծածկամտաբար ուղեցել  
են քեզ մինչև մահիդ ստորութեան մէջ պահել:  
Կրկնում եմ, որ ես Միքան թագաւորս՝ տալիս  
եմ քեզ իմ ամբողջ տէրութեան լիազօր իրա-  
ւունքը՝ թագաւորի տիտղոսը կրելու և իմ մա-  
հից յետոյ՝ որը շատ էլ հեռու չէ, որովհետեւ  
ես արդէն խօրին ծերութեան եմ հասած, դու  
կը լինես իմ փոխանօրդը: Ահա իմ այս խօս-  
քերիս հաստատման համար՝ տալիս եմ քեզ իմ  
մատանիս, որպէս նշան իմ անկեղծ խօսքերիս ծըշ-  
մարտութեան հաստատմանը:

Շահզադէն ծերունի Միքան թագաւորից այս-  
պիսի խօսքերը լսելուց յետոյ, թանկագին զմբուխ-  
տէ մեծ մեծ ակներով զարդարուած և արեգակի

պէս փալող արքայակալել ոսկէ մատանին առնելով Միրան թագաւորից, անցկացրեց իւր մատը և Միրան թագաւորի աջ ձեռքը համբուրելով, ու մի քանի անգամ խոնարհ գլուխ տալով, ասաց.

— Մեծարքայ տէր թագաւոր, ես Ձեզանից շատ և շատ շնորհակալ եմ, որ առաջին՝ ինձ անկեղծօրէն հաւատացիք և երկրորդ՝ որ շատ մեծամեծ և բարձր կոչման աստիճանների ու պատիւաների արժանացրիք: Լաւ իմացած եղէք, Մեծարքայ տէր թագաւոր, որ Ձեր այսքան ինձ շնորհուած արքայական պատիւները ոչ թէ ինձ հողեղէն արարածիս է վերաբերում, այլ Ամենաբարձրեալ Աստուծուն, որովհետեւ, այն բոլորը՝ ինչ որ ես արել եմ՝ Աստուծոյ նախաշնչուած ամենակարող շնորհովն եմ արել: Եթէ Աստուծոյ այդ հովանաւորութիւնը չլինէր և Նրա ամենազօր ոյժը և զօրութիւնը չունենալի իմ մէջ, ոչ թէ ես, կամ Ձեր այդ ստոր և խարեբայ փեսաներդ՝ որոնք չը խնայեցին մինչև իսկ Ձեր գեռահաս Փէրիխանում աղջկան ևս և անարգաբար գուրս արին պալատից ինձ հետ միասին, նորից կրկնում եմ, ոչ թէ կարող էինք ճարել այդ Ձեր և թագուհու անբութելի հիւանդութիւններից քժշկող՝ կախարդ պառաւ կնոջ սովորեցրած հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթը, այլ և երբէք չէր կարող ոչ մի հնարքով մի որևէ նոյն իսկ ուժեղ և հնարագէտ իմաստուն մարդ՝ այն հրեղէն ալծեղջիւրի տեղը գտնէր՝ եթէ Աստուծոյ Ամենակարող նախախնամութեան աղը հովանի չլինէր նրան, որովհետեւ հրեղէն ալ-

ծեղջիւրի անմահական կաթի ճարելը միմիայնեւթ, ինչպէս և ես ինքս անձամբ ականատեսեղալ, զիմակուած է Երկնալիներին և կամ իրենց շնորհից ու Ամենակարող ոյժից Աստուծալիին Հոգի ներշնչուած հողեղէն արարածներին, իսկ ես էլ, որ կարողացալ ալդպիսի մի մեծ և քաջ հերոսական լաղթանակի ասպարէղ բանալ ինձ համար, ունեցայ իմ մէջ Աստուծոյ ալդ Ոյժի ներշնչումը և ալդ Աստուծոյ Ոյժի նախախնամութեամբ և Նրա ամենակարող հովանաւորութեամբ արեցի բոլոր գիւղարին ու հողեղէն արարածների ոյժից վեր՝ անկարելի բաները: Հաւատացնում եմ Ձեզ, որ եթէ նա չը հանդիսանար ինձ պաշտպան, ես երբէք չէի կարող հրեղէն ալծեղջիւրի անմահական կաթը ճարել և Թուքյաւիտենական անխալտացած պէտք է լինէիք աշխարհի երեսից: Ուրեմն, փառք և սլատիւ Ամենաւարձեալին, որ իմ կեանքիս մէջ, ինչ որ մեծ և ոյժից վեր գործեր եմ արել, բոլորը միան եղել է և կատարուել է միմիայն Աստուծոյ նախախնամութեամբ ու Նրա հովանաւորութեամբ և ոչ իմ: Նա է օգնել և օգնական հանդիսացել իմ ամենալի բռնած գոլ ծերում ու միշտ լաղթող է հանդիսացը և այն բոլոր գործերի մէջ, ինչ զործի որ ես կարեւորութիւն եմ ունեցել, և շարունակ լաղթանակը իմս է եղել: Ես բոլոր անկարելի բաները Նրա շնորհիւ փշել, ջարդել, խորտակել եմ և վերջի վերջոյ զանազան ազատարար ճանապարհներով՝ լաղթող է հանդիսացը և ինձ՝ հասարակ արարածիս: Հիմայ Ձեզ, Մեծարքայ տէր

թագաւոր, արժանավայել թագուհի և սիրելի իմ պալատականներ, այս բոլորից յետով՝ յայտնում եմ որ ես, Զեր բոլորիդ խոնարհ ծառան, Զէն թագաւորի ամենափոքր որդին եմ։ Ես իմ պատանեկան հասակում շնտ և շնտ չարիքների ու տանջանքների եմ հանդիպել՝ մինչև իմ այստեղ՝ Զեր թագաւորութեան մէջ գալս և Զեր բագերի ու հաւերի վերակացուի պաշտօն ստանձնելս և միշտ ու ամեն ըստի՝ յաղթող եմ յանդիսացել Աստուծոյ Ամենակարող շնորհիւն ու իմ համբերատարութեամբ։ Փառք ու պատիւ Ամենաբարձրեալ Արարիչ Աստուծուն, որովհետև ամեն ժամանակ միայն նա էր ինձ յաղթող հանդիսացնում ու այժմս էլ որպէս թագաժառանգիս, Զեր ինձ շնորհուած արքայավայել մեծութիւնների համաձայն՝ ապագալ թագաւոր և միահեծան տէր ու հրամանատար դարձրեց։

Մեր բոլորիս յայտնի մեծ քաջութիւնների և յաղթանակների հերոս՝ անվեհեր Շահզադէն այս խօսքերը վերջացնելուց յետոյ, սկսեց իւր գլուխ անցածները՝ սկզբից մինչև վերջը՝ մանրամասնօրէն միտումի պատմել բոլորին։

Երբ ծերունի Միրան թագաւորը, թագուհին և բոլոր պալատականները Շահզադէից իմացան նրա թագաւորի որդի լինելը և նրա գլխի վրայ անցածները մանրամասնօրէն, շնտ ուրախացան, և սկսեցին ամենքը փառք տալ Ամենակարող Աստուծուն, որ այդպիսի արժանաւոր թագաժառանգին չէ ոչնչացրել ու ամեն քայլափոխում

յաղթող հանդիսացնելով, վերջը արժանացրեց թագ ուղի կոչմանը։

Տիրոց ամբողջ պայտի մէջ ընդհանուր ուրախութիւն։ Միրան թագաւորի հրամանով գահալիճում բացուած խնջուքի սեղանը՝ նորից վերանորոգուեցաւ։ Սկսուեցաւ նորից էլի երաժշտական նուագածութեան ու շեփորների ցնծագին ձայներ և նորից բոլորեքեանք հաւաքուելով սեղանի շուրջը՝ ամեն մէկը իրեն արժանաւորութեան համեմատ նստեց իւր տեղը։ Միրան թագաւորը իւր առաջուայ նազիր-վեզիր փեսաների տեղը Շահզադէին նստացրեց, իսկ նրանց իրենց ամուսիններով, հրամայեց որ տանեն ու բանտարկեն, բայց Շահզադէն իսկոյն ոտքի կանգնելով՝ Միրան թագաւորին խնդրեց, որ ների նրանց և բանտ չուզարկէ։

— Մեծարքալ տէր թագաւոր, ասաց Շահզադէն, թէեւ դրանք ապերախտ գտնուեցին դէպի ինձ և դէպի իմ ամուսինս, այնուամենալինիւ, ես իմ կողմից նրանց ներում եմ ու խոնարհաբար խնդրում եմ, որ Դուք էլ ներէք։ Այսքան էլ բաւական է դրանց, որ իրենց եսսկան փառասիրութիւնների համար՝ ամեն իրաւունքներից զրկուցան և ստորացան Զեր և բոլոր պալատականների առաջ։

Երբ Միրան թագաւորը և խնջուքի սեղանին մասնակցող բարձրաստիճան հիւրերը Շահզադէից այսպիսի բարեսրտութիւնն ու ներողամտութիւնը տեսան դէպի իւր ապերախտները՝

շատ զարմացան։ Նրանք՝ ամենքն այնպէս էին հաւատացած, որ Շահզադէն անպատճառ Միրան թագաւորի նազիր-վեզիր փեսաներին կը սպանել տար, բայց ընդհակառակ, ոչ թէ սպանել տուեց, այլ և բոլորովին ներեց նրանց, և այժմ էլ միջնորդ հանդիսացաւ Միրան թագաւորի առաջ նրանց գործած յանցանքների ու վատութիւնների համար։

Միրան թագաւորն էլ իւր նազիր-վեզիր փեսաներին Շահզադէի խնդրուած քի համաձայն ներեց և նրանք սեղանակիցներից մի փոքր հեռու՝ իրենց ամուսիններով՝ նստեցին լուռ ու մունջ՝ գլխները քարշ պցած և ձեռքերը կրծքներին ծալած՝ որպէս մեղաւորներ։

Սկսուեցաւ նորից կերուխումի ուրախալից հանդէսը։ Շահզադէի կենաց բարեմաղթութիւնների գինու լի բաժակները իրար յետերից դատարկւում էին և ուռաների ու երաժշտական քաղցրահնչիւն նուագածութեան ձայներ էին լսուում շարունակածար, որով և ամենքը ուրախ ու գուարթքէ գի արամադշութեան տակ էին ընկզմուել։ Այդ միջոցին Շահզադէն շտապով տեղից վերկացաւ և սեղանաւորներից էլ մի քանիսներին խնդրելով իւր հետ գուրս տարաւ գահինից պատշգամբը և յայտնեց նրանց որ մի փոքր սպասեն պատշգամբում, որովհետեւ ինքը կամենում է երեալ նրանց զանազան դեր կերպարանքներով և թող տեսնեն։ Շահզադէն նրանց թողնելով այնտեղ, շտապով ինքը ցած վազեց պատաժ սանդուխտներից ներքեւ և ծոցից հանելով իւր դե հօր տուած հրե-

գէն նժոյգների մազերի կապոցը, սկսեց մէկ մէկ կարգով՝ նախընթաց կերպարանափոխութիւնների սովորթեան համաձայն՝ դեալին կերպարանքների փոխուել։

Երբ պատշգամբում հաւաքուած հետաքըրքը բարձրաստիճան հիւրերը Շահզադէին տեսան թէ միադլխանի, թէ երեք-գլխանի և թէ մանաւանդ եօթ-գլխանի զազրական տեսքի դեփ կերպարանքների մէջ՝ զանազան գոյնի հրեղէն նըժոյգներով, շատ զարմացան և բոլորն էլ միաբերան փառք տուին Աստուծուն։

Շահզադէն իւր դեալին կերպարանքների փոխուելը ցոյց տալուց յետով, կրկին իրեն իսկական կերպարանքի փոխուելով՝ բարձրացաւ սանդուխտներով նորից պալտո, մտաւ գահինձը և սեղանաւորների հետ գրկախառնուելով, տաց։

— Ահա, տեսաք, սիրելի սեղանաւորներ, այս բոլորը՝ որոնց վրայ դուք ամենքը զարմացաք, ես էլ էի մի ժամանակ զարմացած և կարծում էի թէ՝ ես հոգեղէն արարած՝ ամեն արգելքներին չէի կարող յազթել, բայց ընդհակառակը, ամենահեշտութեամբ կարողացայ միշտ բոլոր արգելքներին ու խոշնդուներին յազմել ու գետին տապայել Աստուծոյ ամենակարող զօրութեամբ, ինչպէս և դուք ամենքդ իմացաք իմ գլխին պատահածներս ձեզ պատմելուց յետով։

Երբ Միրսն թագաւորը, թագուհին և պալտականները Շահզադէի ով լինելը լաւ իմացան և նրանից ալնպիսի ահարկու դեալին կերպարանք-

ների փոխուելը և յետոյ էլի նորից իւր իոկական սիրուն ոսկէգանգուռ մազերով տեսան, շատ ու- րախացան և շատ էլ սիրել ն։ Պաշտոն դահլիճի մէջ մտնողները՝ սկսեցին ամեն մէկը կարգով նո- րից շքեղ խնջուքի սեղանի շուրջը նստել ու սկսե- ցին կրկին նորից զահզադէի կենաց շնորհաւորա- կան գինիով լի բաժակները դատարկել ուռայով։ Յետոյ խնջուքի սեղանի շուրջը նստող բոլոր բարձ- րաստիճան պալատականները՝ մէկը միւսի յետեկց կարգով սկսեց համբուրել ապագայ թագաւոր զահ- զադէի ճակատից ու ոսկէգանգուռ մազերից և ա- սացին այս շնորհաւորական խօսքերը։

— Շնորհաւորում ենք քեզ, ո՞վ դու անվեհեր թագաւորաց թագաւոր, զահզադէ։ դու, որպէս թագաժառանգ, իրօք, որ արժանի ես եղել թագա- ւորի կոչմանը և Աստուծոյ տնօրինութեամբ էլ այժմ, մեզ ամենիս թագաւոր և տէր ու տիրական եղար։ Ինչպէս սրտով ազնիւ և բարի ես եղել, այնպէս էլ մինչև քո կեանքիդ վախճանը՝ Աս- տուծած թող բարի պահպանէ քեզ և մեզ բոլորիս վերայ պաշտպան ու հովանի հանդիսացնի ամեն դեմքան մեր հպատակ ժողովրդեան վրայ։ Ամեն և ամբողջ մեր հպատակ ժողովրդեան վրայ։ Ամեն դժուարին վտանգների ժամանակ, թող քո սուրբ սարսափ բերէ հակառակորդներիդ և երբէք թշշ- նամու սրտի չը դարձնէ քեզ Տէր Աստուծը։ Սրտանց և բուռն համակարանքով ցանկանում ենք ապագայ գործունէութեանդ լաջողութիւն։

Մեր քաջ հերոս և տպագայ թագաւոր Շահզա- դէն՝ բոլոր սեղանակիցների դէպի իրեն արած շնոր- հաւորութիւններին՝ բուռն համակրական զգաց- մունքներով լցուած՝ սիրալիր ողջունում էր ամեն- քին և շնորհակալութիւն յայտնում։ Այդ ժամա- նակ Միրան թագաւորի պալատի մէջ ընդհա- նուր ուրախութիւն և ցնծութիւն տիրեց։ Ամեն- քը՝ թէ բարձրաստիճան պալատականները և թէ դրսում՝ պալատի միւս մնացեալ ծառալողները՝ մին- չև իսկ Միրան թագաւորի պալատի ամենալետին ծառան, զահզադէի այդ տեսան յաղթական քաջու- թիւնների համար սկսել էին ուրախութիւններ ա- նել և ամենքին ձգել էին բուռն ցնծութեան մէջ։ Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, ծերու- նի Միրան թագաւորը վեր կենալով խնջուքի սե- ղանից, պատուիրեց բարձրաստիճան պաշտօնեա- ներին՝ որ իրենց հետ էլ վերցնելով աւագ նա- ժիշտներից արժանաւորներին՝ շուտով գնան իւր սիրելի աղջիկ՝ ապագայ թագուհի Փէրիխանու- մի կացարանը և հագցնելով արքայական բեհե- զեայ մարգարտահիւս հալաւներ ու թագաւորա- կան ծիրանի, գլխին էլ թագ դնեն և մեծ հան- դէսով ու բարձրագույն ուռանների աղաղակներով, շուտով բերեն պալատ։

Միրան թագաւորի պատուէրը հրամայուածի պէս կատարուեց։ Նրանք երբ մօտեցան Փէրիխա- նումի կացարանին, դուռը բաց արին և տեսան որ Փէրիխանումը՝ փակուած սենեակի մէջ՝ տիրուր և արտասուախառն աչքերով նստած էր կարկտնած

գորդերով ու կապերտներով ծածկուած տախտի  
վրայ: Փէրիխանումը տեսներով նրանց՝ իրենց հետ  
բերած արքայական հալաւներով, թագով և ծիրա-  
նիով, շատ զարմացաւ, որովհետեւ նա բոլորովին  
տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր կատարուել պա-  
լատում: Այդ ժամանակ պալատի պաշտօնեաննե-  
րը՝ խորին պատկառանքով ու լարգանքով մի քա-  
նի անգամ խոնարհ գլուխ տալով՝ կըկին յետ գուրս  
եկան, իսկ աւագ նաժիշտները մօտենալով ահ ու  
դողով Փէրիխանումին, երեք անգամ խոնարհա-  
դութիւն գլուխ տուին և լայտնեցին ծերունի Մի-  
բար գլուխ տուին և լայտնեցին ծերունի Մի-  
բար թագաւորի հարաւերը: Խոկոյն Փէրիխանումը  
առանց մի փոքր ուշանալու, վերցրեց պատգարա-  
կի վրայից բեհեղեալ մետաքսէ մարգարտահիւս  
հալաւները, աւագ նաժիշտների օգնութեամբ՝ շտա-  
պով հագաւ, ծածկուեց ամբողջովին ծիրանիով,  
իսկ գլուխն էլ դնելով իրեն մօր՝ թագուհու ոսկէ  
ականակուռ բրիխանթներով զարդարուած թագը,  
նստեց նոյն պատգարակի վրայ և մեծ հանդէսով՝  
ուռաների և երաժշտական նուագութեամբ, մտաւ  
շքեղ զարդարուած պալատ: Պալատի դահլիճում  
եղող բոլոր հերերը Փէրիխանումի առաջն ելան և  
մեծ ցնծագին ողոյններով՝ տարան պալատի դահ-  
լիճը ու բազմացրին Միբան թագաւորի ու թա-  
գուհու մէջ տեղը՝ իւր սիրելի ամուսնու Շահզա-  
դէի կողքին: Երբ Փէրիխանումը իրեն տեսաւ իւր  
ծնողների մօտ նստած, փառք տուեց Աստուծուն  
և իսկոյն վաթաթուելով թէ իրեն հօր Միբան  
թագաւորի և թէ մօր թագուհու վզովը, սկսեց եր-

կար ժամանակ շարունակ թէ մէկին և թէ միւ-  
սին համբուրել: Ծնողները նոյնպէս Փէրիխանու-  
մին ամուր գրկեցին ու սկսան երկար ժամանակ  
արտասուախառն աչքերով համբուրել՝ իրենցից  
վաղուց ի վեր հեռացած և իրենցից կարօտած սըր-  
տի սիրեկան աղջկան և չէին ուզում բոլորովին  
հանգիստ թողնել:

Նատ երկար գգուանքներից ու համբուրներից  
յետով, Միբան թագաւորը արտասուալից աչքե-  
րով դարձաւ իւր սիրելի Փէրիխանում աղջկան և  
ասաց.

— Ներիր ինձ և դու, ով իմ սիրելի գաւակա.  
այս բոլորն Աստուծոյ տնօրէնութեամբն եղաւ:  
Նորից կրկնում եմ, ներիր ինձ, սիրելի իմ աղաւ-  
նեակս, որ ես, ծերուկս, քո մեղաւոր և ապերախտ  
հալրդ, չը կարողացալ հեռատես գտնուել և առա-  
ջուց նախագուշակել ու իմանալ, որ աշխարհի վե-  
րայ ամենալին բան սուտ է, թէ հարստութիւն,  
թէ իսեղճութիւն և թէ ամենալին ինչ, և միտին  
ծշմարիտն Աստուծոն է և թէ ամենալին անկա-  
րելին նրա կամքովն է կատարուած: Դուք, սիրե-  
լիներս, թէ Շահզադէն և թէ դու, աղաւնեակս,  
երկուսն էլ արժանի էք եղել Աստուծոյ տնօրէ-  
նութեամբ թագաւորի կոչմանը, թէն ես ձեզ  
երկուսիդ էլ խալտառակ կերպով, բոլոր պալատա-  
կանների առաջ, ծաղրելի արարկայ դարձնելով,  
դուրս էի վանդել ձեզ պալատից, և թշնամու սրտի  
դարձրել: Այժմ, այս բոլոր իմ սխալ արած արար-  
մունքներիս համար, խնդրում, աղաչում եմ,

սիրելի զաւակներս, ներէք ինձ, որ մահուանիցտ  
յետոյ՝ դատապարտուած և անարգուած չը լի-  
նեմ Աստուծոյ՝ դատաստանի առաջ։ Փառք և  
պատիւ Ամենաբարձրեալին, որ ձեզ երկուսիդ էր,  
որպէս արժանաւոր թագաժառանգներ, չը կորց-  
րեց և յաւիտեան բաղդաւորեց։ Թող Նրա Ամենա-  
զօր աջը պահապան լինի ձեզ վրայ և ձեր հպա-  
տակ ժողովրդեան վրայ։  
Ծերունի Միրան թագաւորը, այսպիսի սիրտ  
կտրատող և սրտառուչ ներողական խօսքեր ասե-  
լուց յետոյ, նորից փաթաթուեց թէ ինքը և թէ  
մալը թագուհին իրենց սիրելի աղջիկ Փէրիխանու-  
մին և կրկին սկսեցին շարունակաբար համբուրել  
և կրծքներին ամուը սեղմած՝ շատ երկար ժամա-  
նակ աղիողորմ ձայնով հեկեկում էին։

Միրան թագաւորի փափկասիրտ Փէրիխանում  
աղջիկն էլ այլ ևս չկարողանալով դիմանալ ծնողների  
ալղքան հեկեկանքներին, ինքն ևս սկսեց փոք-  
րիկ երեխալի պէս լալ ու հեծկլտալ և արտասուա-  
լից աչքերով ասաց։

— Ով իմ սիրելի ծնողներ, մի լաք, դուք մե-  
ղաւոր չէք, այլ իմ ճակտապիրն է մեղաւոր,  
մի լաք։ Մեր ալսքան երկար ու ձեզ տարիների  
իրարից բաժանուելն ու բացակալ լինելիութիւնն  
էլ պէտք է Աստուծոյ տնօրէնութեանը վերագրել։  
Ոչ ոք մեղաւոր չենք։ Այս բոլորը Աստուծոյ կամ-  
ու է կատարուել։ դուք մեղաւոր չէք, մի լաք  
քովն է կատարուել։ դուք մեղաւոր չէք, մի լաք  
իմ սիրելի ծնողներ։ Եթէ Աստուծոյ նախախնա-  
մութեան հովանաւորող աջը այս մեր դործերի մէջ

խառը չլինէր, միթէ զուք կանէիք ալն, ինչ որ  
արիք, Դուք որտեղից գիտէիք, որ մենք՝ թէ ես  
և թէ իմ սիրելի ամուսին Շահզարէս, Աստուծոյ  
կարգադրութեամբ, որպէս թագաւորի զաւակներ,  
թագաւորի և թագաւորի տիտղոսներին պէտք է ար-  
ժանանայինք։ Եթէ դուք իսկապէս զիտենալիք, որ  
ես, մեր բարեացակամ յօժարութեամբ ձեր փոխա-  
նորդ և տեղապահ թագաւոր ու թագուհի նշա-  
նակէիք մեզ, միթէ դուք ալդ ժամանակ՝ տնքան  
անգութ և քարասիրտ կը գտնուէիք, որ մեզ, այս.  
ալէս անվայել ու անպատկառելի կերպով դուքա-  
վոնդէիք պայտախց և ծաղրի ու ծանակի առար-  
կայ շինէիք այնքան բազմաթիւ օտար թագաժան-  
ուանգների ու բարձրակոչ փեսացուների ասաց, չեմ  
կարծում։ Ուրեմն, դուք, սիրելի ծնողներս, երբէք  
մեղաւոր չէք և բոլորովին ալդքան էլ մի լաց  
լինիք և ինձ էլ իզուը մի լացացնէք։

Փէրիխանումը իւր ալսպիսի խօսքերը վերջաց-  
նելով՝ իսկոյն դուրս պըճաւ ծնողների՝ իրեն ա-  
մուը գրկած ձեռներից ու քաղցրածիծաղ ձայնով գառ-  
նալով թէ իրաներին և թէ բոլոր սեղանաւորնե-  
րին, ասաց։

— Դուք, սիրելի ծնողներս ու քոլորես և դուքը  
արժանապատիւ ու յարգոյ պալատական սեղանակից-  
ներ, բաւական է ալսքան տիրութիւնը և լացն ու  
կոծը, ալժմ պէտք է ուրախանալ։ Այստեղ ոչ ոք  
մեղաւորութիւն չունի։ Ամենայն բանը Աստուծոյ

նախախնամութեան տնօրէնութեամբ կատարուեցէ  
էլ, երաժիշտներ, նուազեցէք քաղցր դավալիկէ  
երգեր և ուրախացրէք բոլորին:

Քիչ ժամանակից յետոյ՝ սգոյ սրտաշարժ տեսա-  
րանը կրկին փոխուեց ուրախութեան հանդիսի:  
Նորից սկսեցին նուազածուները առաջուանից աւե-  
լի եռանդուն ու աշխոյժ ածել իրենց նուազները,  
իսկ սեղանաւորներն էլ սկսեցին բարձրաձայն եր-  
գեցողութիւն ու այսպէս Միքան թագաւորի-  
պալատի դահլիճում նորից վերասկսուեց ուրախու-  
թեան քէֆն ու զուարճութիւնը: Բոլորեքեանք  
կեցցէների խուռն աղաղակներով և սիրալիք բարե-  
մաղթական խօսքերով, նորագոյն Շահզադէ թագա-  
ւորի և Փէրիխանում թագուհու երկարակեցու-  
թեան գինիով լի բաժակներն էին դատարկում:

Մինչ սրանք այս տեսակ ուրախութեան մէջն  
էին, ծերունի Միքան թագաւորը նստած տեղից  
դանը ու բարակ վեր կենալով՝ մօտեցաւ Շահզա-  
ծանը ու բարակ վեր կենալով՝ նրան էլ վերկացրեց ու  
գէին և ձեռքից բռնելով՝ նրան էլ վերկացրեց ու  
իրեն հետ տանելով, գուրս տարաւ դահլիճից միւս  
կից սենեակները: Այնտեղ նա հազցնել տուաւ  
իւր արքայականել զգեստները, վերցրեց իւր  
վրայից բէհեղեալ մարդարտահիւս ծաղկանկար  
ծիրանին և ծածկեց Շահզադէի վրայ և իւր  
գլուխի թագն էլ նրա գլուխն ծածկելով, այս-  
պէս, արքայականել շքեղ հանդէսով, բերեց նորից  
դահլիճն, ու ալժմ իւր թագաւորական տախտի վը-  
րալ նստեցրեց: Շահզադէի կողքին նստացրեց և  
իւր Փէրիխանում տղջկան ու երկու թագաւորա-

զունների ձեռքերը իրար բռնել տալով, համբու-  
րեց նրանց երկուսի ճակատներից ու օրհնեց այս-  
պէս ասելով.

— Ահա, սիրելիքս, ես ձեզ երկուսիդ էլ ալժմ  
նորից իմ ձեռքով նշանում եմ որպէս իմ փոխա-  
նորդ՝ ապագալ թագաւոր և թագուհի: սրտն թող  
նշան լինի, ահա, այս իմ թանկագին ձեզ վրալ ե-  
ղած թագաւորական զգեստներն ու թագը: Իմ մե-  
ղաւոր բերանովս խնդրում եմ Ամենակարող Աս-  
տուծուց, որ գուք երկուսդ էլ բաղդաւով և եր-  
ջանիկ ապլիք: Աստուծոյ օրհնանքը լինի ձեզ վը-  
րալ. ծլիք, ծաղկիք և մի բարձի ծիրանաք: Աստու-  
ծոյ Ամենակարող աջը ձեզ երկուսի վրայիցդ ան-  
պակաս լինի ամեն ժամանակ: Կեանքներիդ ըն-  
թացքում գուք զօրաւոր լինիք և Աստուծոյ հրա-  
մանով ու ցանկութեամբ՝ որպէս նրա Ամենակա-  
րող աջու նախախնամութեամբ պահպանուած ար-  
ժանաւոր թագաւորազուններ՝ պտուղներ տաք, որ-  
պէս զի ձեր մահից յետոյ՝ ձեզ ժառանգ և լիշտ-  
տակ լինեն: Ինչպէս գուք, սրտով և հոգով ազ-  
նիւ ու բարի և Ամենակարող Աստուծու կամքին  
հնաղանդ ու հաճելի եղաք, խնդրում եմ Աստու-  
ծուց, որ ձեզ երկուսիդ էլ մինչեւ ձեր կեանքի  
վախճանը, ալդպէս անփոփոխ, հնաղանդ ու խո-  
նարհ պահպանէ: Լինիք առողջ, քաջ ու պաշտպան  
հայրենիքի և ձեր ժողովրդեան: Այսուհետեւ ձեր  
օրերը շարունակ ուրախութեամբ անցնեն և թող  
Աստուծած թշնամու սրտի չանէ: Դուք իմ սիրելի զա-  
ւակներս, և ապագալ թագաւոր ու թագուհի, այս

էլ պէտք է ասեմ, որ մինչեւ ձեր մահը՝ ձեր մեծ  
ծերի լիշտակը չը կորցնէք։ Ես, ինչպէս դուք  
ինքներդ լաւ տեսնում էք, արդէն ծերացել եմ, և  
հաւանական է, որ մահս էլ մօտեցած լինի, ուս-  
տի, սիրով և խորին ողջոյնով խնդրում եմ, որ իմ  
մահից յետով՝ մեր պատիւն ու արժանիքը չը  
մռանաք, և դուք գիտէք, թէ ինչպէս կը  
պատուէք մեզ և արժանավայել լիշտակները կը  
դառնաք ապահայում, այդ բոլորի գործնական ա-  
զատ կամքը թողնում եմ ձեր խղճին։

Ծերունի Միրան թագաւորը այսպիսի օրհ-  
նանքներ և խրատներ տալուց լետոյ, մի քանի ան-  
գամ նորից թէ Շահզադէի և թէ Փէրիխանումի  
ճակատներից համբուրելով, գնաց նսաեց իւր տեղը։

Միրան թագաւորից լետոյ՝ նրանց մօտեցաւ  
շնորհաւորելու Փէրիխանումի ծերունի մայր թա-  
գուհին։ Նա ևս մի քանի անդամ համբուրեց նրանց  
ճակատներից և օրհնելով՝ մի քանի մայրական  
խրատներ տուեց։

Թագուհուց լետոյ՝ մօտեցան նրանց Փէրիխա-  
նումի քոյրերը և ապերախտ ու սկերես նազեր-  
ովեզիր փեսաներն և որպէս մեղապարտներ՝ ձեռ-  
քերը կը ծքներին ծալած՝ երեք անգամ խոնարհ  
գլուխ տուին ու ներողութիւն, խնդրեցին իրենց  
վատ արարմուսքների համար և կրկին գլխակոր  
վերադարձան իրենց տեղերը։

Դրանցից լետոյ՝ խնջութիւն սեղանի շուրջ նըս-  
տողները՝ բարձրաստիճան պալատականներից սկը-  
սած մինչեւ վերջին պաշտօնեան՝ կարգով մօտեցան

թէ ապագայ Շահզադէ թագաւորին և թէ Փէրի-  
խանում թագուհուն ու սկսեցին մէկ-մէկ խոնարհ  
գլուխ տալով՝ շնորհաւորել նըստ ապագայ թա-  
գաւոր և թագուհի լինելը ու ձեռքներից համբու-  
րելով՝ նորից կարգով հեռացան և իրենց ա-  
ռաջուայ տեղերը նստեցին։

Այդ հանդիսաւոր շնորհաւորութիւններից լե-  
տոյ՝ դահլիճը նորից թնդաց ուսաների բարձրա-  
գոչազակներով, և լոււեցաւ երաժշտական նուա-  
գածութիւնների մեղմեկ երգեցողութիւնը։ Տի-  
րեց բոլոր սեղանակիցների մէջ ընդհանուր  
ուրախութիւնն ու ցնծութիւնը ու այսպէս  
շարունակուեց երեք օր ու գիշեր։

Մեր քաջ հերոս Շահզադէի և Փէրիխանումի  
թագաւորական գահը նստելուց մի քանի ամիս ան-  
ցած, ահա, մէկ օր էլ, ծերունի Միրան թագաւ-  
որը հրամայեց՝ որ Շահզադէ թագաւորի և իւր  
աղջիկ Փէրիխանում թագուհու պալադը ութիւններ  
և հարսանիքի համար՝ մեծ պատրաստութիւններ  
տեսնուին։ Խակոյն հրաւիրել տուեց իւր տէրու-  
թեան ամեն կողմերից բազմաթիւ բարձրաստիճան  
հիւրեր՝ ինչպէս օրինակ, զօրքերի հրամանատար-  
ներից — հազարապետներին, հարիւրապետներին,  
սպաներին, նահանգապետներին, գաւառապետնե-  
րին, քաղաքապետներին և ուրիշ բարձր կոչման  
անձնաւորութիւններին։ Բոլոր հրաւիրաւածները  
Միրան թագաւորի հրամայուածին պէս՝ մէկ օրում  
եկան, հաւաքուեցան մայրաքաղաքում։ Անքան  
աշատ հանդիսաւես բազմութիւն հաւաքուեցաւ Մի-  
շատ հանդիսաւես բազմութիւն հաւաքուեցաւ

րան թագաւորի մալրաքաղաքում, որ ասեղ ձգելու տեղ չկարէ Սկսուեց թէ մալրաքաղաքում և թէ ուրիշ հեռաւորքաղաքներում՝ Միրան թագաւորի պատուէրով՝ երաժշտական նուագածութիւններ և հրավառութիւններ։ Դրանց հետ սկսուեց նոյնպէս և ժողովրդի ուրախութեան ու ցնծութեան աղաղակներն ու այսպիսով Շահզադէի և Փէրիխանումի պսակադրութեան առթիւ, ամենուրեք տարածուեց պսակադրութեան ընդհանուր տօնախմբութիւնը։

Միրան թագաւորի պալատի բոլոր սենեակներն ու դահլիճը՝ ալդ օրը լուսաւորուած էր շատ շքեղ կերպով, իսկ մէջ տեղերը բացուած էր ինչորքի սեղաններ, համեղ խորտիկներով լցուած՝ արժանապատիւ հիւրերի համար։ Դահլիճի մէջ տեղում շինուած էր մի բարձր՝ գեղեցիկ ծաղիկներով ու թարմ դափնիներով զարդարուած ամբիոն, որի վրա լ բազմած էին մեր ապագալ Շահզադէ թագաւորն ու Փէրիխանում թագուհին։ Ալդտեղ՝ բարձրակոչ հիւրերի ներկայութեամբ կատարուեց Շահզադէի և Փէրիխանումի պսակադրութեան փառահեղ հանդէսը։ Դրանից յետոյ սկսուեցաւ շնորհաւորութիւնների Տարածուեց երկար ու անընդհատելի ուռանների աղաղակներն ու երաժշտական նուագութիւնների քաղցրահնչւն ձայները։ Ամենքը լցուեցան բուռն ոգևորութեամբ և յետոյ պալատի դահլիճից մի քանիսները ուրախ տրամադրութեամբ հեռանալով պալատի միւս սենեակները, բոլորն էլ կարգով իրենց արժանավայել տեղերում

նստեցին ու սկսան կերուխումով զբաղուելի ծերունի Միրան թագաւորն ու թագուհին նորապսակներին փաթաթուելով՝ սկսեցին նորից օրհնել ու մի քանի անգամ համբուրելով նորօծեալ թէ Շահզադէի և թէ Փէրիխանումի ճակատներից, ցած իշեցրին ամբիոնից և տարան բազմացրին իրենց ձեռքով թագաւորական գահի վրայ։

Միրան թագաւորը ալդ օրն ի պատիւ Շահզադէ թագաւորի և Փէրիխանում թագուհու պսակադրութեան, մեծ նուիրատութիւններ արաւ խեղճ ժողովրդեան։ Արքունական գանձարանից մեծ քանակութեամբ փողեր բաժանեց չքաւորներին, հագնելու հալաւներ բաշխեց չունեսորներին, ապաստարաններ ու անկելանոցներ հիմնել տուեց անդամալոյների համար և վերջը շինել տուեց մի հոյակալ տաճար։ Այս տեսակ բարերարութիւնների համար Միրան թագաւորի ամբողջ հպատակ ժողովուրդը՝ մեծից մինչև փոքրը, ամենքն էլ, մեծ ուրախութիւնով էին լցուել և գոհունակ սրտով խնդրում էին Արարչից՝ նորապսակ Շահզադէ թագաւորի ու Փէրիխանում թագուհու երկայնակեցութեան երջանիկ ու բաղդաւոր օրերը։

Նորօծեալ Շահզադէ թագաւորի և Փէրիխանում թագուհու պսակադրութեան հանդէսը, Միրան թագաւորի պատուէրով տեսեց քառասուն օր ու զիշեր։ Ալդ բոլոր ժամանակներում, Միրան թագաւորի խաղաղ ժողովուրդը՝ շարունակ գոհաբանական մաղթանքներով օրհնում էր թէ ծե-

ըունի Միրան թագաւորին, թէ թագուհուն  
և թէ սոր-օծեալ Շահզադէ թագաւորին ու Փէ.  
քիսանում թագուհուն: Այս պատճենը առաջարկութան  
Ալսպիսով ծերունի Միրան թագաւորը իւլ  
նորապատկ փեսոյ Շահզադէ թագաւորին և իւր  
աղջիկ Փէրիսանում թագուհուն բազդաւորելուց  
յետոյ, ինքն էլ մի քանի տարի ևս ապրեց և լան  
կարծ, մէկ օր, խորին ծերութեան հասակում, վախ-  
ճանդաւեց: Թեր հողին շէին հանձնել հանդուցեալ  
Միրան թագաւորի մարմինը և զանազան անուշան  
հատ, իւղերով պահում էին պալատում թագման  
համար, որ լանկարծակի վախճանդեց և Միրան  
թագաւորի կողակից՝ ծերունի թագուհին, նոյնպէս  
խորին ծերութեան հասակում: Շահզադէն և Փէ.  
րիսանումը սկսան դրանց վրայ աղիսղործ սգալ  
Դրանց հետ միասին սղում էին ամբողջ պալատա.  
կաններն ու Միրան թագաւորի ամբողջ հպատակ  
ժողովուրդը ծերունի Միրան թագաւորի և թա-  
գուհու մահուան լուրը տարածուեց ամբողջ տէ-  
րութեան հեռաւոր քաղաքներում ևս, և բոլոր  
սկսան խորին սգոյ մէջ ընկնել: Շահզադէ թագա-  
ւորը իսկոյն հրամայեց, որ ամենայն տեղ՝ սև դրօ-  
շակներ կախեն ու սգոյ սև շորեր հագնեն: Շահզադէի  
հրամանով կանչուեցան հեռաւոր քաղաքներից  
մեծ բազմութիւն, և ահա մէկ օր, մէծ սգոյ հան-  
գիսաւոր թափորով և մեծ բազմութեան ներկայ-  
ութեամբ՝ գուրս բերուեցաւ պալատից թէ Միրան  
թագաւորի և թէ թագուհու դիմուն կանունը՝ շքեղ  
ճենասալակեալ դագաղների մէջ պառկացրած, և

վրան էլ անուշահոյ ծաղիկներ ցանած: Դագաղ-  
ներին հետեւում էին դիմուն բոլորն էլ ոսկէ,  
արծաթեալ և դափնեալ թարմ ծաղիկներից շնուած  
պակներով զարդարուած: Սգոյ հանդիսաւոր յու-  
ղարկաւորութիւնը պալատից մեկնեց գէպի հանգու-  
ցեալ Միրան թագաւորի ձեռքով նոր կառուցուած  
հոյակապ տաճարը: Այդտեղ, եկեղեցական փառահեղ  
ծիսակատարութիւնը վերջանալուց յետոր, Շահզա-  
դէ թագաւորի պատուէրով, նոյն փառաւոր հան-  
դէսով հանգուցեալների դիմուն թաղեցին նոյն  
տաճարի գտութում՝ դրան մօտ: Դրանց գերեզմա-  
ների վրայ, Շահզադէ թագաւորը, նոյն օրնեւեթ,  
կանգնացնել տուեց կոփածոյ քարերից զքեղ քան-  
դակներով կերտուած զեղեցիկ արձաններ և վրա-  
ներն էլ նկարել տուաւ հանգուեալ թէ Միրան  
թագաւորի և թէ թագուհու պատկերները, իսկ  
տակը գրել տուաւ ոսկեալ մեծ-մեծ տառերով նրանց  
կարճառօտ կենսագրութիւնը:

Սգոյ հանդիսաւոր թազումը վերջանալուց լե-  
տոյ, սգաւորները, բոլորն էլ նորից վերադարձան  
պալատ և նստելով բոլորեցեանք ճոխ կերակուր-  
ներով բացուած սեղանների վրայ, սկսեցին մի-մի  
բաժակ «ողորմաթաս» խմել: Այդ օրուանից Շահ-  
զադէ թագաւորը հրամայեց, որ քառասուն օր ու  
գիշեր, շարունակ, հոգեհանգիստ կատարեն ու  
սուգ պահեն:

Շահզադէ թագաւորը ալդ քառասուն օրուայ  
ընթացքում՝ մեծ փող բաժանեց իւր արքունական  
գանձարանից աղքատներին ու չքաւորներին՝ ծե-  
գանձարանից աղքատներին ու

ըունի Միրան թագաւորի ու թագուհու լիշտակ-  
ման և հոգւոյ փրկութեան համար։ Բացի սրանից  
հրամայեց, որ պայտի սեղանատներում՝ ամբողջ  
մէկ տարի շարունակ, ձրի կերակուր բաժանեն  
ալբիներին և որբերին՝ որպէս «մեռելահաց», և ե-  
րեք-երեք բաժակ գինի խմացնեն՝ որպէս «ողօր-  
մաթաս»։ Ամառավաճառ ու զանազան բաժանումների մէջ առաջանակ է այս մաթասը։

Այսպիսով Զէն թագաւորի փոքրիկ սրգի Շահ-  
զադէն և Միրան թագաւորի փոքրիկ և համեստ  
Փէրիխանում աղջիկը՝ իրենց մաքուր և ազնիւ սըր-  
տերի ու համբերող բնաւորութեան համար՝ եղան  
թագաւոր և թագուհի, և թագաւորեցին շատ եր-  
կար ու ձիգ տարիներ, երջանկացնելով իրենց ժո-  
ղովրդեան։

ՀԱՅԹԵՐՁՈՂ!

Նրանք հասան իրենց մտադիպին,

Դուք էլ հասնէք ձեռնույն գույշից

7/11. 1922

Վ Ե Ր Ջ



ու Մայուսակը ու թագավոր Խաչատրի  
և Գողաց պատրիարք Համբարձում պահանջեց  
առաջնորդ ու պատրիարքական տարած  
տակ շատու զարգանալի եղբ եկեղեց թագավոր  
պահանջեց և պարզու պահանջերաւաց և է  
պարզու թագավոր յանցու պահանջերաւաց և է

Այսպիսի ԱՅՆ թագավոր պահ Եղի-  
շանց և Արքա Յանցու պահ և Համբա-  
րքանու ապահով բան տայուր և ուղարկու  
ու համբարք թագավոր պահ Եղի-  
շանց ու թագավոր Եղի-շանց պահ Եղի-  
շանց ու մայուսակ եկեղեցական կու պա-  
հանջեց և է

Եղի-շանց

Եղի-շանց

Եղի-շանց

7.3

7.3



2013

14822

